Բարձր

ամառվա

ԲԱՓԻՆ Զ. ՏԱՐԻ 1967 ՓԵՏՐՈՒԱՐ Թիւ 2

digitised by A.R.A.R.@

باكين

مجلة شهرية ، ادبية وفنية علمية

مدير المسؤول

السيد اوتين كارنيك قزانجيان

•

PAKINE

REVUE MENSUELLE

LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire

Dr. A. KAZANDJIAN

•

ԲԱԳԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒ ԱՐՈՒՆՍՏԻ

ՎԱՐՉ ԽՄԲԱԳԻՐ

Կ. ՍԱՍՈՒՆԻ

ԽՄԲԱԳԻՐ

Դ. ՍՆԱՊԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՆԴԱՄՆԵՐ

Ֆ. ԳԵՂԱՐԴ

Տ. ՈՍԿՈՒՆԻ

Բ. ՓԱՓԱԶԵԱՆ

Վ. ՑԵՍԿԱՆ

Ժ. ԱՔՔԱՐԵԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐ ԱՆԴԱՄՆԵՐԵՆ

† ԵԴ. ՊՕՏԱՋԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ

G. SASSOUNI

Rue Sélim Boustany, Beyrouth - Liban

Հեռաձայնի թիւ 296898

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

Ա. ԱՐՓԻՆԷ

Ա. ՍԵԻԱՆ

Կ. ՍԱՍՈՒՆԻ

Բ. ԹՕՓԱԼԵԱՆ

Հ. ՑՈՒՍԷՓԵԱՆ

Ա. ՍԵՒՈՒՄԵԱՆ

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Ի. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

Բ. ՓԱՓԱԶԵԱՆ

Ն. ՉԱՐԽՈՒՏԵԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Լ. ՄԿՐՏՉԵԱՆ

. . . . . .

ՆՇՄԱՐՆԵՐ

ԹԱՏՐՈՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

digitised by A.R.A.R.@

Բազմն

ԱՅՍԱՓԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Զ. ՏԱՐԻ, ԹԻՒ 2 — ՓԵՏՐՈՒԱՐ 1967 — ՊԻՔՐՈՒԹ

ԱՊՐԵԼՈՒ, ՏԵՒԵԼՈՒ ԿԱՄՔ

Ա. ԱՐՓԻՆԷ

Բլուրի դալար լանջքին ինկած խոշոր ու ազուր ծառի մը առջեւ զարմանքով կանգ առի այսօր։ Երկա՛ր գիտեցի անկումի ընթացքին հողի թանձր շերտ մը ճանկած կլոր արմատը, հատ ու երկար բունը, ու մանաւանդ, սաղարթներուն թարմ կանանչը...

Քիչ անդին, ժայռին վրայ նստած ալեւոր ծերունին ծխամորճը բերնէն վար առաւ ու ըսաւ.

– Ամիսներ առաջ, փոթորիկներէն տապալեցաւ, բայց երեւի արմատէն բան մը դեռ կառչեր է մայր հողին, որ կեանքի աւիշը իր մէջ է տակաւին ու դայն այդպէս դալար կը պահէ...

Բեգասի թեւերով ճախրելու ընդունակ հոգի մը, խմաստասիրական խոհերով լեցուն տաղ մը պիտի յօրինէր սա պահուն, ըսի մտովի։

– Հնդիկ նշանաւոր գիտնական մը ապացուցած է որ, – շարունակեց ծերունին, ծնօտը ափին մէջ առնելով, – բոյսը՝ իր յօրինուածքով նման է կենդանիին. թէ ունի սիրտ, ունի բարդ ջղային դրութիւն, եւ ո՞վ գիտէ, թերեւս ունի նաեւ ապրելու, տեւելու կամք...

Երբ ծերուկը մեկնեցաւ՝ նստայ նոյն ժայռին վրայ, ապպալած ծառին մօտ, որ չեմ գիտեր ինչու ծերունիին խօսքերէն ետք, յիշեցուց ինծի տարեց բարեկամուհի մը, որ իր ֆիզիքական անկումէն ետք՝ երկա՛ր տարիներ մնաց այդպէս կեանքին կառչած։

Հեռուն՝ լեռներն էին. կարծես ձեռքձեռքի, ուս-ուսի, սէգ ու դալարագեղ լեռները, որոնց գագաթները ամպերը երբեմն շղարշով կը պարուրէին, երբեմն ալ կ'ինկնէին, անոնց լանջերուն վրայ հանգչելու։

digitised by A.R.A.R.@

Վարէն՝ առուն գլգլալով, կարկաչելով կը վազէր։ Իր կայտառող ջուրերը քարերուն վրայ թեթեւ մը փրփրելով կը նետուէին վար, գուարթօրէն երգելով, դէպի լեռները հակող արեւէն ոսկի ճաճանչներ խլելով։

Եւ ես, հոն նստած, ու աչքերս իր ջինջ ու յստակ ջուրերուն յառած՝ մեքենաբար կը կնեցի ծերուկին վերջին բառերը, «Ապրելու, տեւելու կամք, ապրելու տեւելու կամք», ու յիշեցի ուրիշ արձակուրդ մը, եւ ուրիշ ծառ մը, գրեթէ չորցած, մեռած ծառ մը, որուն առջեւ ամէն օր կանգ կ'առնէի։ Յիշեցի ձէնքն ու իր նկարները, իր խոշոր, վառող, հայու աչքերը, որոնք երբեմն կը նայէին առանց քեզ ու շրջապատը տեսնելու, երբ խորհուրդ մը կը գրաւէր զինք, երբ նոր տեսիլքով մը կը պարուրուէր էութիւնը։

Հոն, այդ ջուրերուն պայծառութեանը մէջ, տեսայ խորհրդաւոր ու խարխլած տնակը, որուն վրայ՝ վարսերը իր շուրջ թափած ուռենի մը կը հրակէր, աւելի ճիշդ՝ կարծես կ'ողբար։ Յիշեցի ծերունի Թամբոյը եւ ուռենիին նման հերարձակ ձէնին...

*

– Ադարակ կ'ուզենք, – կը դոչէին քրոջս մանչերը։

– Ո՛չ, ծովափ, ծովափ, – կը յարէին մեծերը։

Ես կը լռէի, բայց սրտանց կը բաղձայի, որ տղաքը յաղթանակէին։

Ու, պատահեցաւ, որ կարգ մը պըրպտումներէ ետք գտնուի վայր մը, որ դոհացում տայ թէ՛ մեծերուն եւ թէ՛ փոքրերուն։

Հրուանդանի մը վրայ կառուցուած սիրուն գիւղաքաղաքի մը մէջ ապարակ մըն էր։ Ունէին բազմաթիւ ձիեր ու կովեր եւ տղոց փնտռածն ալ այդ էր։ Յարդանոցին մէջ կային կատուներ ու մին չիւսէն սիրուն ձագուկներ։

Կը յիշեմ թէ, երբ մեր արձակուրդը վերջացաւ ու կը պատրաստուէինք մեկնելու՝ փոքրիկ կրէկը որքա՜ն արցունք թափեց, «Ձեմ ուզեր երթալ, չեմ ուզեր կենդանիներէն բաժնուիլ, – կը հեկեկար ան, – կը սիրեմ զանոնք»։

Ադարակին դիմաց, բաղդատաբար բարձր դիրքի վրայ, կարապներու նման սպիտակ երեք տնակներ նստած էին, որոնցմէ առաջինը յատկացուած էր մեղի։ Տղաքը ամէն անգամ որ առիթ գտնէին՝ կը վազէին ադարակ։ Կովերը արօտավայրը կ'ելլային, բայց յուլը միշտ կը մնար իր տեղը, մալապին՝ բաց երախի մը նման լոյն դրան մօտ, վիզը երկաթէ օղակին մէջ։ Տղաքը կը վազէին անոր քով, անվախօրէն կը շոյէին անոր ճակատը ու ան հանդիստով կ'ուտէր յարդը անոնց ձեռքէն։ Երբեմն, ժամեր ամբողջ, առանց ձանձրոյթի կը մնային հոն, դրբացի տղոց հետ։

Ձիերը միշտ կը վարձուէին հեծնել փափաքող երկսեռ պատանիներու կողմէ, որոնք ունէին բացատրութիւններ տուող առաջնորդ մը։ Մեր նախաճաշի պահուն՝ կը սկսէր վրնջիւնը, սմբակներու դոփիւնը. պատանիները իրենց նախասիրած ձիուն սանձէն բռնած, կը հաւաքուէին մարագին առջեւ՝ հրճուանքէն շողացող աչքերով ու ազմկելով։ Երկար արարողութիւն էր մինչեւ ճամբայ ելլելնին։ Գրեթէ երկու մղոն երկարող արահետէն ետք կը մտնէին ընդարձակ դաշտը ու ձիավարժութեան զանազան փորձեր կ'ընէին։

Այնքա՜ն կը սիրէի քալել այդ արահետէն, որ իր երկու կողերուն ունէր դաշտեր, արօտավայրեր, ժայռոտ բլուրներ ու վերերը, անտառին մօտերը՝ լճակ մը, որուն առջեւ բարձրացող հողի բլրակոյտը՝ առաւօտ մը ծածկուած էր հարիւրաւոր ճայերով, որոնք յանկարծ, սուր կռինչներով սլացան վեր, չբնան մը ըրին օդին մէջ ու ճերմակ ամպի մը նման հեռացան դէպի ծովը։

Այդ փոչոտ արահետը կը կորսուէր անտառին մէջ։ Ինչպէ՜ս կ'ուզէի ես ինքս ալ մտնել հոն, ժամեր ամբողջ թափանցել ծառերուն սառուերին մէջ, չնչել բոյ-

digitised by A.R.A.R.@

ըր եղեւիններուն ու խոնաւ հողին, ա-
կանջ տալ անտառի սրտի տրուփին, հո-
ղէն բարձրացող մեղեդիին, ծառերուն
փսփսուքին... Ճամբուս վրայ արեւը
ոսկի գիծեր պիտի քաշէր, ճակատս շո-
յէր, հոգիս ջերմացնէր։

Ինծի անծանօթ ու սիրելի աշխարհ
մը պիտի դանէի հոն ու անտառի շնչա-
ռութիւնէն, խորհրդաւոր չչուկներէն մէջը
թմլած, կորսուած, խեղդուած բանիր
յանկարծ կեանքի պիտի դային... Պիտի
վազէի, պիտի վազէի դէպի խորերը,
դէպի անտառին սիրտը ու էութիւնս պի-
տի խայտար հրճուանքի ալիքներով։
Պիտի նետուէի մայրիներուն փռած ծած-
կոյթին վրայ ու անոր բոյրէն կէս գի-
նով՝ պիտի խոկայի...

Հեռու՝ մեծ քաղաքի մը թունալից
օդէն, աղմուկէն, տենդոտ հեւքէն, միտք
ու հոգի բթացնող, ամլացնող, սպառող
իր պահանջներէն, պարտադրանքներէն,
որոնք կը խեղդեն թռիչք ու երազ եւ ծը-
նունդ կու տան խռովքի ու դառնութեան։
Հոն երկարած, աչքերս ծառերուն ա-
բանքէն երկնքի պատառ մը կրկած՝ հո-
գիս պիտի խաղալէր ու թռչուններուն
համերգովը պիտի խայտար։

Բայց արգիլուած էր մտենալ խակ
անոր սեմին... Վտանգներ ո՛չ թէ իր
մէջէն, իր սրտէն, վտանգներ ո՛չ թէ սո-
ղուններէ կամ վայրի կենդանիներէ, այլ,
դազանացած մարդերէ...

Մարագէն քիչ վեր, արահետին աջ
կողմը, պարտէզի մը մէջ էր այն ծառը,
զոր յիշեցի։ Երբ հասնիք հոն, անպայ-
ման կանգ կ'առնէի ու յափշտակուած՝
կը դիտէք դայն երկար։ Ես ինքս ալ չէի
կրնար բացատրել, թէ ինչու ան այդքան
զիս կը գրաւէր, թէ ինչով աւելի գեղե-
ցիկ, աւելի հետաքրքրական էր ան իր
շուրջ գտնուող սաղարթախիտ ծառերէն։

Իր կեղեւէն բոլորովին մերկացած,
գորչացած, բունը խոր ու խոշոր փոսու-
թիւնով մը ակօսուած, երկու հատ ճիւ-
ղեր, երկու կորուած թեւերու պէս կ'եր-
կարէին վեր՝ պղպտանք մը գրկած ա-
զօթողի մը նման։ Ու խոռոչացած բու-
նէն՝ մէկ կողմին հակած չորցած ճիւ-
ղերու հանգոյցներուն վրայ, գլխարկի
մը պէս նստած կանանչութիւն մը։

Կը յիշեմ թէ՝ ազարակապանին կի-
նը անգամ մը հեռուէն նկատեց զիս հոն
ու կանգ առաւ. հաւանարար, կարծեց
թէ զգայացունց բան մը տեղի կ'ունենար
պարտէզէն անդին։ Այն առեն, պայու-
սակէս թուղթ ու մատիտ հանեցի ու սկը-
սայ ուրուագծել այդ գրեթէ չորցած,
մեռած ծառը։

*

Մարագին առջեւ էինք, երբ քոյրս
մօտեցաւ ու ըսաւ.

– Գիտե՞ս, թէ երկրորդ տնակին
դիրի յարկաժիին հայեր վարձած են
եղեր... Մայր ու տղայ են, քիչ առաջ
ծանօթացանք, խօսեցանք։

– Անուշը ձէք է, – դոյչեց Ցիքին,
– նկարիչ է. Կրէկին եւ ինծի հետ գըն-
դակ խաղաց այս առտու. հիմա հոն է,–
աւելցուց ոգեւորուած, – հոն, վերը,
այդ չորցած ծառը կը նկարէ...

Զարմացայ, հրճուեցայ, հետաքրք-
քրքուեցայ, բայց շտապել ու խանգարել
չուզեցի։

Կը դիտէինք հորթուկները, որոնք
երկուքն ալ ցուլին ճերմակ աստղը ու-
նէին իրենց ճակտին։

Օր մը առաջ, ծնած էր ուրիշ հոր-
թուկ մը, մայր կովը վախով լեցուն աչ-
քերով կը նայէր ամէն անգամ որ չչուկ
մը լսէր, բայց օր մըն էր անցեր արդէն
եւ ան, ուժերը վերագտած՝ ու յարձա-
կումի պատրաստ՝ վայրի գոռոցով մը
գլուխը կ'երկարէր մօտեցողներուն։

Կը դիտէի ցուլը, այդ կենդանին ո-
չինչ ունէր վայրագ. կարծես հայրական
բնազդով՝ ու դորովով լեցուն աչքերով
կը հետեւէր հորթուկներուն շարժումնե-
րուն ու կը կանչէր զանոնք եւ անոնք մա-
յիւնի նմանող բառաչով մը կը պատաս-
խանէին ու քիչ մը կը մօտենային։

Կը յառաջանամ արահետէն. կ'ուզեմ
նկարն ու նկարողը տեսնել։

Հմակրելի դիմագծերով երիտա-

digitised by A.R.A.R.@

սարդ մըն էր, բոլորովին տարուած իր աշխատանքով։

Ծառը, հոն, իր պաստառին վրայ անմահացած էր...

Ցայտնի էր որ կոխոտուած ճամբաները արհամարհող ու նկարելու ուրոյն ձեւ փնտռող մըն էր եւ ինչ որ ըրած էր լաւ էր, լաւ էր ու նաեւ ակնահաճոյ։

Ցանկարծ կը դառնայ իմ կողմս ու կը ժպտի։

– Դրացիներ ենք, – կ'ըսէ, – անունս ձէք է...

– Գիտէ՞ք, – կ'ըսեմ, – օրերէ ի վեր, երբ սա ծառին առջեւ կը հասնիմ՝ երկար, երկա՛ր կը նայիմ անոր։ Ուրախ եմ որ արուեստագէտի աչքն ալ նկարելու արժանի է գտեր զայն։

– Իրա՞ւ, – կը խնդայ, – երբ տեսայ՝ իսկոյն որոշեցի նկարել, թէեւ չեմ գիտեր ինչպէս պիտի ամբողջանայ...

Միասին քալեցինք։ Տղաքը մարագին մէջ կառուներուն հետ կը խաղային. ես մնացի անոնց քով։

Կը դիտէի կովերը, որոնք վերադարձեր էին արօտավայրէն ու իրենց առջեւ լեցուած թեւիը կը լափէին։ Ագարակապանն ու իր օգնականը կը քակէին յարդի դէզերը ու խուրձ-խուրձ կը լեցնէին անոնց առջեւ։

Ցուլը յագուրդ չունէր. լեզուովը կ'ուլէր, կը մաքրէր ինչ որ մնացած էր ու վիզը կարելի եղածին չափ կ'երկարէր երկաթէ օղակէն՝ քովի մատաղ կովին առջեւ լեցուածէն ալ բաժին հանելու։

Բոլորը կ'ուտէին, բացի այս վերջինէն։ Կլոր աչքերը հեռուն յառած՝ կարծես կ'երազէր... Ցուլը կը լզէր անոր ճակատը, վիզը, համակ գորով էր, բայց ան անշարժ, ո՛չ կ'ուտէր, ոչ կը խմէր։ Տղաքը ի զուր յարդը կ'երկարէին, կը մերժէր, գլուխը կը հեռացնէր. կարծես իր աչքերը կ'ըսէին, թէ խորհրդաւոր բաներ կը կատարուէին իր մէջ ու այլեւս անտարբեր էր զարձած ուրիշ ամէն բանի հանդէպ։

Երբ վերադարձանք՝ մեր հայ դրացիները նստած էին ծառերուն տակ զետեղուած նստարաններուն վրայ։

Կը թուեր, թարի կին մըն էր ձէքին մայրը. դիրուկ, ութսար հայ մայրիկ մը եւ այդ օտար միջավայրին մէջ՝ հայերու ներկայութիւնը շատ ալ տարբեր չէր հարազատներու ներկայութենէն։

Իսկոյն, փոխադարձ համակրանք ըստեղծուեցաւ ու ջերմ խօսակցութիւն մը ծայր տուաւ, որ եկաւ յանդեցաւ հայ մայրերու դլխաւոր մտահոգութեան՝ աղոց հայերէն չխօսելուն։

– Ձէ՛ք, հայերէն կը խօսի՞ս, – հարցուցի։

– Քիչ մը, – պատասխանեց. բայց մաքուր հայերէն խօսող հայու մը չեշտով, ինչ որ հրճուեցուց զիս։

– Ձեր մէջէն ո՞վ աւելի լաւ կը իսսի, – հարցուցի կրկին։

– Մեծ քոյրս, – ըսաւ, նոյն հարազատ առոգանութեամբ։

– Ամբողջ նախադասութիւն մը, գաղափար մը յայտնել տուր, նայէ մէջէն կրնա՞յ եղել, – յարեց մայրը դառնութեամբ։

Ձէք կարծես ամչցաւ, դէմքը մոայլեցաւ, շրթները կիսով բացուեցան, բայց նոյն րոպէին ալ եկան կանչեցին գիրենք ադարակէն եւ այդ եղաւ մեր առաջին ու վերջին տեսակցութիւնը ձէքին մօրը հետ, որ յաջորդ առաւօտ կանուխ մեկնեցաւ՝ նոր թոռնիկի մը ժամանումը ողջունելու։

*

Տղաքը իրենց հօրը հետ ծուն էին մտեր, իսկ քոյրս ու ես՝ բարձունքէն կը դիտէինք մեր շուրջ տարածուող համայնապատկերը։ Զուրը երկարող խարակներուն հետաքրքրական կառոյցը, զանոնք լուացող փրփրոտ պղտիկ ալիքները՝ քիչ անդին, ժեռուտ կղզեակ մը, որուն ցցուած կուրծքը ճերմկեր էր հարիւրաւոր ծովային թռչուններով։

Փարոսը՝ իր հպարտ գլուխը երկարեր էր դէպի ամպերը ու վարը, ծովախորշին մէջ բազմաթիւ նաւակներ ու խեցգետինի թակարդներու նշաններ,

digitised by A.R.A.R.@

պայծառ ու զուարթ երանգներ նետեր էին ջուրերուն։

Իր ժեռուտ ափերով, ձկնորսի հիւղակներով, ծուռիկ, ոլորապտոյտ փողոցներով այս գեղատեսիլ վայրը, ուր կարելի չէր գտնել մէկ հատ իսկ արդիական բազմայարկ շէնք, որ խաթարեր իր նախնական ու բնական գեղեցկութիւնը՝ դարձած էր ժամադրավայրը նկարիչներու։ Անոնցմէ շատերը ունէին իրենց մընայուն աշխատանոցները, ուրիշներ կու գային ամառուան եղանակին՝ օգտուելու իր անպաճառ ու հարուստ նիւթի աղբիւրներէն։

Եկեր էր նաեւ ձէքը, նկարչութեան երեկոյեան դասընթացքներու հետեւող երիտասարդ ճարտարագէտ մը, որ տրաձակուրգի մէջ էր ու զայն կ'օգտագործէր։

Գեղարուեստական խոր ըմբռնումով օժտուած նկարիչ մըն էր ան մեզի համար։ Բանաստեղծական խորք ու գոյներու գրաւիչ ներդաշնակութիւն մատնող իր գործերը, զորս տեսեր էինք՝ մեզ կը վստահեցնէին, թէ ան օր մը ուշագրաւ նուաճումներ պիտի արձանագրէր ու բարձունքի մը հասնէր։

Սեւը բոլորովին վտարած էր իր եռանգապնակէն. կը խուսափէր գոյները բաղադրելէ ու վրձիններէն աւելի՝ կը նախընտրէր դանակի գործածութիւնը։

– Ձէքը այսօր ի՞նչ կը նկարէ արդեօք, – քոյրս խզեց լռութիւնը։

– Հետաքրքիր եմ գիտնալու, թէ այն պատատառը, որուն վրայ չորցած ծառը նկարեց, ինչպէ՞ս պիտի ամբողջացնէ, հաւանաբար մարդ մը աւելցնէ... Մենք վերադարձած պիտի ըլլանք ու պիտի չտեսնենք։

– Թերեւս խորհրդապաշտական նըկարի մը վերածէ, – ըսաւ քոյրս, – եւ այդ ընէ՝ իր ալ վերադառնալէն ետք։

– Ահա կու գայ, – ըսի, հեռուէն ճանչնալով իր ինքնաշարժը։

Քիչ վերջ, մեր քովն էր արդէն։

– Ո՛չ, ո՛չ, ոչինչ ունեմ ցոյց տալիք, – գոչեց, մեր հարցումին ի պատասխան, բայց նկատելի հրճուանքով,– անհանդարտ էի այսօր ու թափառեցայ, տեսարանէ տարբեր քան մը նկարելու մասին կը մտածէի, մղոններով հեռացայ, – աչքերը յառեր էր քրոջս տեսարէին, – տեսնեմ դո՛ւն ինչ ես գծեր, – ըսաւ տետրակը գրեթէ խլելով ձեռքէն։

– Ոչինչ, – գոչեց քոյրս, – խաղացի պարզապէս, բայց երբ վերադառնանք, պիտի սկսիմ նկարել։

– Ես կասկած չունիմ որ արուեստի գործեր պիտի ըլլան անոնք... Ինչո՞ւ կը զարմանաս, – աւելցուց ըլջորէն, – կարելի է խառնուածք մը ուսումնասիրել եւ անոր տալիք գործերուն մասին գուշակութիւններ ընել...

Համակարծիք էի իրեն. մեր ընտանիքին կրաֆերպոյնն էր քոյրս ու ամէն կերպով ամէնէն օժտուածը։ Բարձր արուեստի իր ըմբռնումով, իր նուրբ ճաշակով, կասկած չունէի, թէ պիտի յաջողէր։

– Մա՛մի... մա՛մի...

Կրէկը ծովափէն կը կանչէր. քոյրս պահ մը հեռացաւ։

– Արուեստի հասկացողութիւնը որքա՞ն կը տարբերի անձէ անձ, – ըսի ձէքին դառնալով, – ինչ որ կ'ոգեւորէ մին՝ անտարբեր կը թողու ուրիշ մը, ինչ որ ոմանց համար արժէք կը թուի՝ ուրիշներուն արհամարհանքին կ'արժանանայ։

– Ես շատ ալ կարեւորութիւն չեմ տար այդ կարծիքներուն, – ըսաւ ձէքը, մատները խրելով թաւ մազերուն մէջ, – կը հետեւիմ ներքին մղումներուս, կը ջանամ հեռու մնալ ազդեցութիւններէ, կ'առաջնորդուիմ անձէս բխող թելադրանքներէ։ Երբեմն, խորհուրդ մը կը համակէ զիս, կը դառնամ գերին անոր, կը սկսիմ նկարել ինքնամոռացութեան հասնող յափշտակութեամբ... Չեմ կրնար ըսել, թէ գտած եմ ուղիս... Միակ երաշխ է քիչ մը յաջողութիւն ձեռք բերել, որպէսզի բոլորովին նկարչութեան նուիրուիմ... Կարելի չէ բարձունքի մը հասնիլ առանց յարատեւ աշխատանքի, առանց անվերջ որոնումի...

– Ի՞նչ եղաւ այսօրուան պոռոյտիդ արդիւնքը, – գոչեց քոյրս մատենալով։

digitised by A.R.A.R.@

– Օ՛, լաւ, շատ լաւ, – յարեց ձէջ, ոգեւորուած, – քշեցի կառքս ու մղոն-ներով հեռացայ. համբան, մեքենայէն առանձ-առանձ լսուող պզտիկ աղմուկ մը սկսաւ անհանգստացնել զիս. կեցուցի կառքը եւ ստուգելէ ետք թէ խանգարում մը չկար՝ շուրջս դիտեցի, եւ ինչ որ տեսայ հոն՝ դրաւեց զիս, յափշտակեց զիս...

– Ի՞նչ, – գոչեցինք քոյրս ու ես միաբերան:

– Խորհրդաւոր, շա՛տ խորհրդաւոր բաներ, – աւելցուց ժպտելով, – եթէ կ'ուզէք տեսնել՝ վաղը կրնաք ինծի ընկերանալ...

⁂

ձէջի ինքնաշարժը կը սուրար: ճամբու կողերուն փռուած արտեր, պտղաստաններ, բուսականութեամբ հարուստ անծայրածիր տարածութիւններ ու անոնց մէջ, տեղ-տեղ, երկինքի կապոյտը դէպ-կած լճակներ, արօտավայրերու մէջ ա-բածող սեւ ու կարմիր կովեր, հերկուած հողերու ակօսներուն երկայնքին նորա-բոյս կանանչի շարքեր:

Թաւուտներու մէջ գոյնի ու ձեւի դանազանութիւն մը յանկարծ. չորցած ծառ մը, իր սաղարթներէն վերջնակա-նօրէն մերկացած, բայց այդ մերկու-թեան մէջ իսկ այնքա՜ն գեղեցիկ:

Փինչո՞ւ, կ'ըսեմ ես ինծի, տեսակ մը վրդովումով, ինչո՞ւ չորցած ծառերը այսպէս կը դրաւեն քեզ, նայէ՛ կա-նանչներուն, նայէ՛ աւելի գեղեցիկնե-րուն: Բայց աչքերս կառչած կը մնան՝ իր այնքա՜ն հետաքրքրական ճիւղաւո-րումով վեհօրէն բարձրացող դորշ ծա-ռին:

Ա՛յ, կ'ըսեմ, չորցած, մեռած ծա-ռերը չեն որ կը հետաքրքրեն ու կը դը-րաւեն զիս. յանախ, շարքերով կ'երե-ւան անոնք կանանչներուն մէջ, ցախե-րու նման եւ ընդհանուր գեղեցկութենէն բան մը խլելով: Բացառիկ են ասոնք, զիս գրաւողները, մարդոցմէ ոմանք ալ մահուընէ ետք կը դառնան այսպէս տի-րական, կը տիտանանան, կ'իլխեն իրենց շրջապատէն ալ անդին, իրենց գաղա-փարները, իրենց մտային ու հոգեկան արժանիքները աւելի կը շեշտուին:

– Աղուոր համբաներ չե՞ն, գոհ չէ՞ք ինծի ընկերանալուդ, – զուարթ շեշտ մը ունէր ձէջի ձայնը:

– Այո՛, անշուշտ, – պատասխանեց քոյրս, միայն, սա պահուս հետաքրքիր եմ դիտնալու, թէ ուր կ'երթանք...

– Փիչ մը եւս համբերեցէք, – ըսաւ ձէջ խորհրդաւոր ժպիտով մը, – կը վստահեցնեմ ձեզ, թէ շատ հետաքրքրա-կան պիտի ըլլայ. բոլորովին նոր ու տարբեր փորձառութիւն մը ունեցած պիտի ըլլաք, ու կորսուած ժամերուն համար երբեք պիտի չզղջաք, մանաւանդ՝ ինծի ալ մեծապէս օգտակար պիտի ըլ-լաք...

Լուռ էի ես. սիրտս կը խոցուէր, որ օր մը վերջ մղոններով, մղոններով հե-ռացած պիտի ըլլայինք այս բոլորէն... Օր մը վերջ՝ դէպի քաղաք... դէպի դան-դրուածային դորշութիւն, դէպի խելայեղ վազք ու ժխոր:

– Մեքենան ձայներ մը կը հանէ դարձեալ, – ըսաւ ձէջ, կառքը յան-կարծ կեցնելով:

– Ես բան մը չլսեցի, – յարեց քոյրս:

ձէջ դուրս ելաւ, եկաւ դռնակը բա-ցաւ ու՝

– Լաւ է դուրս ելէք, ձեր շուրջը դիտէք, մինչեւ ես սա աղմուկին պատ-ճառը ստուգեմ:

Կառքը կեցած էր դաշտի մը առջեւ: Փիչ հեռուն, մեկուսացած տնակ մը մեր ուշադրութիւնը գրաւեց: Տարիներու ծանրութեան տակ կարծես կքած, ա-բեւներէն խանձած, սեւցած, հովերէն, անձրեւներէն ծեծուած ու փտած միայ-նակ, երկյարկանի տնակ մը: Փոչիի խա-ւով ծեփուած պզտիկ պատուհանները մնակութիւն մատնող ոչինչ ունէին. արտաքին ալխարհին իրենց կոպերը փա-կած՝ կոյր աչքեր էին կարծես: Խարխը-լած դռնէն ոչ շատ հեռու՝ վարսերը իր շուրջ թափած արտում ուռենի մը կը

digitised by A.R.A.R.@

հակէր տնակին վրայ, խորհրդաւորութեամբ պարուրելով զայն։

– Լքուած բնակարան մը, – գոչեցինք քոյրս ու ես միաբերան։

Զգացի, թէ ձէք կը դիտէր մեզ աչքին ծայրովը։

– Հոն, վերը, պատուհանին առջեւ ծաղկած թաղար մը կայ, – շշնջացի յանկարծ։

Զարմանքով դիտեցինք ու աւելի մօտեցանք։

– Եւ հոս, տնակին ետեւ, զոյգ մը աղբաման, եւ հո՛ն, բանջարանոց մը...

– Ուրեմն լքուած չէ, – ըսի ու զարմանքս կրկնապատկուեցաւ, երբ տեսայ ձէքը մեր ետեւ, թեւին տակ պաստառ մը դրկած։

– Ո՛չ, – ըսաւ, ժպիտը աչքերուն,– լքուած չէ. ես ինքս ալ այդպէս կարծեցի...

– Ուրեմն մեզ հո՞ս է որ պիտի բերէիր...

– Ցուսախա՞ք ըրի ձեզ...

– Ո՛չ...

– Ուզեցի կրկնել, ինչ որ երէկ ինծի պատահեցաւ. ուզեցի նաեւ տեսնել ու լսել ձեր տպաւորութիւնը։ Ինչպէս պատմեցի՝ երբ դուրս ելայ կառքէն ու շուրջս դիտեցի՝ յանկարծ յափշտակուած մնացի. ենտրու Ուայէթի վրձինը հրաշալիք մը պիտի տար, ըսի։ Ո՛չ Ուայէթի բացատրիկ տաղանդը եւ ոչ ալ անսպառ համբերութիւնը ունիմ, բայց խորհրդաւոր ու դիս գրաւող բան մը կար այս բոլորին մէջ։ Օրերէ ի վեր միտքս փնտռտուքի մէջ էր. դիս անհանգստացնող որոնումի մը մէջ, եւ հոս կանգնած՝ հետզհետէ սկսայ տեսնել կիսատ նկար մը ամբողջացնելու կարելիութիւնը...

– Օ՜, ծառը, – գոչեցի, – ագռաւակի չորցած ծառը...

– Այո՛, ըսաւ ձէք, լուրջ ու խոհուն, – սա ուռենիին տեղ՝ ագռաւակի ծառը... հոս կեցած կը դիտէի, նկարը աչքերուս առջեւ կազմուելու վրայ էր, բայց կարեւոր բան մը կը պակսէր, երբ՝ ինչպէս հիմա, դուռը բացուեցաւ ու հոն երեւաց, իր տան նման թեթեւ մը ծռած ու երկա՛ր տարիներու շարք մը շալկած Թամբոը ու՝ նկարս ամբողջացաւ... Ցեռոյ, ակնարկս գամուած մնաց ծերուկին վրայ... Թաղապետական պաշտօնեայ կարծեր էր դիս. իր կապածները վարատելէ ետք, առոջարկեցի նկարել զինք. աչքերը հրճուանքէն շողացին, երբ լսեց թէ պիտի վճարեմ... դիս ներս հրաւիրեց. նստանք ու քիչ մը խօսեցանք։ Այդ միջոցին էր որ երեւաց իրմէ ոչ նըւազ հետաքրքրական դէմք մը, կնոջ մը դէմքը, եւ, ձեզմէ պիտի խնդրեմ որ համոզէք զինքը, որպէսզի նկարեմ։ Հազիւ բոպէ մը երեւաց ու անհետացաւ. հայրը ի զուր փորձեց ներս բերել, բայց վրոտահ եմ, դուք, ձեւով մը պիտի յաջողիք...

Տնակին դրան մէջ էր արեւախանձ դէմքով, ճերմկած մաղ ու մօրուքով ծերունի մը. թեթեւ մը կորացած ուսերով, նիհար ու ջղուտ Թամբոը, որուն, մեր վրայ յառած աչքերը լաւ տեսնելու ճիդով թէեւ պզտիկցած էին, բայց, հաստատամտութիւն, կամք եւ ուժ կ'արտացոլային։

– Բարե՛ւ Պրն. Թամբոս, – ըսաւ ձէք մօտենալով, – քոյրերս միասին բերի, որպէսզի ձէնին համոզեն...

– Բարո՛վ եկաք, բարո՛վ եկաք, հըրամմեցէք ներս...

Հետեւեցանք իրեն՝ դէպի կիսամութ սենեակը։

Ճակատը՝ պատուհաններուն առջեւ, երկար բազմոց մը, անճարակօրէն կարկտուած ծածկոց մը վրան. զսպանակները փրթած թիկնաթոռ մը անկիւնը. հին լաստիներով ծանրաբեռն սեղան մը, ամանի մը մէջ հունտեր, քանի մը աթոռ ու՝ սենեակին պերճանքը կազմող քանդակազարդ դարակաւոր կաբասի մը եւ ակուին վրայ, տարիներու ծուխէն ու փոշիէն սեւցած բնանկար մը։

Ժամանակին, բաւական լաւ կահաւորուած սենեակ մը եղած պէտք է ըլլայ, խորհեցայ, քրոջս մօտ նստելով։

– Երէկ, երբ տեսայ թէ ձեր եղբայրը կեցած տունս կը դիտէր, – ըսաւ ծերուկը մեզի դառնալով, – բացի դուռը

digitised by A.R.A.R.@

եւ պոռացի. «Է՛յ, բարեկամ, եթէ ասնա կամ աղջիկս ձեռքէս առնելու եկած ես՝ պիտցիր որ ո՛չ մէկը եւ ոչ ալ միւսը պիտի կրնաս ընել. ո՛չ տունս փլչելու միտք ունի եւ ոչ ալ աղջիկս ուրիշ մէկուն վրնաս»։

Ձէր բարձրաձայն խնդաց։

– Թամբս, կ'ըսէ բարեկամս, Սէմը, պէտք է քիչ մը նորոգութիւն ընես, հոգ տանիս, թէ չէ տունդ մօտերս, օր մը վար կ'առնեն, – շարունակեց ծերունին կղակը չփելով, – հոգ մի՛ ըներ, կ'ըսեմ, տունս չեն կրնար վար առնել, անոր հիմերը նոր տուներէն աւելի ամուր են եւ իմ արմատներս անոնց, այդ հիմերուն մէջ են. եթէ զանոնք քանդեն՝ իմ կեանքիս ալ վերջ տուած կ'ըլլան, այս տունը չինող իմ նախնիքներուս յիշատակին ալ...

«Առաւօտները, երբ կ'ելլեմ՝ Թամբս, կ'ըսեմ ես ինծի, մարմինդ ծանրացաւ, մէջքդ ծռեցաւ, ալ ծերութեան դուռը հասար։ Կ'իջնեմ վար, կ'ելլեմ դուրս, քանի մը անգամ խորտ՞ունկ կը շնչեմ, կը նայիմ երկինք, կը նայիմ ամպերուն, արեւին. «Փառք քեզ Տէր, կ'ըսեմ, փա՛ռք քեզ Տէր»։ Կը մտնեմ բանջարանոցս, կը խրեմ ժատներս հողին մէջ՝ ու կը զգամ դէպի մարմինս հոսող ուժը... Կ'ոգեւորուիմ, կ'աշխուժանամ, մէջքս կը չտկեմ ու երիտասարդի աւիւնով օրն ի բուն կը դործեմ...»։

Բնազդաբար նայեցայ Ձէքին. դէմքը համակ հեգնանացում կ'արտայայտէր. կարծես մեզ ու շրջապատը բոլորովին մոռցած՝ կը դիտէր Թամբսը, կարծես կը ջանար Թափանցել անոր էութեան, հոգեկան աշխարհին, անոնցմէ բան մը կարենալ փոխադրելու համար իր պատատուին, երբ զայն նկարէր։

Ստուեր մը անցաւ դրան առջեւէն ու ասրսուր մը՝ մարմնէս։

Մէկը անդուխներէն վեր վազեց։

– Ձէ՛նի, վա՛ր եկուր, տե՛ս, հիւրեր ունինք...

Դուռ մը ուժգին գոցուեցաւ։

– Փացէք իր սենեակը, – ըսաւ ծերունին, քրտնջ ու ինծի ուղղելով խօսքը, – վե՛ր, իր սենեակը, ձախ կողմի առաջին դուռը, ըսէք որ Հէրին կը ճանչնաք... Սատանան տանի անիծուած արիկան, բայց միակ միջոցն է տիկա...

Ձէք կը դիտէր մեզ՝ խնդրանք կար աչքերուն խորը։

– Տիսնենք պիտի բանա՞յ դուռը, ինչպէ՞ս պիտի համոզենք ու վար տանինք, – ըսի քրոջս, մինչ սանդուխները կը ճռային մեր ոտքերուն տակ։

– Պիտի փորձենք, թերեւս յաջողինք, – եղաւ պատասխանը։

Երբ հասանք դրան առջեւ՝ մատնահարեցինք. ո՛չ մէկ չչուկ ներսէն։

– Ձէ՛նի, – ըսաւ քոյրս, – հայրդ կանչեց ու չեկար... դիտե՞ս թէ ով կայ վարը... մեր եղբայրը, Ձէքը, որ Հէրին կը ճանչնայ...

– Ձէնի, – ըսի, – բա՛ց դուռը, Ձէքը անպայման կ'ուզէ քեզ տեսնել, կ'ուզէ Հէրին մասին քեզի պատմել...

Դուռը պզտիկ մը բացուեցաւ. մարած աչքեր պահ մը մեզ դիտեցին, յետոյ, կամաց-կամաց հեռացան ու դուռը հառաչելով դնաց եւ ու կպաւ պատին։

Խարտեաշ մազերով թարմատի էակ մը էր կեցած սենեակին անկիւնը, անկողնին մօտ։ Վախ արտայայտող իր սիրուն դէմքը՝ օդէ ու արեւէ զրկուածի մը դալկութիւնն ունէր։ Խոշոր բացուած կապոյտ աչքերը մեր վրայ յառած՝ կարծես կը սարսռար, մեր ներկայութենէն խայտ տալ կը թաղծար։

– Որքա՞ն սիրուն ես Ձէնի, – ըսաւ քոյրս ջերմօրէն ժպտելով, – եթէ Ձէք նկարէ քեզ՝ կրնամ երեւակայել, թէ ի՞նչ գեղեցիկ բան մը դուրս պիտի գայ...

– Ու երբ ցուցադրէ զայն, – աւելցուցի ես, – եւ Հէրին տեսնէ...

Ակնթարթի մը մէջ Ձէնին կարծես կենդանացաւ. պզտիկ ժպիտ մը շողաց աչքերուն մէջ։ Պահ մը վարանումով դիտեց մեզ՝ ապա, իսկոյն անցաւ հայելիին առջեւ, ակնարկ մը նետեց հոն ցոլացող դէմքին, յետոյ՝ անփութօրէն վեր առնուած մազերը ձգեց ուսերուն, ձեռ-

digitised by A.R.A.R.@

քերովը ուղղեց զանոնք ու հազիւ լսելի ձայնով մը՝

– Հէրին այսպէս կը սիրէր, – ըսաւ եւ խկոյն լիզուն բացուեցաւ։ Կարծես անծանօթներու ներկայութեան չէր գըտնըւեր այլեւս։

– Աղուոր չէ՞ այսպէս, – շարունակեց հեզահեծ կենդանացող ձայնով, – Հէրին միշտ ինք իր ձեռքով մազերս վար կ'առնէր, կը շոյէր, կը համբուրէր զանոնք... ինչո՞ւ ուշացաւ... Չի գիտեր որ պէյպի մը ունինք... կլորիկ դէմքով, պուպրիկի նման պէյպի մը... հիւանդացաւ, ու չար մարդիկ տարին զայն... ո՞ւր տարին... Հէրին դնաց մատանիս գնելու, երբ գայ՝ պիտի ամուսնանանք... Տեսէ՛ք, տեսէ՛ք հարսանեկան չրջազգեստը...

Վազեց դէպի պահարանը։ Այն տեղն նկատեցի որ ոտքերը բոպիկ էին ու գունաթափ ծաղիկներով կիսամաշ հագուստին մէջ՝ մարմինը որքա՜ն նիհար։

Սպիտակ չրջազգեստ մը վրան բըռնած՝ մօտեցաւ հայելիին։

– Գեղեցիկ չէ՞... Հէրին կու գայ, անպայման կու գայ... Թերեւս այս դիւեր կու գայ... Հայրս կը խաբէ դիս. կ'ըսէ թէ Հէրին արկածով մեռած է, բայց ան մեռած չէ... դիշերները կու գայ այն ծառին տակ, ուր միասին կ'ըլլայինք ու կը կանչէ զիս, բայց չեմ կրնար իրեն երթալ, որովհետեւ հայրս չար է ու կը կղպէ դուռը... Երբ մուքը իջնէ՝ կը լսեմ ձայները... հոն, գուքսը...

Ձէր սանդուխներուն ստորոտէն ձայն տուաւ։

– Ձէ՛նի, – ըսինք, – երթանք, որպէսզի ձէր սկսի նկարել քեզ...

Հանդարտ ու երջանիկ՝ հնազանդեցաւ։

Միասին իջանք վար, ժպտեցաւ ձէքին ու դնաց նստաւ իրեն ցոյց տրուած աթոռին վրայ։

Թամբս հոն չէր։

– Հէրին այսպէս կը սիրէր, – սկըսաւ ձէնի, մազերը ցոյց տալով, – ձեռքերովը վար կ'առնէր ու կը շոյէր այսպէս, – բայց իսկոյն լռեց, երբ հայրը մտաւ ներս։

Քոյրս մօտեցաւ դարակաւոր կարասիին, որուն վրայ արծանիկներ ու անօթներ կային, ինչպէս նաեւ՝ չրջանակի մէջ առնուած քանի մը լուսանկար։ Մին՝ մէջին տարիքով, գիրուկ կնոջ մը պատկերն էր։

– Առաջին կինս է, – ըսաւ Թամբս մեր կողմը գալով, – աշխատասէր ու լաւ կին մըն էր. քսանըհինգ տարի միասին ապրեցանք, բայց մեր զաւակները չապրեցան՝ ծնան ու մեռան եւ այդ ցաւը գինքն ալ տարաւ դերեզման։ Մայրս կը ծերանար ու ես, ինծի օգնող կին մը կ'ուզէի. երբ գործով հարաւ գացի՝ հանդիպեցայ ձէնիին մօրը... սիրուն չէ՞...

– Այո, – ըսինք, – շա՛տ սիրուն ու շատ երիտասարդ...

– Ձէնիին տարիքն էր, երբ ամուսնացանք. տարի մը հետք աշխարհ եկաւ ազջիկս, ասիկա իր մանկութեան լուսանկարն է, երեք տարի վերջ ալ ծնաւ մանչուկս, բայց չաթթ մը չանցած՝ Տէրը իր քով տարաւ երկուքն ալ... կինս ալ, մանչս ալ... Ամէն անդամ որ դագաղ մը կ'ելլէր գոնէս՝ մայրս կը կրկնէր. «Աստուած կը պատժէ մեզ մեր մեղքերուն համար. հօրդ մեղքերն ալ շատ էին...» Չեմ գիտեր ի՛նչ մեղք գործած էր նաեւ հայրս՝ ինծի պէս հոգին կասկածած մարդ մըն ալ անիկա էր։

Ձեռքը անցուց աչքերուն վրայէն, կարծես պատկեր մը վանել ուզէր։

– Այս չրջանի ամէնէն համեղ եգիպտացորենը մենք կը հասցնէինք, – շարունակեց իր խուլտա ձայնով, – Թամբսներուն արտերը մղոններով կ'երկարէին, բայց, ձախորդութիւններ, հիւանդութիւններ պատճառ եղան որ կամաց-կամաց կորսնցնենք մեր հողերը։ Եւ ալ իմ կարգիս՝ ստիպուեցայ ծախել կովերը ու փոյտուցի մարտկը։ Բայց... ոչ ոք ձեռքէս կրնայ առնել բանջարանոցս ու տունը։ Եւ տակաւին երկա՞ր պիտի ապրիմ, ձէնիս պիտի լաւանայ, ամուսնանայ ու թոռներս պիտի հոգեն ու մեծցնեն

digitised by A.R.A.R.@

տունս, ընդարձակեն բանջարանոցս...

Ձէջ ոտքի ելաւ։ Արագ կերպով ուրուագծեր էր ձէնիին դէմքը. չէր ուզեր մեզ երկար պահել։

– Երանելի՜ ծերուկ, – գոչեց քոյրս, երբ ինքնաշարժ մտանք, – այդքան գրժբախտութիւններէ ետք, այդ ի՞նչ նախանձելի լաւատեսութիւն...

– Ապրելու, տեւելու այդ ի՞նչ հզօր կամք, – աւելցուցի ես, հազիւ լսելի ձայնով։

– Կարծեմ քանի մը գաւաթ նեսեր էր, – յարեց Ձէջ, – իսկ ես՝ դրեթէ դինով եմ առանց խմած բլլալու... Երկու դիմանկար... երկու անսովոր դէմքեր... ու... սկսուած նկարի մը ամբողջացումը...

⁂

Սա տապալած ծառին դէմ նստած՝ յիւէցի այս բոլորը, մինչ առուն զլզլալով կը վազէր վարէն ու արեւը հրավառ ամպերու մէջէն կը սահէր լեռներուն ետեւ։

Ցիչեցի անտառին մէջ կորսուող արահետը, որմէ փոշիի ամպեր կը բարձրացնէին ձիերուն սմբակները։ Ցիչեցի ծերունի Թամբսի արեւախանձ ձեռքերը, ուռած երակներով իր խոշոր ու չարչարուած ձեռքերը ու ջուրերուն պայծառութեանը մէջ ջանացի տեսնել Ձէջի կիսաւարա նկարը ամբողջացած...

Պաստառին վրայ թերեւս մաս մը միայն մնկուսացած հին տնակէն...

Անոր խարխլած դրանը կոթնած կամ սեմին նստած՝ նիհար ու ջղուտ ծերունի Թամբսը՝ ակնարկը յառած իր մէջքին պէս ծռած ու չորնալու վրայ եղող ծառին։ Բունը խոր ու խոշոր փոսութիւնով մը ակօսուած ու կեզեւէն բոլորովին մերկացած ծառին, որուն մէկ կողմին հակած ճիւղերուն վրայ տակաւին թարմ կանանչութիւն մը կար, յոյս մը կար ու Թամբսի աչքերուն խորը՝ ապրելու, տեւելու կամքը, տենչը...

Ա. ԱՐՓԻՆԷ

digitised by A.R.A.R.@

ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԵՐԳԸ

ԱՐՄԷՆ ՍԵՒԱՆ

ՇԱՀԻՆՇԱՀ ՄԸ ԿՈՒԼԱՑ ԹԱԳՈՒՈՒ ՄԷՋ ՎԷՐԱՑ ԳՈՐԾՈՂՆԵՐԸ Կ'ԵՐԳԵՆ ԿՈՒԼԻՍՑԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Գ

Կապոյտ լեռներ կը ծփան մեր ոտքին տակ,
Ալիքները ինչպէս ծովին անյատակ.
Կը տարածուի անոնց կուրծքին վրայ մառուր,
Շողն արեւին, զերդ ոսկեսար վարագոյր:
Գիւղե՛ր ահա, տնակներովը կաւէ,
Ու խենթ հովն՝ որ ծագէ ի ծագ կ'արշաւէ,
Գեղջուկներն՝ որ արեւին տակ կը խնդան,
Սեղանին վրայ հաց ունին եւ թթու թան...
Եւ ճամբուն մերմ, գիւղի մը դէմ անայլայլ,
Դէպի երկինք կ'երկարի ժայռ մը մրոայլ,
Կը թափառի շուրջը ոգի մ'անհանդարտ,
Մեզ կը ձայնէ մեծ Շահինշահ մը հրպարտ:
Դարեհն ի՛նքն է, դարերուն դէմ յաղթական,
Անմահացած՝ սեպագիրի մը վերան:
Թագաւորներ շղթայակապ, շարէ շար,
Իր առջեւն են ինկած, գետնին հաւասար,
Եւ քարը ինք, լեզու ելած կը խօսի,
Շեփորելով նուաճումներն հերոսի.
Շահուած գանձեր, գահեր, հոգեր անսահման,
Ժողովուրդներ՝ ծրփուն ծովի մը նման:
Պեգա՛ս, Պեգա՛ս, ժամանակին կլափն ահեղ,
Լափեց փառքին, գահին զարդերը շքեղ.
Մեծութիւնը դարձաւ մշուշ ու շոգի,
Պատմութիւնը հաշիւ չի՛ տար, ո՛չ ոքի.
Եւ Վշտասպեանն իր վշտին մէջ հրակէզ,
Ահա ձեռքերն երկարեր է դէպի մեզ:

– Արքայից արքայ երբեմն Իրանի,
Տիեզերքն ողջոյն կու տար երանի.

digitised by A.R.A.R.@

Ցաղք սուրիս տակէն ազգերը անցան
Հրոյ հոտի պէս շփոթ ու անմայն։
Ես, արքաները լծեցի կառիս,
Որ խոնարհ, ծունկի ծկան իմ առջիս.
Աշխարհներու ես միակ տէրը, Աստուած,
Ամէն բարիք ինձ համար էր հաստատած,
Գեղեցիկն ի՛մն էր եւ ես՝ գեղեցկին,
Կերդնուր անունովս երկիր եւ երկին.
Ես, խմաստութեան արփի շողափայլ
Կեանքի բարձունքին ելայ քայլ առ քայլ,
Գահիս յար ներման պերճ արշալոյսին.
Ձերդ զոհաբ շողաց ոտքերուս փոշին,
Այժմ, ո՞վ հրաշք, որ վերէն կ'անցնիս,
Կեանքի խորհուրդին հասա՛ւ ըրէ զիս.
Ըսէ՛ թէ ո՞ւր են գայիսոն ու գահ,
Բանակներս ոգեսյն, անկուն, անա՛հ,
Իրանը՝ իբրեւ առիւծ ոսկեքաշ.
Սուրս՝ արիութեան պողպատէն անմաշ.
Ըսէ՛, թէ ինչո՞ւ աշխարհէն համայն,
Կը մնայ ինծի այս ժայռը միայն
Ուր՝ արծիւներուն եղեր եմ ընկեր,
Ու անզօրութեանս մէջ արտասուեր...։
Այս քարովն է որ տակաւին կ'ապրիմ,
Կը տեւէ ա՛ն ալ, անունովս իմ...։ –

– Մեծութիւն, փառք ու գահերն, ո՛վ թշուառ,
Ժամանակի քուրային մէջ հրաւառ,
Կը չքանան ինչպէս մշուշը անզօր՝
Սէրն ու բարին թէ չեն լծակը անոր։
Հզօրանքին կը մնայ շէնքն անխարդախ
Եթէ ունի արդարութիւնը շաղախ.
Մեծը ա՛ն է, որ բուք պողպատն իր սուրին
Կը յեսանէ արդարութեան յեսանին։
Լսեց Դարեհ. պահ մը կեցաւ մտախոհ,
Ու ծանրաքայլ վերադարձաւ դէպի հող...։

Փառքը, փառքը երիվար մ'է անհանդարտ՝
Որուն բերնին հա՛րկ է լկամը երկաթ.
Իր հմայքին եթէ եղար անձնատուր,
Անդունդներէն կը լսուի ձայնը դ տխուր.
Քաղցր գինի՛ն է՝ զոր կ'ըմպես շիթ առ շիթ
Ու կը յորդի երանութեամբ մը հոգիդ.
Մինչ կը կարծես ըլլալ անոր իշխան, տէր,
Գերի՛ մըն ես միայն այլեւոյս անտէր։
Իմաստուն այն՝ որ նստած խեռ ձին փառքին՝
Ասպանդակի՛ն է ոտքն ու սանձը՝ ձեռքին.
Ու բաժակն ալ զոր կը քամէ հեշտանքով
Գիտէ թէ թոյնն ու մեղրն են քովէ քով։

digitised by A.R.A.R.@

Պիհեսբունը փլատակուած փառքերու
Կոթող մըն է պորտին վրայ դարերու.
Զրհասկցուած փառքերու մեծ մարտադաշտ
Ուր կը կռուին Զէուս, Մուհամէտ, Զրադաշտ:
Ու Դարեհի սեպագիր սէգ պատգամի
Ոտին, արաբն իր սուրով կը պատգամի,
Որուն հանգոյց, նուրբ գիրերուն ընդմէջէն
Դեռ կը նայի *ալֆա-փեստա* մը հեղէն...:
Պատմութիւնն ալ ինքնակոչ մեծ դատաւոր,
Հոն կը խօսի իր վճիռովն ահաւոր:
Եւ ժայռն ուրկէ անցաւ Իրան տյրուձին.
Հեզ էշերու կարաւաններն արդ կ'անցնին:
Լռեր են գառ շեփորները ռազմական.
Լուսնի լուսուն մերթ բուին ողբն է գուժական:
Դարե՛ր, դարե՛ր, խորհուրդները ձեր մըթին
Պիտի բանաք ե՞րբ արեւի ջինջ լոյսին:
Սուտ փառքերը, իրենց դէմքովն հոպիտի,
Գեղեցկութիւնն՝ որ մանուկի պէս ժպտի.
Աստուածները՝ որ երկինքէն իջնեն վար,
Լոյս Աստուած մը ծընի քառսն այս խաւար...:

Պեգա՛ս, ահա՛ հօրնապարիսպ եկրատանն,
Իրանի պերճ արքաներու շէն ոստան,
Ու ձայներն, որ կը հասնին մեր ականջին,
Կը խրխնջէ Տիգրանի քաջ այրուձին,
Մեծ արքային՝ որ ամէնէն աւելի
Ճանչցաւ բախտին օրէնքները անյեղլի.
Անոր հիւսած դափնիները, սուլ, ոժան,
Որոգայթները՝ մութին մէջ դըրուժան.
Ան տեսաւ թէ ինչպէս ասպը իր սուրին
Ալ կը նայի մէջէն մութ ու մրոայլին.
Զի իբր անշեղ օրէնք մահուան ու կեանքի,
Ամէն բարձունք օր մը հարկ է խոնարհի:

Ահա՛, ահա՛ Պերսեպոլիսն աւերակ
Որ կը տրտմի մելամաղձոտ լուսնին տակ:
Հին ոստանը պալատներով լուսաշող,
Մեհեանններով, անմահութեան լոյս կոթող:
Կիւրո՛սն ահա, երբեմն հզօր, յաղթական,
Որ կը փախչի ուրուականի մը նման:
Աղեքսանդրը՝ որ գերդ հեղեղ մը լոյսի
Արեւմուտքէն դէպ՝ արեւելք կը հոսի:
Թագաւորներ իրենց գահէն կ'իջնեն վար,
Սին մեծութեանց կ'ելլան ասպղերը խաւար:
Անհո՛ւն աշխարհ մը կը բանայ դռներն իր,
Հելլեսպոնտէն եփրատ, Նեղոս ու Գաշմիր.
Հնդիկ ծովին մինչեւ ջուրերը ակատ.
Կոյս Բակտրիան՝ մինչեւ սիրտը Սրմըրդանտ:

digitised by A.R.A.R.@

Եւ ո՞վ հեգնանք պարզութիւնը հեղլէնին
Հոս կը հագնի պարսիկ փարփառ ծիրանին,
Եւ ոսկեշող գահին վրայ կիւրոսի,
Մեծ զինուորը Աստուած մ'իբրեւ կը բազմի:
Ալ ոտքերուն ունի կարմիր հողաթափ,
Ձէն ու զարդին շքեղութիւնն է անչափ.
Ալ կ'ըղձայ որ արքայական պերճ գահին,
Զօրավարներն իր ծնկաչոք խոնարհին.
Որ համբուրեն իր քղանցը ոսկեհիւս,
Աստուածութիւնն իր տաղերգեն ցայգ ու լոյս:
Մինչ կը լռայ ինք ծովին մէջ պերճանքի.
Իր կամքովը հազար գիտուն վեհոգի,
Կը հաւաքեն բիւր, բիւր ծաղիկ ու թուփեր,
Արիստոտէլ իր ուսուցչին ի նըւէր,
Լոյս հանճարին՝ որ ծաղիկին ու ծիլին
Մէջ պիտ' կարդայ մութ առեղծուածն աշխարհին:
Այսպէս, կ'ելլայ Ագեքսանդրը հոյաշէն
Կամուրջ՝ մ'որուն վրայ գիրար կ'ողջունեն
Երկու աշխարհ, երկու հրգոր աստուածներ,
Մտածող միտքն՝ ու երա՞զը անընտելեր:
Եւ Իրանի բերդոցները, դարէ դար,
Կ'երգեն անոր փառքին հեքիաթն անդադար...:

Պեզա՛ս, Պեզա՛ս, մըթին դարերը կ'անցնին
Եւ Իրանն է լուսեղ օրուան մը սեմին,
Նոր Աստուած մը կ'որոնէ ու նոր տաճար.
Գահն է բազմեր անմիտ արքայ մը գուճար.
Կեանքը կ'ելլայ կարծես գիշեր մը մըթին,
Կը կանգնի դէմն Եփրատը սուրբ ձեռքին,
Գահ, գայիսոն կ'ելլան գետնին հաւասար.
Հայ հերոսին կը փայլի աստղը պայծառ:
Բախտն է սակայն անզաւոր ու դաւանան,
Ան ալ կ'իյնար դափնիներուն իր վրան:
Եւ մշուշէն գինուոր մը՝ քաջը Ռիզան
Շահինշահի կը բազմի գահը դաժան.
Եւ Դարեհի մահանին հետ կ'ընդունի
Տոհմիկ անունն իր պապերուն՝ Փէհլէվի,
Կը ցոլայ շող մը երկինքին վրայ խաւար,
Կեանքն է յըղի՝ նոր երկունքի մը համար:

♣

Պեզա՛ս, քոզ որ մեծութիւնները սուրին
Իրենց անյայտ դամբանններուն մէջ հանգչին.
Կեանքը միայն կռիւ մը չէ վեհապառ,
Աշխարհ մը կայ՝ ուր կ'երգեն մարդ ու ծիծառ.
Ու տե՛ս, ահա մեր առջեւը կը բացուի
Դրախտ մը, երազ հուրիներով սեւաչուի.
Վարդաստաններ՝ պլպուլներով սիրահար,

digitised by A.R.A.R.@

Ջինջ գետակներ՝ որ կ'ոստոստեն լեռնէն վար.
Պուրակներու ծոցը ցայտող շատրուան՝
Ուր կապեր է արփին եօթ գոյն ծիածան.
Սրինգներ՝ որ կարօտով կը կողկողին,
Զմրուխտ մարգեր՝ հովիւներու անկողին:
Իմաստուններն հո՛ն են, կեանքէն ծերացած,
Հոն՝ պուէտները անուրջով վերացած.
Ամէն հասուն պտուղ մըն է ծառի՛ն վրայ.
Գեղեցկութեան ցօղն աստղերէն կը տեղայ.
Եւ սիրտերը որ կը յորդին սարսուռով,
Սոխակին պէ՛ս են, վարդերուն վրայ գինով:
Բնութիւնը, քերթողներուն իբր ընկեր,
Կը յօրինէ կեանքի վսեմ իր երգեր.
Ու վիշտերն՝ որ հոգւոյն խորը կը ծաղկին՝
Անհետ կ'ելլան ծոցը գինւոյ բաժակին:
Ո՜ այգինե՛ր, հնձանններով առլցուն,
Որ կ'ընէք սիրտը մեր կեանքով ակաղձուն.
Որ թէ կու տաք թեւատ, տրտո՜ւմ երազին,
Կը թրթռաք քնքոյշ սրտին մէջ *սազին*.
Ո՜ այգինե՛ր, զմրուխտ տերեւ այգիներ
Որով Բագոսն երբեմն կը պսակուէր,
Կեանքը կ'ելլար համակ խնջոյք ու խրախ.
Կը պարէին երբ աստուածներն ալ ուրախ:
Ո՜վ սիրոյ մեծ քրմապետներն ու գերին,
Ձեր ստուերներն իմաստուն ուր դեգերին.
Սաբբինային ո՞ր շուքին տակ կը ննջէք,
Ո՞ր բաժակին հիմա դուք մեղրը կ'ըմպէք.
Սիրոյ դողով ձեր բոց շրթունքը հիմա
Ո՞ր հուրիին շրթներուն վրայ կը դողայ...:

– Կը խոռվէ ո՞վ այսօր մեր մրափը երջանիկ,
Ուրկէ՞ ձայնը այս անուշ, ըսէ՛ք երկիր ու երկինք.
Մենք մշակները արդար, կեանքի պայծառ պարտէզին,
Նեկտար, ամբրոս եղան մեզ միայն սէրը ու գինին.
Բնակիչները յաւերժ այս երկրային դրախտին,
Մեզ անմահին կտակեց հրաշք անիւը բախտին.
Ունկնդրեցինք աշխարհի նուագները մենք համրուն,
Կոյսերու սիրտը նանչցանք իբրեւ նուագ գերագոյն.
Աշխարհը մե՛ր եղաւ ու մենք եղանք աշխարհին,
Այսպէս բրած էր կտակ իմաստութեան օրենքն հին.
Օմար Խայեամ կոչուեցանք, *Սաատի* ու *Ֆիրտուսի*,
Տիեզերքը բովանդակ մեր սրտին մէջ կը խօսի.
Մենք կոչուեցանք եւ *Հաֆըզ* ու նոյնպէ՛ս եւ *Նիզամի*,
Գեղեցկութիւնն ու սէրն են մեր ազգիւրը յուզումի:
Կը խօսին մեզ պուէտները խանդավառ,
Ալ երա՞զ են անոնք միայն, երի՛վար.
Կու գայ ձայնը վրսեմ *Օմար Խայեամի*
Ունկնդրենք բարբառն անոնց մի առ մի:

digitised by A.R.A.R.@

– Խրատանի հոտաւէտ ծաղիկը գիս կոչեցին
Ու սիրեցի անրջել աստղերուն տակ առանձին.
Գիրքը կեանքի խորհուրդին ես սերտեցի ուշադիր,
Երկինքի սիրտը խորին խուզարկեցի անձանձիր.
Թեւերուն խաղը մոգիչ ինծի զաղտնիք չունեցաւ,
Ու խրատատ՞ոյզ յաղացի կրօնքի ծովին մէջ անբաւ.
Լուրանը գիրքերս եղաւ, մուք հանգոյցը պերճ խօսքի,
Բայց հեքեանոս արեան բոցն երակներէս կը հոսի.
Գտաւ սիրտերս սփոփանք, սիրոյ գիրկին մէջ միայն,
Ջարն ու բարին ալ կարծես բառախաղ մ'է ընդունայն:
Սուրբերուն ես ձգեցի դրբախտները ապառիկ,
Նախընտրելով ջինջ առուի մը եզերքը հանդարտիկ
Կարմիր բաժակ մը գինի հուրիէ մը արփաթեւ՝
Որ գինիին պիտ՝ խառնէր իր սրտին նուռն արդարեւ:

– Վարդաստանները են անո՞ւշ, արեւաշող *Շիրազի*,
Շրջեց դրբախտ երկրային, բուրումներու, երազի,
Մանուկ էի, ձեռքերս զարդարուեցան վարդերով,
Ու ծերացայ՝ միշտ լեցուն սրտիս բաժակը սէրով:
Սիրտս ու հոգիս պլպուլին հետ *կաղէլներ* երգեցին
Կուրծքիս վրայ սարսրուց միշտ հուրի մը լուսածին.
Ըսին թէ, կեանքն է ինքնին տառապանքի մի հովիտ,
Մինչ բաժակ մը գինիով ան դարձաւ լո՞յս ու ժպիտ.
Կը տրտնջամ երբէ՞ ես ալ, իմ կեանքիս դէմ անձկաւ,
Անոր համար է, որ նա բոպէի մը պէ՞ս անցաւ.
Կիւլիստանը կը բուրէ ծաղիկներով անհամար,
Ծեր *Սաատին* կ'երգէ հոն, կոյսերու հի՞ն սիրահար...:

– *Հաֆիզն* եմ ես, որ սրտին մէջը հազա՞ր երգ ունի.
Վիշտ ու ցաւեր անհամար, գերդ վիրաւոր թռչունի.
Մէկ ձեռքովս կառչեր եմ բարիքներուն աշխարհի,
Մինչ միւսը՝ դէպ երկինք խորհուրդի մը կ'երկարի:
Արցունք, ժպիտ այս հոգին վրայ ընկե՞ր են իրար,
Ջարն՝ ու բարին ալ կարծես զանազանելն է դժուար.
Քաղցր ու չեղի բաժակն այս ըմպելը հարկ է եթէ,
Պարտէիս հիլու ես կ'երկնեմ *կաղէլներ* ու *գասիտէ*,

– Գեղեցկութիւնն երգեցի ես սէրերուն ու սուտին.
Երգեցի սէրը՝ երազ. *Հէյլայինն* ու *Մէճնունին*,
Երբ ուզեցի որոնել կապն հանճարին ու բախտին,
Անմահացաւ գրչիս տակ Մեծն *Իսկէնտէրի Բումին*:
Փառքիս համար երկու ազգ եղեր են արդ թշնամի.
Երկինքն իր սուրբ կնիքով, ճակտիս կնքեց՝ *Նիզամի*,

– Տարիներեցի յաղթանակ, գեղեցկութիւն, գանձ ու գահ,
Պայծառացան գրչիս տակ, մեր յուղթ պապերը անմահ.
Հերոսի սուրն արիւնոտ ես սրբեցի վարդերով,
Օրօրեցի նահատակն՝ իմ հոգեթով երգերով.

digitised by A.R.A.R.@

Երգեցի փառքն Իրանի, առասպելին թեւերով,
Մեր լեռնե՛ր-ը երգեցի՝ քաջքերով ու դեւերով։
Եթէ կանգնեցան դէմ դէմի, հրզօր *Իրանն* ու *Թուրան*,
Անմահութե՛ան գլուխ մին եւ միւսը՝ մահուան.
Եւ երբեմն ալ, յոգնած շեփորներէ ռազմական,
Ցաղերուս մէջ խօսեցաւ բընութիւնը մոգական։
Դարերու կեանքն երգեցի, հանոյքը եւ տառապանք,
Ատելութեան նշաւակ ըրի բանութիւնն.ու կապանք։
Կտակեցի աշխարհին *Շահ-Նամէ* երգըս շքեղ,
Արքայի մը ի նուէր՝ եւ գեղջուկի՛ն մեր քիւրեղ։
Ցեղըս հրզօր, դարաւոր, հոգիին մէջ կը խօսի.
Աստուածընտիր ես քերթող եւ անունը՝ *Ֆիրդուսի*։

Ալ լռեցին բոլոր երգերը վրանիս.
Սուրա՛, սուրա՛ երիվարքս արիանիմ.
Ջի սիրտեր կան այս երկինքին տակ լազուր
Ուր կը յուսան կեանքէն իմաստ մը ի զուր...։

❦

Ահա՛ տեսա՛, երիվարքս բոցաթեւ,
Հիւղերու մէջ եւ դաշտերու վրայ արեւ,
Հանքերու գիրկն ու զարծատան աղմուկին.
Խոնարհ մարդիկ, մանուկ ու ծեր, այր ու կին
Իրենց աչքին լոյսն ու բազուկը արի,
Ի ըսպաս են դրբեր հացի մը գարի.
Անոնց ճակտէն յանախ քրտինքը գոհար
Կը հոսի ծոցը ակօսի մը յատուտ.
Եւ հանքէն՝ որ կը բանայ սիրտը ոսկի,
Անօթութիւնն է մերթ, որ կը սողոսկի.
Մինչ մեծատունն իր պալատի՛ն մէջ մարմար,
Շահ ու զենին կ'ընէ հաշիւը ճարտար։
Աղջնակներ տես, մաշած մատներով
Գորգ կը հիւսեն տրտմաթախիծ երգերով.
Եւ արուեստը ծաղիկի պէս կը ծաղկի
Նուրբ թելերու, գոյնի խաղովն հրաշքի։
Հարուստին տունն անոնց փայլով կը շողայ,
Աշխատողն է չոր փսիաթի մը վրայ։
Ահա՛ ճակատ մ'իմաստուն, ձեռք մը ճրկուն,
Խոնարհներ է մազաղաթի մը խոհուն.
Կը նկարէ մեծութիւններ թագակիր,
Ծիածանի հօթը գոյնով թռչնագիր.
Կոյսեր՝ յայրատ աչքներով, սէ՞ր հատակ,
Եղեգի, բազէ եւ երփնագեղ սիրամարգ.
Եւ արուեստը հրաշագեղ կը փայլի,
Մութ դարերու արտէն գերդ բաց ծիրանի.
Լռութեան մէջ հանճարն այսպէ՞ս է երկներ,
Ու պատմութիւնն անունն իսկ մերթ չի՞ յիշեր...։
Բարկ արեւի՛ն տակ կը փռուի Ապատան,

digitised by A.R.A.R.@

Աշխատանքը ուր փեթակի մ'է նրման.
Թի՜ւր թիւրերը իրրեւ մեղու ջանասէր
Կը քրտնին երկինքի մը տակ անսէր.
Ու կը քամեն յամառ ըստինքը հողին,
Կը հասի յորդ, մուր ալիքը քարիւղին.
Ուժի, լոյսի, գանձի ակունք յորդազեղ՝
Որուն կռմքը կ'իշխէ հիմա ամէ'ն տեղ:
Տաք քրտինքը աշխատաւոր Իրանի,
Հոս կը փոխուի ոսկիի ու թումանի.
Մինչ ոսկիի դէզերուն վրայ կը կանգնի
Աշխատաւորն հիւծած, մերկ ու անօթի:
Բանուորնե'րը ահա, իւղոտ ու մուրոտ,
Այսօր՝ ըմբոստ, երէկ՝ իրրեւ հոլու հօտ,
Պայքարի մէջ ընդդէմ հողի'ն, երկաթին,
Իրենց կեանքին վրայ իշխող մուր բախտին.
Հազարնե'րը ահա, խլրտոյտ, զայրագին,
Ճակատագրին դէմը ոտքի' են կրկին.
Ոտքի՝ ընդդէմ ամենազօր տէրերուն,
Ընդդէմ՝ բոլոր կեղծ ու պատիր սէրերուն:
Ալ չե'ն ճանչնար Աստուածները անխտիր,
Սուրբ վայրերէն ոչ կուռքերն են տարագիր,
Ալ գիտեն թէ, ամէն ուժէ գերիվեր,
Իրենց կամքն ու բազուկը կայ անվեհեր.
Հոգին սիրով, արդարութեամբ առլցուն
Եղբայրութեան նոր գարունով մը ցնծուն:
Արեւին տակ թափօրն իրենց բազմամբոխ.
Կը պատգամէ մեզ իր կամքը անփոփոխ.
Իր երազը՝ սիրոյ կրակով կայծկլտուն.
Ցոյները՝ իր, աստղերու պէս ժպտուն:
Ան գիտէ թէ, կասպոյտին վրայ Իրանի,
Նոր արեւակ պիտի շողայ ու փայլի:
Մեզ կ'ոգեւորեն, Պեզա'ս, դաշտն ու անապատ,
Ժողովո'ւրդն է՝ որ կը կանչէ *ազատություն*...

Պեզա'ս, Պեզա'ս, հարաւի շունչը ահա
Քու հրավառ էութեանդդ մէջ կ'եռայ.
Ահա՛ սիրոյ հեքիաթի մ'հետ առանձին,
Հաժոռ նստեր, կը խոկայ Գասրը – Շիրին.
Մեր հոտի'ն են հիմա լեռներն Իրանի.
Բերրի դաշտեր, *կիւլիստան*ներ գեղանի.
Հոգն հնօրեայ՝ որուն ընդերքը թաքուն.
Նոր երկունքի մը ցաւերովն է անքուն:
Հորիզոնին վրայ հեռո՛ւն, գերդ երազ,
Կը օրօրուի արմաւենին հեզանազ.
Կ'իջնէ Տիգրիսը երգելով լեռներէն,
Նոր աշխարհ մը ահա, աւե՛ր Նինիվէն...:

ԱՐՄԷՆ ՍԵՒԱՆ

digitised by A.R.A.R.@

Կ. ՍԱՍՈՒՆԻ

ՍԱՐԵՐՈՒ ԱՍԼԱՆԸ

Ը.

ՎԱՀԱՆԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ

Մայիսեան ջերմ արեւը երկիրը ողողած էր, ծաղիկներու բուրմունք կար մթնոլորտին մէջ, ու ծառերը երկունքով կը թրթռային։

Սարհատ թիկունքը ժայռին՝ երկնցած էր Սուրբ Յովհաննու խիտ ու մթաստուեր անտառին մէջ, մեծդի կաղնի մը իր դիլուն վերեւ։

Ֆետայիներու ստուար խումբ մը կար հետը։ Անոնք կը սպասէին Անդրանիկէն եւ Մուշէն լուր մը, նոր գործողութիւններու վերսկսելու համար։

Վանքի հովիւ Մոսէն միայն տեղեկութիւն ունէր, որ խումբը ապաստանած էր այդ շրջանը։

Թրքական վաշտերը վանքը լեցուած էին, ու անոնց ճամբան բաց էր դէպի Մուշ եւ Սասուն։ Վանքերը որ ապաստանարան էին Ֆետայիներուն, թրքական բերդեր դարձած էին։ Հայ անմնուրաց մարտիկները ստիպուած էին ապաստան գտնել ժայռերուն կամ անանցանելի անտառներուն մէջ։

Մոսէն անմնուրացներուն հաւատարիմ պահակն էր, լրատուն, զէնքերու պահեստապահը, ու վանքի պարիսպներէն դուրս ազատ կեանք մը կը վարէր հօտերուն հետ, շուներով շրջապատուած, առանց ուշադրութիւն դրաւելու։ Մոսէն իր ընելիքը գիտցող փորձառու մարդն էր։ Ու երբ Ֆետայի Փեղարցի Մանուկը զայն անտառ կանչեց՝ Սարհատին ներկայանալու, հօտերը թողուց երկու աղեկներու խնամքին, ու անտառի խորքը մտաւ խոշոր արջի մը երերանքով։

– Բարով տեսանք ձեզ, պարո՛ն Գէորգ, փա՛ռք Աստծոյ, կրակէն ողջ դուրս եկաք։

Հովուական մեծ ճոկանը վար առաւ ուսէն, ու ծնօտը ճոկանին՝ Սարհատի հրամանին սպասեց։

– Մոսո՛, բարին ու չարը իրար խառնուած է։ Այսօր կանք, վաղը չկանք։ Բայց կոիւը կը շարունակուի ու մենք փամփուշտի պէտք ունինք, ինչ կ'ընես ըրէ, մեր տղաներէն ոմանք քեզի պէտք օգնեն, փամփուշտները փոխադրեցէք հոս։

– Գլխուս վրայ, պարո՛ն Գէորգ, յեղափոխութեան հրամանն է։

digitised by A.R.A.R.@

Շունները շատ են վանքի շուրջն ու բոլորը։ Բայց պահեսաը անոնցմէ հեռու է։ Տղաքը որ հետս պիտի գան, անտառի եզերքը պիտի սպասեն, կապոցները անոնց կը յանձնեմ։

Երբ Մոսօն քանի մը երիտասարդներու հետ ճամբան բռնեց, Սարհատ անոր ետեւէն ձայնեց.

– Մոսօ՛, տղաքը սոված են, ճաբ մըն ալ այդ մասին մտածէ։

– Գլխուս վրայ, պարո՛ն Գէորգ, այդ ի՞նչ խօսք է, մանանայ պիտի չիջնէ երկինքէն...

Մոսոյի մրթմրթոցը կը շարունակուէր, երբ անոնք արդէն կորսուած էին խիտ անտառին մէջ։

Մոսօն վանքի խոյերէն մէկը մորթեց ու պատուիրեց անտեսներուն.

– Վանահայրը հիւրեր ունի, անմիջապէս միսը եփեցէ՛ք, հա՛ց պատրաստեցէք, պանիրն ալ առատ ըլլայ։

Երբ տնտեսներն ու անտեսուհիները շտապով գործի սկսան, Մոսօն արագ քայլերով վերադարձաւ զէնքերու պահեստը։

Սարհատ անհամբեր կը սպասէր Մոսոյի վերադարձին։

Երկու ժամ անցած էր, երբ խիտ անտառին մէջ, թուփերու եւ ճիւղերու ձայնը լսուեցաւ։

Սարհատ ոտքի ցատկեց։ Անոր հետեւեցան իր շուրջը գտնուող Ֆետայիները։ Մոսօն, խմբապետի վեհութեամբ, տղոց առջեւէն կը քալէր, բոլորն ալ ծրարներով բեռնաւորուած։ Փամփուշտներու առատ պահեստ մը կը դիզուէր Սարհատի ոտքերուն առջեւ։ Բացի պահակներէն որ վերի ժայռերուն ապաստանած՝ հսկողութիւն կը կատարէին, խումբեր ու խմբապետները, սոված գայլերու պէս փամփուշտներուն շուրջ համախմբուեցան, մոռցած անօթութիւնը, յոգնութիւնը ու ամէն վտանգ։ ... Սոված էին փամփուշտի պակասէն, ամէնէն մեծ սովը Ֆետայիին։

Մոսօն խօսքը ուղղեց Սարհատին։

– Հրաման տո՛ւր որ մեկնիմ, գո՛րծ կայ։ Ձեր ուտելիքը չուտով պիտի հասնի։

– Շէ՛ն մնաս, Մոսօ՛, մենք փամփուշտներով կշտացած ենք։ Մնացածը Աստուած ողորմած է։

Մոսօն արդէն կորսուած էր անտառին մէջ։

Զօրքերուն ծանօթ էր Մոսօն, հովուական ճոկանով, արջայլին կերպարանքով։ Զինուորները ուշադրութիւն չդարձուցին անոր, ու ան ուղղակի մտաւ վանահօր սենեակը։ Վանահայրը յանկարծակի եկաւ։

– Ի՞նչ կայ, Մոսօ՛, խեր ըլլայ։

– Փա՛ռք Աստծոյ, հայր Սուրբ, ամէն բան լաւ է։

Շուրջը նայեցաւ։

– Խօսէ, Մոսօ՛, բան մը ունիս ըսելիք, մարդ չկայ քեզ լսող։

– Հա՛յր Սուրբ, տղաքը անտառն են, քանի մը խումբերով, կերակուր պէտք է անոնց։

Վանահայր Մկրտիչ վարդապետը դող եկաւ, մօրուքը շփեց, մտմըտաց, ու ապա՝ դառնալով Մոսոյին։

Աստուած տայ, որ վանքը փորձանքի մը չհանդիպի։ Գնա՛, ոչխար մորթէ՛, հաշ պատրաստէ՛, ու իմ անունով խմբապետին խնդրէ որ վանքը չվտանգեն։ Թրքական երկու վաշտ կայ հոս...

– Հա՛յր Սուրբ, խմբապետը Գէորգ Զաւուշն է։

Մկրտիչ վարդապետը մոայլեցաւ ու դող մը բռնեց անոր սիրտը։

digitised by A.R.A.R.@

Տարիներ առաջ Սարհատը վշտացած էր իրմէ։ Գահ մը լռելէ ետք, գլուխը վերցուց։

– Մոսո՛, օրհնեալ ըլլաս, անձնուէրները կերակրէ ու ինչ որ ուզեն՝ տրամադրէ անոնց։ Վանքը վտանգելու մասին խօսք մի բանար։ Անոնք հարկաւ ներկայ պարագաները նկատի կ'առնեն։

Մոսօն թեթեւ սրտով հեռացաւ վանքէն։

Ծառերու մթաստուերին մէջ կարծես ինչոյթի սեղան բացուած էր։ Միսը առատ, հացն ու պանիրը կողքին։ Մոսօն թեթեւաշարժ խումբ-խումբ կ'անցնէր, անձնուրացները կերակրելու։

Ընթրիքը վերջացած էր։ Ֆետայիները կուշտ էին, ու փոմփչտակները՝ լեցուն։ Ծառերուն թիկնած, ժայռերու պէս ծանր՝ երկարած էին բոլորն ալ։ Գահակները փոխուեցան, ապահով դիրք մը անցնելու համար։

Մոսօն կորսուած էր մութին մէջ։ Ժամ մը վերջ, վանքին հշը բեւեցած, առատ պաշար մը կը յանձնէր Սարհատին։

– Ինչ կ'ըլլայ, ինչ չըլլար, պարո՛ն Գէորգ, այս պաշարն ալ ձեռքի տակ ունեցէք։ Եթէ հոս մնաք, անտառին եղերքէն տղաքը թող նշան մը ընեն ինձ։

– Շէն մնաս, Մոսո՛, այս երեկոյ կուշտ ենք, վաղն ալ Աստուած ողորմած է։ Բան մը նշմարես, լուր մը հասցուր մեզի։

Խումբը մութ անտառին մէջ քանի մը օր հանգիստ պիտի ընէր։

⁂

Մշոյ դաշտի զանազան շրջաններու մէջ դէպքերը իրարու կը յաջորդէին, ու Ֆետայիները դէպքէն անմիջապէս ետք, հեռաւոր շրջան մը կ'ապաստանէին։ Թրքական բանակը, վաշտերու բաժնուած, զանազան ուղղութեամբ, անընդհատ շարժումի մէջ էր։ Հեւ ի հեւ կը հասնէին հոն, ուր ընդհարում եղած էր, եւ սակայն, Ֆետայիները արդէն անհետացած էին։

Մայիսի տաք օրերէն մէկն էր, երբ Սուրբ Յովհաննու ընդարձակ բակին մէջ երեւցաւ Զարչի Սիմոն, իր իշուկի ետեւէն։ Սիմոն ծանօթ էր բոլոր գիւղերուն որպէս մանրավաճառ։ Ոստիկաններն ու ժանտարմաները արգահատանքով կը նայէին ծուռ վիզ Սիմոնին, սակայն ինչ որ կ'առնէին անկէ, վճարումը կը ձգէին յաւիտենական ապագային։ Սիմոն ամէն տեղ մտնելու արտօնութիւնն ունէր, կարծես իր ծուռ վիզին, արգահատելի կերպարանքին ապաւինած։ Ոչ մէկ դերասան այն խեղճ կերպարը պիտի կրնար բեմադրել, ինչ որ Սիմոն բրած էր տարիներէ ի վեր։ Յեղափոխական մարմիններու առոյգ տեղեկատուն էր Սիմոն, ու մանաւանդ՝ անազատի մահափորձեր կատարողը, առանց դոյզն վտանգի ենթարկելու ընկերներն ու մարմինները։ Պատասխանատու քանի մը ղեկավարները ժիայն գիտէին այս պարագան, ու երբ անհրաժեշտ ըլլար խորհրդաւոր հարուածի մը իրագործումը, Սիմոնը կու գար ցուցակին գլուխը։

Սիմոնի երեւումը, վանքի բակը ծիծաղաշարժ բեմադրութեան մը կը վերածէր։ Զինուորները խնդացին խեղճ իշուկին ու ծուռ Սիմոնին ի տես։

Երիտասարդ վարդապետ մը անոր մօտեցաւ, ինքն ալ թուրք զինուորներուն հետ ծիծաղեցաւ ու հարցուց.

– Տնաշէ՛ն Սիմոն, առուծախի ատե՞նը գտար։ Կը կարծե՞ս թէ այս

digitised by A.R.A.R.@

զինուորներէն բան մը պիտի շահիս։ Առոնք ինչ որ առնեն, գնաց աւարի հաշուին։

– Հա՛յր Սուրբ, առեւտուրի յոյս չունիմ, կը խնդրեմ թոյլ տաք որ բակին մէկ անկիւնը այս գիշերն անցնեմ։

– Եթէ գիշերը հոս մնաս, – բաւ. վարդապետը, – թէ՛ դուն թէ ի–շուկը կը կոխկռտուիք այս անիրաւներէն։ Գնա՛ տնտեսուն, պարիսպէն դուրս եւ այս գիշեր անցուր։

Ընկերացաւ Սիմոնին ու զինուորներու ներկայութեան, ցոյց տուաւ տնտեսան ուղղութիւնը։ Սիմոն ու իշուկը երերալով ճամբան բռնեցին, որմէ ան անցած էր հազար անգամ։

Գիշերային խաղաղութիւն կար ամէն կողմ։ Մեղմ հով մը անտառը տերեւներուն մրմունջով կը լեցնէր։ Ֆետայիները ընթրիքէն ետք, երկարած էին ժայռերու եւ ծառերու կողքին։ Սարհատ լուրերու կը սպասէր. ու անոր մտածումներուն մէջ անցած դէպքերը իրարու կը յաջորդէին դուռնաւոր ժապաւէնի մը պէս։

Սարհատ ուշադրութեամբ գէմքը դարձուց անտառի այն կողմը, ուրկէ ճիւղերուն չխրտոցը կը հասնէր իր ականջին։ Մտածումներու թելը կարեցաւ, ու ինքը, ծառերէն անդին խաւարը կը խուզարկէր։ Քանի մը մարտիկներ ոտքի ցատկեցին, առաջ անցան ու դիրք գրաւեցին ծառերու բուներուն ետեւ։ Տակաւին ազդարարութիւն չեղած, Մոսոյի ձայնը լսուեցաւ.

– Ես եմ, տղա՛ք...

Ու քանի մը վայրկեանէն ծուռ–վիզ Սիմոնին հետ, ներկայացաւ Սարհատին։

– Գարո՛ն Գէորգ, Մուշէն նամակ կայ, Սիմոնը իր տեղեկութիւնները թող տայ, ես դառնամ տնտեսուն, շուրջս նայիմ մինչեւ ձեր գործը վերջանայ։

Մոսոն խօսքը վերջացուց ու անհետացաւ անտառին մէջ։

♣

Սարհատ իր ծունկին քով առած էր Սիմոնը, ու ուշադրութեամբ կը լսէր անոր զեկուցումները։ Մարտիկները առանց խօսքի հեռացած էին միւս ծառերուն տակ։ Հրամանատարը առանձին կը մնար։

Սիմոն մանրամասն, տեղնուտեղով դէպքերը պատկերացուց, Ֆետայի նահատակներու անունը տուաւ, վիրաւորներ ալ կային այս ու այն գիւղին մէջ։ Անդրանիկը իր խումբով ատեն մը Սուրբ Կարապետի անտառը ապաստանելէ ետք, Դաշտ իջած էր։ Մասունցի Ֆետայիներէն ոմանք Գոմասարի կիրճերուն մէջ կը մնային յամառօրէն։ Սպաղանաց Մակարը երդում ըրած էր հայրենի լեռներէն չբաժնուիլ։ Ան իր մարտիկներով Գոմասարի կամ Տալուորիկի կիրճերը կը չափէր։ Սայաս Գողոս եւ Տէր Փոթորիկը բազմաթիւ խումբերով Բերդակի եւ Մառնիկի բարձունքները իրենց յենարան դարձուցած էին։ Կոբիւն եւ Աւրանի Արամը քրտական ցեղախումբերու հետ ծանր ընդհարումներ ունեցած էին, եւ յաջողած էին Աւրանի եւ Տէրիկի շրջանէն հեռացնել զանոնք։ Էրզրումէն դէպի Մուշ, Վարդենիսի ճամբուն վրայ՝ զօրամասերու երթեւեկը անընդհատ էր։

digitised by A.R.A.R.@

Երբ այս տեղեկութիւնները առաւ վերջացուց, Սիմոն իր չապիկի ծալքերէն երկու նամակ յանձնեց Սարհատին։

– Պարո՛ն Գէորգ, այս նամակը Գեղամը տուաւ, ու խնդրեց որ զայն ուշադրութեամբ կարդաս։ Ըսաւ՝ թէ իրենց գրութիւնը շատ ծանր է Մուշ քաղաքին մէջ։ Այս միւս նամակը Զրեցի Տէր Մուշեղը ինձ յանձնեց որ քեզի հասցնեմ։ Ես իմ տեղեկութիւններս տուի, իմ չդիտցածներս ալ նամակներուն մէջ կը կարդաս։

Սարհատ գրպանէն հանեց մեղրամոմը ու վառեց, գլխարկը հովի դէմ բռնելով։ Հովը քանի մը անգամ մոմը մարեց, բայց Սարհատ համբերութեամբ մոմի լոյսին տակ՝ երկու նամակներուն ծանօթացաւ։

Գեղամը կը գրէր Դուրան բարձրաւանդակի կեդրոնական կոմիտէի անունով, ու ճշդիւտ կը պատկերացնէր տեղի ունեցած դէպքերը, եւ անոնց հետեւանքով շարք մը գիւղերու կրած ծանր կորուստները, ու կ'եզրակացնէր.

– «Սիրելինե՛ր, զինուորական մարմինը միջոցներ ձեռք պէտք է առնէ, խուսափելու ամէնօրեայ ընդհարումներէն։ Սասունը դատարկուելէ ետք, Մշոյ դաշտը չի կրնար ապստամբական պատերազմի բռնուիլ թուրք բանակներուն հետ, որոնք Պիթլիսէն եւ Էրզրումէն ողողած են Դաշտի հիւսիսն ու հարաւը, արեւելէն–արեւմուտքը։ Թուրք կառավարութիւնը բոլոր գրգռիչ միջոցներուն կը դիմէ, որպէսզի ապացուցանէ հոս ներկայ եղող հիւպատոսներուն, թէ հայերն են որ ամէն տեղ կռիւներ կը սարքեն եւ սպանութիւններ կը կատարեն։ Կը թելադրեն որ անմիջապէս մարտական ուժերը հեռացնէք դաշտէն դէպի լեռնամասերը, խումբերու բաժնուած, եւ եթէ կարելի է, մէկ մասը այդ խումբերուն թող անցնի Ախլաթի եւ Վանի շրջանը։ Անբուժելի ապէտ մը պիտի ըլլայ, եթէ Մշոյ դաշտի հոծ հայութիւնը կոտորածի մը հոքարկուի...»

Լուր չկար Վանի շրջանի բռնկումներէն, ու Մուրատը չէր վերադարձած տակաւին։

Երկրորդ նամակը Անդրանիկէն էր, որ սուրհանդակները ձեռքէ-ձեռք փոխանցելով, կը հասցնէին Սարհատին։ Անդրանիկի նամակը կարճ էր ու կտրուկ։ Կը յայտնէր թէ բաւական ռազմամթերք կրցած էին ձեռք ձգել, եւ թէ անհրաժեշտ էր զինուորական գործողութիւնները համադրել։

– «Սիրելի Սարհա՛տ, վերցո՛ւր խումբերը, իջի՛ր Մշոյ դաշտ եւ Աւրանի վրայով քարձրացի՛ր Տէրիկ գիւղը, ուր իրար կը գտնեմ»։

Ի՞նչ պիտի ընէին Տէրիկի բարձունքներուն վրայ, ի՞նչ պիտի որոշէին դալիք օրերուն համար, Անդրանիկի նամակէն յայտնի չէր։ Բայց Գեղամի նամակը յուսալքումի ու տեղատուութեան առաջին ազդանշաններն ունէր։

Սարհատ իր քով կանչեց Մոսօն.

– Մոսո՛, քեզ տեսնեմ, Սիմոնին հետ անմիջապէս տնտեսուն անցէք, եւ ինչ պաշար որ գտնէք, մեզի՛ հասցուցէք։

Սիմոն ու Մոսօն նետուեցան ծառերուն մէջ, հիւղերը կոտրտելով՝ ուղղուեցան տնտեսուն, պաշար հասցնելու անձնուրացներուն։

Անոնց մեկնելէն ետք, խմբապետներն ու մարտիկները շրջապատեցին Սարհատը, անոր հրահանգները լսելու համար։

– Կէս գիշերէն առաջ ճամբայ պիտի ելլենք, մեր խումբերը Աւրանի շրջապատէն անցնելով՝ Տէրիկ գիւղը պիտի բարձրանան։ Որքան կարելի

digitised by A.R.A.R.@

է ընդհարումէ խուսափեցէք։ Եթէ դէպք պատահի, ընդհարումէ եաք, խումբի բռնելիք ուղղութիւնը Տէրիկի կողմն է։ Մենք պիտի անցնինք Մուրատ գետի հունով։ Դաշտի տղաք խումբերու յառաջապահ նշանակուած են։ Անոնք գետի հունները գիտեն եւ դաշտի ծալքերուն ծանօթ են։

Սարհատ հագիւ խօսքը վերջացուցած, տղաքը իրենց դէնքերուն փարեցան եւ գոտիները ամրացուցին։ Պահակները կանչեցին ու բոլորն ալ լարուած կը սպասէին Մոսոյի երեւումին։

Ու ան չուշացաւ։ Մոսօն ու Սիմոնը, հաց ու պանիրի կապոցները Սարհատի առջեւ դրին, քրտինքի մէջ կորած։

– Պարոն Գէորգ, ինչ որ գտանք, այն բերինք։

– Շէն մնաք, չէն մնայ հայ վանքը։ Տէ՛, դուք ձեր վերադարձի համար բռնեցէք։

Խմբապետները պաշտը բաժնեցին հապճեպ, ու բռնեցին վայրէջքը դէպի Մուրատ գետը, որ Մշոյ դաշտի արեւմտեան մասը երկուքի կը բաժնէր։

⁂

Աշխատէն վեր, Տէրիկ փոքրիկ գիւղը եռուզեռի մէջ էր։ Ֆեստայիներու ընտրանին համախմբուած էր այդ փոքրիկ արծուեբոյնին մէջ, որ վերէն կը հսկէր Մշոյ դաշտին։ Գիւղին մեծն ու պզտիկը ոտքի վրայ էր ամբողջական նուիրումով ընդունելու լեռան պէս թիկնեղ անձնուրացները, որոնք հայ ժողովուրդի ազատութեան համար իրենց կեանքը դրած էին դէնքին վրայ։

Ազատութիւն կամ Մահ ազազակը կը պոռթկար ժողովուրդի հոգիէն, ու անոնք, մահ–պատերազմի այս օրհասին, իրենց տունը, ոչխարն ու հացը զոհողութեան սեղանին կը բերէին՝ հաւաքական կամեցողութեամբ։

Գիւղացիները հիացմունքով կը դիտէին զինավառ այս առիւծները, որոնք ազատութեան դրօշին տակ՝ լեռն ու դաշտը կը դղրդէին։

Հոն էր Անդրանիկ իր խումբերով, հոն բարձրացած էին Կոբիւնի գործակից Դաշտի մարտիկները, ու հոն հասած էր Սարհատը, Մշոյ դաշտի լայնքը կտրելով։

Խումբերու այս համախմբումը, տեղի ունեցաւ առանց միջադէպի։

Երբ Անդրանիկի եւ Սարհատի շուրջ հաւաքուեցան պատասխանատու խմբապետները, Անդրանիկ ժողովը բացաւ։

– Մուշէն նամակ ստացած եմ, Գէորգն ալ նոյն իմաստով նամակ ունի Գեղամէն։ Դաշտի դրութիւնը ծանր է։ Հարուածողական լայն շարժում մը ընելու համար, ռազմամթերքի պէտք ունինք, ու պիտի սպասենք Մուրատի վերադարձին։ Վահանն ալ մնաց Տալուորիկի քարանձաւին մէջ։ Զենք գիտեր թէ ի՞նչ վիճակուեցաւ անոր, եւ իրեն ընկերացող մարտիկներուն։

– Վահանը ազատելու փորձ մը պէտք է ընենք, – ըսաւ Սարհատ, – Պատասխանատու Մարմինը եւ Զինուորական Խորհուրդը մէկ տեղ ըլլալու են, որպէսզի գիտնանք մեր ընելիքը։ Անհատական եւ խմբական քաջութիւնը, համահայկական այս ազատամարտին մէջ, մեծ արժէք չունի։ Եթէ

digitised by A.R.A.R.@

ինքնագլուխ ըլլայինք, մենք մեր ճամբան կ'որոշէինք: Ես պատրաստ եմ խումբով մը վերադառնալ Սասուն, Վահանը գտնելու համար:

– Մուշի կեդրոնական Կոմիտէին դրածը յուսահատական է, – ըսաւ Անդրանիկ, – մենք նորէն լեռները պիտի ապաստանինք: Համաձայն եմ որ Գէորգը Վահանը փնտռելու ելլէ: Թրքական զօրաբանակներու մէկ մասը եւ քրտական ցեղախումբերը արդէն հեռացած են Սասունէն, ժողովուրդ չէ մնացած բարձրաբերձ լեռներուն վրայ, հօտերը կողոպտուած են ու հաց չկայ այդ ժայռերուն մէջ: Խումբերը իրենց գլխու ճարը պիտի տեսնեն, եւ օգտուին լեռներուն ստորոտը գտնուող Դաշտի գիւղերէն:

Խորհրդակցութիւնը կը շարունակուէր: Քանի մը խմբապետներ իրենց կարծիքը կը յայտնէին: Անդին, Գորիւնը լուրջ ու մտահոգ մտիկ կ'ընէր Սարհատի եւ Անդրանիկի խօսքերը, ու չգիտես ի՞նչ ներքին մղումով թիթի տակէն մրթմրթաց.

Վէրբերով լի ջան Ֆետայի
Թափառական սուն չունիմ,
Նաբիս փոխան գէնֆա եմ գրկել,
Մի տեղ հանգիստ քուն չունիմ...

– Գորի՛ւն, կատակի՞ սկսար, կարծիքդ յայտնէ, ճամբայ մը՝ ալ դուն ցոյց տուր, – ըսաւ Անդրանիկ:

– Կատակը աւելի կը յարմարի մեր ներկայ վիճակին: Լուրջ կամ կատակ, միեւնոյն է մեզի համար: Մենք ջան Ֆետայի ենք, եւ հետեւաբար՝ պիտի թափառինք եւ տեղ մը հանգիստ քուն պիտի չունենանք: Այս է այսօրուան մեզի ճակատագրուածը: Շարժական խումբերու պիտի բաժնուինք եւ որքան կարելի է, պիտի զգուշանանք դէպքեր յառաջացնել Դաշտին մէջ: Եզածը բաւական է, – եզրակացուց Գորիւն:

Անդրանիկ դարձած Սարհատին.

– Գորիւնը Հրայրի կտորն է, վճռական, բայց խոհեմ, կատակով իր լրիւ կարծիքը տուաւ: Վաղը մեր ուժերը դասաւորենք եւ միւս օր Տէրիկը կը գտարկենք, առանց փորձանք մը բերելու այս շրջանի գլխուն:

⁂

Ցունիսի առաջին օրերն էին: Մարդպետինները կանաչ կատաղութեամբ կը հեւային: Աղրիւրներու մրմունջը ջրվէժներու շառաչին մէջ կը մարէր:

Թրքական բանակաւորիին ծուխ կը բարձրանար, մշուշի մէջ առնելով Շէնիկն ու Սէմալը:

Սարհատ Աստոքի բարձունքէն կը դիտէր լեռնաշխարհը, ամայացած կայտառ իր ժողովուրդէն: Հօտեր չկային մարդպետիններուն վրայ: Ձորերուն մէջ, հովիւներուն երգի ձայներ չէր լսուեր որեւէ անկիւնէ: Մովսարը, Գէրինն ու Անտոքը կատաղի հովերուն տուած էին իրենց գագաթները:

Բնութեան վրդովմունքը վրդովեց Սարհատի սիրտը: Ժայռերու գրացնութեան մէջ, ընկերներով շրջապատուած՝ անցեալ օրերն ու յիշա-

digitised by A.R.A.R.@

տակները վերապրեցաւ, փոթորկայոյզ՝ բարձրաբերձ լեռներու նման, խոր-բապէս յուզուած, խորխորատներէն բարձրացող բնութեան ողբին պէս։

Երբ Սարհատ աչքը դարձուց ժայռերուն յենած մարտիկներուն, ա-նոնց հոգիին մէջ տեսաւ նոյն ապրումը, ինչ որ ինքն ունէր իր լուռ խոր-հրդածութեան պահուն։

– Մտածումներու մէջ կորած կ'երեւիք, տղա՛ք։ Ազատութեան արիւ-նոտ ճամբան, այս վայրերէն անցաւ, ու մենք եղանք անքուն ճամբորդը մեր ժողովուրդի հետ միասին։ Շատ բան կորսնցուցինք, բայց այս գոյա-մարտէն ետք, հայ ժողովուրդը այլեւս իր զէնքը վար պիտի չդնէ։ Մեր ժողովուրդը, օր մը, կրկին պիտի դառնայ այս լեռներն ու ձորերը, ու մենք անոր երդի ձայնը պիտի լսենք այս աղբիւրներու խխոյներուն հետ։ Տասը տարի առաջ այդպէս եղաւ ու տասը տարի յետոյ, դարձեալ կեանքը հեղեղներու պէս պիտի անցնի այս լեռներէն ու ձորերէն։ Տասը տարի ա-ռաջ այս օրերուն, իշխան Գրիգոն ապստամբութեան վերջին փամփուշտնե-րը կը պարպէր, ու ժայռերուն տակը կ'իյնար, ժայռ մըն ալ ինք։ Այսօր մենք նստած ենք իշխան Գրիգորի դիրքին մէջ։ Ապագային, ժայռերուն ա-պաստանող կորիւններ պիտի դան, ազատութեան ճայնը հնչեցնելու այս բարձունքներէն։

Սարհատի խօսքերը մարտիկներուն ներաշխարհային մտածումնե-րուն թելը կտրեց, ու անոնք Սարհատի խօսքերը կը կրկնէին հոգեւին։

Խօսքին մէջ մտաւ Մանուկ Շէնիկի, չիկահեր, դեղեցիկ ու թիկնեղ ֆեռայիին, որ ազնուական իշխանի մը հովը ունէր իր վրայ, իշխան Գրիգորի տունէն հասունցած անվեհեր մարտիկ մը.

– Գարոն Գէո՛րգ, մենք ճամբայ ելանք ազատութիւնը դտնելու, ու մեր ճամբան դէպի տուն ետ դարձ չունի։ Ահա՛ իմ դիմացն է Շէնիկը, եւ ես գիտեմ թէ երբեք հայրենի տունը պիտի չդառնամ, մինչեւ որ ազատու-թիւնը թագ չկապէ այս լեռներուն։ Մեր ճամբան պիտի քալենք, դիշեր թէ ցերեկ, ուր որ կորեցաւ կապը... տիրուն Գապը...

Մանուկին խօսքը ճակատագրական եզրակացութիւնն էր ֆեռայիին, ու բոլորը միասին՝ ժպիտով արձագանգեցին։

– ... Տիրո՛ւն Գապը...

– Մեր ճամբան այսօր դէպի Զէյթուն կ'երթայ։ Վահանը դտնելու պիտի ելլենք, – ըսաւ Սարհատ, – Ցակէն ու Մանուկ Շէնիկի այս ժայ-ռերը պիտի պահեն, ուշադրութեամբ հետեւին զօրքերու շարժումին, ու սպասեն մեր վերադարձին։ Եթէ մեր դացած ճամբաներուն վրայ վաշտեր երեւին, ձեզմէ մէկը մեզի լուր պիտի հասցնէ, որպէսզի մեր վերադարձի ճամբան գիտնանք։

Ու խումբը ճամբայ ելաւ դէպի Տալուորիկի ձորը։

Անոնք կ'անցնէին ժայռ-ժայռ, արագ եւ զգոյշ, որպէսզի քարերը անոնց ոտքերուն տակէն դէպի անդունդ չսահին, ու աչքերնին ամէն կողմ կը դառնար՝ թշնամին որոնելու։ Երբ խումբը հասաւ Կապլորի բարձունք-ներուն, հեռուէն նշմարեցին թրքական զօրքերը դիւղի եւ շրջակայքի մէջ։ Բլուրներն ու ձորերը ամայի էին, որեւէ անցորդ չերեւցաւ Տալուորիկի ճանապարհներուն վրայ։ Թրքական խուժանները հեռացած էին, ու միայն թրքական վաշտերը կը մնային քանի մը կեդրոններու մէջ։ Խուզարկու ջոկատները կ'երթեւեկէին կեդրոն-կեդրոն Շէնիկի, Սէմալի եւ Կէլիկէկու-զանի միջեւ։ Բարձրաբերձ գագաթները եւ անդնդախոր ձորերը ոտքի կո-

digitised by A.R.A.R.@

խան չէին, ու այդ դատարկութիւնը դաժան մռայլութեամբ կը հեւար երբեմնի այս չէնչող բարձունքներուն վրայ։

Սարհատ իր խումբով հասաւ այն բարձունքները, ուրկէ, վերջին դիշերը, Վահանէն բաժնուեցան իրենք։ Այդ օրէն ասդէն, ամիս ու կէս արդէն անցած էր։

Այդ դիշեր խումբը Կապլորի քարանձաւներէն մէկը ապաստանեցաւ։ Խուզարկեցին ծանօթ մի քանի թաքստոցներ, ուր պտան Թաթարն ու Թորոն, երկուքն ալ վիրաւոր։ Թորոն կէլիէկուզանցի հին մարտիկներէն էր, այս չրջանին ծակն ու ծուկերը դիտէր ու նշանաւոր երդիչ էր։ Երբ հեռաւոր լեռներէն հպոր երդի մը աւրձագանգը կը լսուէր, հոգիները կ'ըսէին-

– Թորոյի ձայնը ուշխարհ բռնած է...

Թաթարը Տալուորիկի իշխաններէն, հին մարտիկ եւ փորձառու մարդ էր։ Թորոն ու Թաթարը վէրք ստացած էին, Վահանի պաշտպանութեան ժամանակ, ու անոնք մութ քարանձաւին մէջ, մարմրած կրակին շուրջ տխուր էին ու մռայլ։

Սարհատի եւ անոնց հանդիպումը ողբերգական դրուագի մը վարագոյրը պիտի բանար, ու անոնք բոլորը, քարանձաւի քար լռութեանը մէջ, կը զգային թէ իրենց սիրտը կ'աղաղակէր։ Վերջապէս Սարհատը լռութիւնը խզեց, զսպուած յուզումով՝ երբ Վահանը չգտաւ անոնց քով.

– Այս ձորերուն մէջ ո՞վ մնաց, որո՞նք կորան։ Երկուքդ ալ լուռ էք, գլուխնիդ կախ։ Եթէ ձեր վէրքերը ծանր են, այդ մասին մտածենք։ Վաղը մենք այս վայրերը պիտի թողունք ու հեռանանք։

Երկու վիրաւորները լուռ մնացին։ Սարհատ այդ լուռ զեկուցումը աւելի ծանր գտաւ ու խօսքը ուղղեց Թորոյին.

– Թորո՛, Թաթարը խօսուլ մարդ չէ, մինչ դուն պլպուլի համբաւ ունիս, բերանդ բաց, եղածը չեղածը հասկնանք։

Թորօն առանց գլուխը վեր վերցնելու.

– Վահան փաչան գնաց Սասնոյ աշխարհէն, ի՞նչ մնաց պատմելիք, ու մենք ալ այդ կռուին մէջ այսպէս վիրաւոր ինկանք։ Երկու շաբաթէ այս քարանձաւին մէջն ենք։ Մեր վէրքերը բուժուելու վրայ են, շնորհիւ մեր ճարած թուփերուն, բայց ինչ որ տեղի ունեցաւ, մեր սիրտը կոտրեց եւ մեր ուժը ջլատեց։

– Միւս անձնուէրները ի՞նչ եղան, – հարցուց Սարհատ, որպէսզի Թորօն խօսքը չարունակէ։

– Պարո՛ն Սարհատ, ասկէ երկու շաբաթ առաջ, Վահանի կարգադրութեամբ ճամբայ ելանք, որպէսզի Մշոյ դաշտ իջնենք։ Գիշերը ամբողջ քալեցինք, բայց ճամբայ չկրցանք կտրել։ Վահանը ծանրամարմին էր ու քարքարուտներէն չէր կրնար յառաջանալ։ Դժուարին տեղերը շալկելով անցուցինք զայն։ Արշալոյսը բացուեցաւ, երբ մենք հազիւ հասած էինք Անտոքի վարի փէշերը։ Վահանը չէինք կրնար լքել, ու չէինք կրնար մեր ճամբան չարունակել։ Ուստի այդտեղի ժայռերը ապաստանեցանք, յաջորդ գիշերը ճամբան չարունակելու համար։ Այդ ցերեկ Շէնիկի եւ Կէլիէկուզանի միջեւ, Թրքական ջոկատներու երթեւեկը շատ էր, ու պատահեցաւ որ տասնեակ մը թուրք զինուորներ ուղղուեցան դէպի մեր ապաստանած ժայռերը։ Զայն շհանեցինք, յոյս ունենալով որ կ'անցնին։ Բայց անոնք մօտեցան մեր դիրքին եւ արդէն տասը-քսան քայլի վրայ էին ու կը չարունակէին ուղղակի մեր կողմը յառաջանալ։ Կրակ բացինք անոնց վը-

digitised by A.R.A.R.@

բայ, ուրիշ ելք չունէինք։ Վահանը մեր ոտքն ու ձեռքը կապած էր։ Միւս ջոկատներն ալ կռուի մէջ մտան։ Մեր հարուածներէն քանի մը Թուրք ասքէրներ ինկան, իսկ միւսները եա քաշուեցան եւ դիրք դրաւեցին մեզի դէմ։ Մենք ալ իրարմէ ոտոր-քան քայլ հեռաւորութեան վրայ, մեր դըլուխները պահելու քար մը դտանք, եւ կռիւը շարունակեցինք, միշտ մեր դնդակները խնայելով։ Կէսօրին արդէն Լեւոնը եւ իր ընկերը սպանուած էին։ Իսկ մենք վիրաւորուած էինք։ Թրքական ջոկատները աւելի առաջացան, մենք ոտոտկելով, արիւնաքամ, ձորին միւս կողմը անցանք եւ մեր հարուածները ուղղեցինք յառաջացող թշնամիին։ Վահանը ապաւինած էր իր տասնոց ատրճանակին, ու անշարժ կը մնար իր առաջին դիրքին մէջ։ Միւս երկու անձնուրացները Վահանի դիրքին մօտիկ, քարերու մէջ կը ցատկէին, շեշտակի հարուածներ կու տային թշնամիին եւ դիրք կը փոխէին հինգ-տասը քայլի վրայ։ Արեւը մար մտնելու վրայ էր։ Վահանի դիրքը լուռ էր։ Մենք արիւնաքամ, դրեթէ կիսամեռ կը մնայինք ժայռի մը տակ, զէնքերը գրկած՝ իրրեւ վերջին ապաւէն։

Սարհատ, կարծես դաշտի հարուած մը ստացած էր կուրծքէն։ Ամբողջն կծկած էր շրթունքները։ Խումբը տապալած ու ճղակոտոր կաղնիի կոյտի մը կը նմանէր։ Թորոն պահ մը լռելէ ետք, շարունակեց խօսքը, գլուխը միշտ կախ.

— Զէնքի ձայները դադրելէ ետք, ջոկատները Վահանին ապաստանած ժայռերուն շուրջ երեւցան։ Պահ մը այդ քարերը խուզարկեցին։ Նահատակներու մարմինները, վէրքերով լի, փռուած գտան ժայռերուն առջեւ... Անտոքի ապաւոր արեւն էր որ մար կը մտնէր։ Նէս դիշեր էր, — շարունակեց Թորոն, — քիչ մը ուժ դդացինք մեր մէջ, մեր վէրքերը կապկպեցինք ու իրարու օգնելով՝ մօտեցանք Վահանի դիրքին։ Լուսինը ելած էր ու մենք նահատակներու խաղաղ դէմքերը տեսանք, մարմինները արեամբ թաթախուն։ Անօրէնները Վահանին ալ ձեռքը կտրած՝ իրենց հետ տարած էին, որպէս ապատութեան հրահանգիչ ուժի նշանակ։

Ֆարանձաւի մէջ ապատութեան մարտիկներու միայն տնքոցը կը լսուէր։

Այդ ծանր պահը որքան տեւեց, Սարհատ չդիտցաւ։ Զղայինն ցնցումով ոտքի ցատկեց.

— Տղա՛ք, ոտքի, Թորոն ու Թաթարն ալ մեզի հետ։ Անտոքի բարձունքները պիտի ելլենք։

Ու անոնք համբայ ելան դժոխային այս քարայրէն, քարի դաւակ, ժայռուտ բարձունքներուն համբան բռնեցին։

Երկնքէն առկախ այս բարձունքներէն Սարեբու Ալանը կը դիտէր դոտարկուն Սասունը, որ բնութեան խորախորհուրդ մրմունջներով կը սդար իր անհաշիւ նահատակները։

Վահան փաշան ալ գնաց Սասնոյ տունէն...

Սարհատ խոնարհած իր ներաշխարհին, կը խորհրդածէր այն ոդբերգութեանը մասին, որ ապրեցան քաջակորով մարտիկները եւ ապատութեան դրօշ պարզող հերոսական այս ժողովուրդը, լուռ, անհատական քոլոր երազներն ու վիշտերը մոխրացուցին իրենց հոգիին մէջ, ու միակ արտայայտութիւնը որ անոնց սիրտէն բոցավառեցաւ, Ազատութիւն կամ Մահ հրաբուխն էր։

Վահանի նահատակութեան լուրը պիտի հասցնէր Կ. Կոմիտէին եւ Անդրանիկին։

digitised by A.R.A.R.@

Սարհատ իր մտածումներուն թելը կարեց, եւ երկտող մը գրեց Անդրանիկին Վահանի վախճանի մասին։

Երկու հին մարտիկներ համբայ եկան եւ նետուեցան խորխորատներու մէջ։

Խումբը բարձրաբերձ ժայռերուն ապաստանեցաւ, հին օրերու յիշատակներով առլցուն։

Երկու օր ետք, խումբը ժայռերու կատարէն անդունդները կը խուզարկէր։

Գահակները լուռ տուին.

– Ժայռերէն վեր մագլցողներ կան։ Մեր ընկերներուն կը նմանին։

– Սարհատ, վերէն, բոլոր կերճերն առաւ իր ակնարկին մէջ։ Մինչ խումբը ճամբաները կը խուզարկէր, սուրհանդակները արդէն կեցած էին Սարհատին առջեւ։

Անոնք Ծանօթ Ֆեդայիներ էին Անդրանիկի կողմէ զրկուած։

– Գարո՛ն Գէորգ, Ծովասարէն կու գանք։ Անդրանիկ այս երկտողը տուաւ։

Սարհատ կարդաց Անդրանիկի երկտողը։

– Մենք ալ Ծովասար վերադարձանք։ Կ. Կոմիտէն կը խնդրէ որ լեռները ապաստանինք կամ անցնինք Ալպաքի շրջանը։ Դաշտի վիճակը ծանր է։ Կապ պահենք իրարու հետ, թռուցիկ փոքր խումբերով, եւ զգուշանանք նոր դէպքերէն, մինչեւ Մուրատի վերադարձը։ Վահանի նահատակութիւնը մեր բազուկները կոտրեց...

Յաջորդ օրը, արշալոյսը չբացուած, կապ պահող խումբ մը համբայ եկաւ դէպի Ծովասար։

Խումբերը կրկին իրարու արծիւ սաւառնեցան լեռն ու ձորը ու սարերու ապիւներու մռնչիւնը սարսափ տարածեց Թրքական վաշտերուն մէջ։

Լեռներու գագաթները արեւոտ ժպիտ մը ունէին խորհրդաւոր...

Կ. Մ.

(Շար.)

digitised by A.R.A.R.@

Այս օրերուն, մեր մէջ կը գտնուի քանասեղծ եւ նկարիչ Բիւզանդ Թօփալեան։ Եկած է Փարիզէն եւ «Գալլերի Մանուկ»ի մէջ կը ցուցադրէ վերջին տարիներու նկարչական իր վաստակին մէջ մտոը։

Երեսնակեան Թուականներուն մեր գրականութեան մէջ յայտնուած ու արագօրէն դէմք շինած ընտիրներէն մէկը եղաւ Թօփալեան, որ տակաւին կը պահէ իր կորովը ու յափշտակելու մթնոլորտ ընդունակութեամբ կը մատնայ բանաստեղծութեան, արուեստին։

Մեզի համար երկրորդական արժանիք մը չէ արուեստագէտին հաւատարմութիւնը, ինքն իրեն հեռուզական մնալու պարագան, զորաւոր խրո

վերներով պայմանաւոր ներկայութիւնը, որ պատէ պատ կը զարնէ ենթական, իր ուժին ու տարմաններուն մէջ կը պահէ զայն, կը տանջէ, կ'այրէ, կը դառնայ հանապազօրեայ տանջանք, տանջալի անունդ ու կ'արդիլէ ամէն դատաստանութիւն։ Այս կարգի արուեստագէտները փոդով չեն շարժիր ու թմբուկներէն չեն հմայուիր։ Կը հաստատեն իրենց ձայնին, չի՛ տպաւեր ուրիշներու ծափին։ Կ'երկնեն։

Արուեստագէտի այս տիպարը կը յիշեցնէ Թօփալեան, որ իր հաւատարմութեան շնորհիւ, հաւատարմութիւնը մնայուն դարձնող հաւատքի՛ն շնորհիւ, տեւաբար ներկայ եղաւ եւ յարկորդական հատորներով Սփիւռքի գրականութեան բեռաւ դդալի նպաստ մը։

Ներկայ մեր գրողներէն մեծ մասին կենսագրութիւններուն պէս՝ անպատմ կայ նաեւ Թօփալեանի կենսագրականին մէջ, անորոշութիւն կայ, լոյս կայ։ Ցաղթանակ կայ մանաւանդ։ Անապատը չամայցուց իրենց հոգին, անորոշութիւնը չընկճեց իրենց կամքը, լոյսը չկուրցուց իրենց աչքերը։ Մնացին մեր պատմութեան մէջ, չհեռացան հայ մարդու մթնոլորտէն, փոթորիկներուն ու նոր հովերուն յուսահատորէն կամ չտեսօրէն չենթարկուեցան, այլ իրենց կամքին ենթարկեցին փոթորիկներն ու հովերը։ Այդ ամրութեան, իրենք զիրենք չրկապատին, մարդոց, ճակատագրին հակադրելու զորեղ անհատականութեամբ օժտուած անձերուն մեծ բան կը պարտի գրականութիւնը։

Մարդոց կործանումներուն, կառուցումներուն, փլուզումներուն ու վերականգնումներուն խուճապահար ու խանդավառ անդրադարձը կայ Թօփալեանի գերթուածներուն մէջ եւ գեղեցիկ հեռանկարներու հաչուոյն անմար յոյս մը։ Բանաստեղծութիւնը միայն վիճակ չէ իրեն համար բառերու հրախաղութիւն ու պատրանքներու գընարականութիւն չէ, այլ նաեւ լոյսի մը որոնումն է, այսինքն ունի մտածման բաժին մը։ Այս պարագան որոշ ցրտութիւն մը, կ'ստաղացնէ թէեւ, բայց չի հերքեր Թօփալեանի արուեստին ներգոյակ ուժը։

ԲԻԻԶԱՆԴ ԹՕՓԱԼԵԱՆ

Հինը չի կրկներ Թօփալեան։ Աղքատ չէ իր խառնուածքը։ Տարին անգամ մը իր չուրջը ապրուի բարձրացնող փղշտացիները չի կապկեր։ Թոյլ չէ իր անհատականութիւնը։ Կը դրէ, առանց հինին եւ նորին մէջեւ ասհման քաշելու։ Իւրացուցած է հսկայ ժառանգութիւն մը ու առնոր վրայ յաւելում մը բերելու պապակով կը նայի ապիտակ թուղթին։ Սկսելու ոգեւորութիւն մը չի ցուցադրեր, շարունակելու կիրքով կը կազմէ իր գերթուածները։

Գառասուն տարիներէ ի վեր իր կոչումին լրմն ու լրիւ նուիրումով փարած այս արուեստագէտին դեռ ակնկալութիւններ ունի ընթերցողը։

digitised by A.R.A.R.@

ՄԱՐԴ ՄԸ

Ահաւասիկ հեռաւոր աշխարհներէն վերադարձող մարդն է այս:
Տարահալած իր գոյութիւնն երէկուան
Ունի ճնշող ծանրութիւնը դարերու.
Գայթաքներու իր ծիրանին կ'երկարի
Անապատէն անկարեկիր մինչեւ ծովերն այրեցեալ:

Այսօր ահա կը ժպտի երջանկութեան իր երկրին,
Բայց աչքերուն մէջ քանդակեալ՝ կը յիշէ
Սպիտակ շեղջն ոսկորներու
Հորիզոնի գիծին վրայ՝ ապրստամբ
Սուրերու պէս տակաւին անապատի կողն ի վեր:

Ան՝ ձեռքերով տրիւնոտ
Անցաւ ձորերն յոթմանքներով ամեհի՝
Հրատոչոր ծարաւով,
Ձեռքերն այդպէս – տատասկներով բռցավառ:
Երկինքներէն ամպածրար ազերսեց յոյսն իր պապակին:
Եւ սակայն, տաքածութեան ու քառաքեւ միջոցին մէջ
Արձագանգն իր քայլերուն
Կորսուեցաւ անտուող:

Ու քառասուն տարիներու միջոցէն,
Դաշտերէն այդ անեզրական աւազին
Արեւակէզ բոցերը մինչ մտածման մէջ կը տիրեն, –
Իր ջրդեղեալ հոգիին մէջ կրեց ան
Խորունկ յոյզերը մարդոց,
Անկարելի քաջութեամբ
Կրեց ցաւը երջանկութեան մը զալիք:

Ահաւասիկ մարդն, – ամբողջ կրակներէն մաքրուած:
Հոգեկան նոր կորովին, իմաստութեան ուժերով –
Բազուկներով անհահանջ
Սպառազէն՝
Կոփելու կեանքն իր վաղուան:

ԲԻԻԶԱՆԴ ԹՕՓԱԼԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՈՂՋՈՅՆԸ ՏԱՆԵՍ

Նոր տարին եկաւ, եկնեմ ու գնամ.
Գնա՞մ ու գնամ՝ կարօտով վառման.
Անցնեմ լեռներով, ձորերով անցնեմ –
Հասնեմ Արաքսին, Մասիսին հասնեմ:

Նոր տարուայ զուարթ ողջոյնը տանեմ,
Հայրենի երկրի ջրին ու հողին.
Երգս Զանգուի ջինջ երգին խառնեմ –
Բախտաւորի պէս հասնեմ Արաքսին:

Տանեմ կարօտը՝ ողջոյնը տանեմ,
Սփիւռքում յուծող հարազատներիս.
Ստա՞ր աշխարհից խաբրիկներ տանեմ –
Ձերմ բարեւ տանեմ հայրենի երկրիս:

Պանդուխտ օրերիս թախիծը ցնեմ,
Հին տարուան յանձնեմ – ժպտադէմ գնամ,
Երգս՝ Զանգուի զիլ երգին խառնեմ, –
Բախտաւորի պէս երգեմ ու երգեմ:

ԿԻՋԻՈՂ ԱՌՕՐԵԱՆ

Ցորդում են յոյզերն հրայրքով,
Կառչում են ժամերի քոանցքին.
Եւ անզօր ու անօգ թեւերով
Բախւում են օրերի ճժարին:

Ցառնում են յուշերն... մռմմոքում,
Ցուշերը՝ արեւվառ ու պայծառ.
Եւ վառուող ու կիզուող օրերում
Անաղմուկ խամրում են կարօտով խելառ:

Որպէս հազուագիւտ ու փնտռուած
Նժոյգ, վրնջում է, փրփրում
Օրերի երքն այս անկաս:

Երէկուայ առօրեան՝ մրրկուած,
Դարձել է անվախճան սպառում, –
Երէկուայ յոյզերը՝ լո՞ւռ, մեռած:

digitised by A.R.A.R.@

Ա՜Խ, ԹԷ ԼԻՆԷՐ...

Տե՛ս, ճախրում են, ու ճազում են
Շաբաթը անցնող օրերի.
Նրանց երթով քանկլում են
Կրակները՝ խենթ սրտի:

Եւ նոյն ռիթմով ու կրակով
Մորմոքւում են, հուր-հրում.
Աստեղազարդ մեր օրերը՝
Կարօտների միրաժում:

Եւ անվախճան այս պտրեքգում,
Այս սլացքում վիթխարի՝
Զուր կիզում են, փոշիանում
Շուշանները մեր կեանքի:

Վախճան չունի, չունի քուն
Այս արշաւը լուսագէս.
Նոր օրերում հինն է խամրում՝
Փոշիանում ապեկէզ:

Որը օրի թեւը բռնած,
Պարում են նոյն առանցքում.
Նրանց պարը՝ հրամայուած,
Հոլովւում է անդադրում:

Ա՜խ, թէ լինէր՝ փէշը բռնել,
Խենթ օրերի գնացքի,
Ու նրանց հետ յաւերժ պարել՝
Խելառ պարը նոր կեանքի:

Նրանց անկաս ռիթմը պահել,
Պահել ուժը՝ հրաշէկ.
Լինել յաւերժ ու անբեկ –
Ժամանակի ծիրը բռնել:

ՀԱՅԿ ՅՈՎՍԷՓԵԱՆ

Թեհրան

digitised by A.R.A.R.@

ԶԱՐԿԵՐԸ

Կեցած Արդարութեան պալատի մարմարեայ աստիճաններուն մօտ, կը դիտեմ հսկայ շէնքը, որ իր խիստ երեւոյթով կը ճնշէ ուսերուս վրայ։

Արդարութեան պալատի հսկայ ժամացոյցը ծանր կշռոյթով կը հնչէ։

Իր զարկերուն մէջ կը դտնեմ ալեհեր զատուորին անողոք վճիռը...։ Կը տեսնեմ ճշմարտութիւններ՝ օրէնքի գոյնզգոյն հանդերձներ հագած...։ Ամիւռ մը կը մոնչէ, ցոյց տալու համար իր հեղինակութիւնը...։

Առանձնութիւն ու լռութիւն շուրջս։

Բարձր է պալատին հսկայ ժամացոյցը։ Իսկ ես դողացող ժպիտ մըն եմ մռայլ փոթորիկներուն դէմ... արցունք մը՝ ովկիանոսի անէութեանը մէջ... կամ փչրուող ալիք մը՝ ժայռերուն դիմաց...։

Բայց... ո՛չ։

Շատ ճնշիչ է այս պալատին տեսքը իր մարմարեայ գեղեցկութեանը մէջ։ Իր խստութիւնը կը պարտադրէ ինձի մտածել իր հեղինակութեան մասին։

Կը սրեմ երեւակայութիւնս ու կ'ուզեմ մտնել այս հաստ պատերէն ներս։

Շրջիններս դանդաղ կը շարժին ու կասկածոտ ձայն մը կը փախչի բերնէս.

– Ի՞նչ կ'ընեն հոս մարդիկ, – կ'ըսեմ։

Լռութեան մէջ ձայն մը կ'արձագանգէ.

– Հոս մարդիկ Արդարութեամբ կը կոփեն Օրէնքը, ու Օրէնքով կը հասնին ճշմարտութեան։

Կը նայիմ շուրջս։ Ոչ ոք կայ։

– Ես եմ, չճանչցա՞ր զիս, – կը շարունակէ ձայնը, – ես այն եմ, որ միշտ կը կրես քեզի հետ։

– Ինձի՞ հետ...։ Բայց ո՞վ ես դուն։ Արդեօք խի՞ղճս։ ընդվզո՞ւմս... թէ կիրքի, տենչանքի ու նախանձի զգացումներուս խառնուրդը, – կը հարցնեմ չփոթած։

Անծանօթ ձայնը կը խնդայ.

– Ո՛հ, զգոյշ, շատ մեծ բառեր կը գործածես, – կ'ըսէ, – այդ բառերու գործածութիւնը օրէնքի դէմ է։ Կը ցաւիմ որ չճանչցար զիս։ Ես քու ժամացոյցդ եմ։

– Ժամացո՞յցս...։

– Այո՛։ Զարմացա՞ր։ Ինչո՞ւ կ'ուզես որ անպայման այդ ձայնը ըլլար տանջող զգացումի մը ձայնը։ Ընդվզո՞ւմ... խի՞ղճ... զգացումներու խառնո՞ւրդ...։ Ցիմար ու անբարտաւան խօսքեր են սոոնք։ Աւելի լաւ է քիչ մը համեստ ըլլաս։

Վերցուցի աչքերս ու նայեցայ Արդարութեան պալատի մեծ ժամացոյցին, յետոյ՝ ժամացոյցիս։ Նմանութիւն մը կար երկուքին միջեւ։ Տխրութիւնը սեղմեց սիրտս ու մտածումներ արձագանգեցին մտքիս մէջ։

«Արդարութեամբ կը կոփեն օրէնքը...»

«Օրէնքով կը հասնին ճշմարտութեան...»

«Ճշմարտութիւնն է արդարութիւնը...»

«Օրէնքով կը դտնեն արդարութիւնը...»

«Օրէնքը կը կոփուի մարդոց ձեռքով...»

«Մարդոց ձեռքով... մարդոց... մարդոց... մարդը... մա՞րդ...»

– Մարդը դուն ես, – արձագանգեց ծանօթ ձայն մը ներքիս։

– Տե՛ս, բարեկամ, – պայթացած ըսի ժամացոյցիս, – ես զսպանակաւոր չեմ եւ չեմ ուզեր ըլլալ։ Իսկ դուն շատ նման ես այս հսկայ ժամացոյցին։

digitised by A.R.A.R.@

– Անշուշտ, – մեղմօրէն ըսաւ ժամացոյցս, – ես անոր մանրանկարն եմ։ Եւ տակաւին, ինծի նման միլիոնաւոր ժամացոյցներ կան աշխարհի մէջ։ Միլիոնաւոր զսպանակաւորներ, որոնք կը շարժին մեծ ժամացոյցներու զարկերով։ Իսկ դուն կ'ուզես անհաւասարակշիռ քայլերով ու խոշոր բառերով չփոթ ըսուեղծել չուրջդ…։ Եղիր զսպանակաւոր, միամիտ բարեկամս ու քայլ պահէ ընդհանուրին հետ։

Զգուանքով նայեցայ ժամացոյցիս։

– Օրէնքէ դուրս նայուածքով մի՛ նայիր ինծի, – ըսաւ հանդարտ, – դուն ինծ անփորձ ես տակաւին։ Ձեզ ճանչնար Ընկերութեան օրէնքները, որոնք դարերու ընթացքին կոկուած ու բիւրեղացած են…։ Ու վա՜յ անոր, որ կը կը յանդգնի չհաւատիլ Ընկերութեան ու օրէնքին, եւ չընդունիլ անոնցմէ բխող ճշմարտութիւնը…։

Պիտի չհասկնայինք իրար։ Դէմս ունէի երեք ուժեր. Մեծ ժամացոյցը, Ընկերութիւնը ու ժամացոյցս…։ Այո՛, ափսո՛ս, նաեւ ժամացոյցս, զոր ստիպուած էի պահել վրաս ու չտկել զարկերը Մեծ ժամացոյցին նայելով։

Բայց չուզեցի տեղի տալ ժամացոյցի մը առջեւ, հոգ չէ թէ ան պաշտպանուած ըլլար հեղինակութիւններու կողմէ։

– Քեզի ցոյց պիտի տամ իսկական ճշմարտութիւնը, – ըսի՝ սեղմելով ակռաներս, – զսպանակաւո՛ր ստրուկ…

– Իսկ ես քեզի ցոյց պիտի տամ տպրող ճշմարտութիւնը, – ըսաւ ժամացոյցս հանդարտութեամբ, – միամիտ ըմբո՛ստ…

⁂

Ձեռքերս մխրճած գրպաններուս մէջ, կը քալեմ մեծ քաղաքի ճամբաներէն ու կը խօսիմ ժամացոյցիս հետ.

– Կը տեսնե՞ս այդ նիհար մանչուկը, զսպանակաւո՛ր։ Կը տեսնե՞ս ինչպէս կը նայի այդ ոսկեծամ աղջնակին խաղալիքներուն։ Ճշմարտութիւն մը կայ հոն։ Տե՛ս, գրամատոի ցուցափեղկին մօտ կեցած ծակ տարատով այդ տղան, հին դպրոցը կ'երազէ…։ Ինչո՞ւ այդ տարիքոտ մարդը կը քաշէ տխուր աչքերով պատանիին օձիքէն…։ Արդեօք ճըշմարտութիւն մը չկա՞յ հոն։ Տե՛ս, այդ կինը մարմինը կը ծախէ…։ Արցունքներ կան այդ երիտասարդին աչքերուն մէջ…։ Կնճիռներ՝ այդ մանկամարդ կնկան ճակտին վրայ, ու անհերեւոյթ արցունքներ՝ որոնք լռութեամբ կը կաթին սրտերուն մէջ…։ Ըսէ՛, զսպանակաւո՛ր, ճշմարտութիւններ չկա՞ն հոն, ըսէ՛…։

– Կը զառանցե՞ս, ի՞նչ է, – ըսաւ ժամացոյցս, – ես այդպիսի բաներ չեմ տեսներ չուրջս, – ամէն բան բնականոն է, ու դեղեցիկ է կեանքը։

⁂

Ժամացոյցս ու ես կը դիտենք արեւմուտը։

Արեւը կը փախչի մեզմէ։ Կ'ուզէ թաղուիլ հորիզոնի կրքոտ գիրկին մէջ։

Ա՛ն միայն գիտէ թէ ինչպէս իր լոյսին տակ մարդիկ խեղդեցին ճշմարտութիւնները։

Կը նայիմ արեւին։ Փոքրիկ ամպի մը եաեւ կը պահուի ան։ Կարմիր ցոլքեր կը նետէ ծովու արծաթ խաղերուն վրայ ու իր նազանքներով կ'ուզէ մոլորեցնել մտքերս։

Ժամացոյցս արագ կը տրոփէ։ Բայց ես կը լսեմ խղճիս զարկերը։

«Գիտեմ քու խաղերդ, անգութ արեւ։ Աբշալոյսի շողերդ անքիծ ճշմարտութիւն խոստացան միամիտ մարդկութեան։ Կէսօրուայ կիզիչ ճառագայթներուդ տակ խանձեցան ճշմարտութիւնները ու դարձան յոյս։ Իսկ հիմա, հիմա… գեղեցիկ գոյներով կ'ուզես խաղալ մեր զգայնութեան թելերուն հետ։ Գիտես թէ տկար ենք, մարդ ենք դերջապէս… կամ ժամացոյցներ զսպանակաւոր…։

«Վազը նոյն խաղն է որ պիտի կըրկնես։ Այդ է քու պարտականութիւնդ, անգութ արեւ…»։

Արեւը դուրս սահեցաւ ամպերու տակէն։ Դարձուցի աչքերս։ Այո՛, տա-

digitised by A.R.A.R.@

կաւին զօրաւոր էին ճառագայթները։ Ա՛հ, եթէ ըլլային ամպի՛ր, ծածկէին երկինքը, հաւատացէ՛ք, եռ պիտի պառայի ամբողջ ճշմարտութիւնը արեւի երեսին։

Կը լսէի ժամացոյցիս զուռզ խնդուքը։

Այո՛, պարզ էր երկինքը ու զօրաւոր ճառագայթները արեւին...։

Ծոնարհեցուցի աչքերս։ Ծովու ջուրերուն ճառագայթներու շողն էր ինկած...։

Մնացի այդպէս։ Գիտէի թէ պիտի պարտուի արեւը։ Պիտի կարմրի...։ Թաղէ իր ճառագայթները հորիզոնին միւս կողմը։ Ու այն ատեն դարձեալ պիտի բարձրացնեմ աչքերս, նայիմ չեչտակի իր կլորութեան ու հայհոյեմ իր վերածնունդին...։

Ահա, կը խամրին ցոլքերը ջուրերուն վրայ...։

Ուրի՞մն...։

Կը վերցնեմ աչքերս։

Ի՞նչ լաւ է նայիլ թշնամիի աչքերուն մէջ...։

Ու ինչպէս արեւը, կարմրեցաւ, կարմրեցաւ, նայուածքը հեռացուց մեր օրաւորէն ու գնաց կորսուիլ հորիզոնի կրքոտ գրկին մէջ...։

Ալ չէի լսեր ժամացոյցիս զարկերը։ Գեղեցիկ էր արեւամուտը...։

*

Լուռ է ժամացոյցս։ Կարծէք ան ալ կը մտածէ արեւամուտին մասին, կամ՝ թերեւս կը սպասէ գալիք արշալոյսին...։

Կը մտնեմ բանջարեղէններու շուկան։

Նեխած հոտե՛ր, լռութի՛ւն...։

Շշուկներ կը լսեմ։ Առնէտներն են։ Իրենցն է շուկայի ազատութիւնը։

Արդարութեան պալատի ժամացոյցը ծանր հարուածներով կը կասարէ իր պարտականութիւնը։ Ժամը տասն է։

Առնէտները վարժուած են ժամացոյցին ծանր հարուածներու ձայնին։ Չեն ցնցուիր ու կը շարունակեն իրենց պրպտումը։

Աղքակոյտին շուրջ հաւաքուած կը խառնեն... կը խառնեն... կը փնտռե՞ն...։

Ցանկարծ շուք մը կը մօտենայ աղքակոյտին, ոտքով կը հարուածէ առնէտները ու կը գրուէ աղքակոյտը։

Հասարակ կենդանի մը չէ ան։ Մարդ է։

Կազ շուն մը հեռուէն կը հաչէ մարդուն վրայ։

Զօպանակաւոր բարեկամս կը հրնչի...։

*

Մթութեան մէջ զոյգ մը փայլուն աչքեր կը շարժին անհանգարտ։

Ո՞վ է տէրը այդ աչքերուն...։ Արդեօք կի՞ն մը տարփատենչ, թէ վայելատու մը արծաթի տեսքին ծարաւի։ Արդեօք բարեկա՞մ մը անծանօթ, թէ թշնամի մը կեղծաւոր...։ Ո՞վ է տէրը այդ զոյգ աչքերուն, որոնցմէ մին ժպիտ կը բաշխէ, իսկ միւսը կասկած ու կրիւ...։

Զոյգ մը աչքեր ցանկապատին վրայ։

Միաո՛ւ...։

Ա՛հ, կատու մըն է։ Փոքրիկ ու տըկար, մարդկային զոյգ աչքերով տգեղցած։ Կը ցատկէ վար ու իր փափուկ մորթով կը շոյէ ձեռքերս...։ Աչքերուն մէջ կը տեսնեմ լաւաներ կեղծիքի ու գէպի վեր շարժող պոչին ծայրը իր եսին յամառութիւնը կը յայտնէ։

Կատո՛ւ...։

Իր փափուկ մորթին հպումէն, կը յիշեմ լաւ բարեկամնե՛րս... ժամանակի չփումէն մաշած անկե՛ղծ սէրերը բոլոր...։ Կը յիշեմ պատրաստակամութեամբ երկարող ձեռքերը բարի՛, ու ժպիտներ, դիցաո՛ղ ժպիտներ...

Միաո՛ւ...։

Կը շոյէ ձեռքերս, կը դրդռէ հանդարտութիւնը սրտիս։

Ալ կը բաւեն շոյանքները։ Միամիտ հին տղան չեմ այլեւս։

Մատներս կը դնեմ իր տկար վզին։ Կատուն կը դրուէ աչքերը ու պոչը կ'ի՛ջնէ վար։ Կը նեղցնեմ մատներս։ Կազմած օղակը ու ատելութիւնը դուրս կը ցայտէ աչքերէն...։

digitised by A.R.A.R.@

Միտո՞ւ...։

Ցանկապատին վրայ ժանիքներ կը տեսնեմ միայն։

*

– Կատո՞ւներ..., ժամացոյցնե՞ր, – կը պոռամ՝ խզելով պիչերային լռութիւնը։

Ձեռք մը կը ռահի ուսիս վրայ։

Կը վերցնեմ աչքերս։ Զոյգ մը կարմրած աչքեր, կարմրած քթի մը, կընճռոտած ճակատ, օրօրուող ոտքեր, ու այս բոլորին ամբողջութիւնը՝ ծեր գինով մը...։

– Մի պոռար, բարեկա՛մ, – կ'ըսէ ան, – երիտասարդ ես տակաւին։ Դուն չես գիտեր, թէ ի՞նչ է տարբերութիւնը ծեր գինովին ու երիտասարդ գինովին միջեւ։ Ես ալ կը պոռայի ժամանակին, Լրբ կը կարծէի թէ պիտի ճշմեմ բնութեան չարիքներն ու կեղծիքները։ Շատ ճշացի... բայց... բայց...։ Բայցը հարցական վիճակ մը ստացաւ ու կախուեցաւ դլխուս վրայ։ Իսկ հիմա զո՛ւն, ի՞նչ կը ճչաս ու կը խանդարես գիշերուայ լռութիւնը։ Ո՞վ պիտի լսէ քեզ, զո՞վ կ'ուզես զգաստութեան բերել...։

– Ժամացո՛յցս, բոլո՛ր ժամացոյցները, – ճչացի։

– Ժամացոյցները, – զարմացաւ ծեր գինովը։

Բռնեցի ուսերէն, նայեցայ իր կարմրած աչքերուն ու շարունակեցի խօսքս.

– Այո՛, ժամացոյցները, կառուցները, մարդերը, որոնք չեն գիտեր ու մոռցած են իրենց իրաւունքները։ Որոնք խլած են վար իրենց մաքրամաքուբ պատուանդաններէն ու ցեխերուն մէջ կը փընտրուին զսպանակաւոր ճշմարտութիւններ։ Կը լսե՞ս, զսպանակաւո՛ր ճշմարտութիւններ...։

– Դուն գինով չես, – փսփսաց ծեր գինովը, ու ինքզինքը ազատելով թեւերէս, շարունակեց ճամբան։

Երկար նայեցայ իր ետեւէն։ Օրօրուելով կը քալէր մայթին ծայրէն, թեւերով կ'ուզէր պահել իր հաւասարակշռութիւնը ու կը քաքուէր աղտոտ պատերուն...։

Գէտք է պահել հաւասարակշռութիւնը...։

*

Արդարութեան պալատի ժամացոյցին զանգը ծանր հարուածներով կը հընչէ։

Չորս հարուածներ։ Առաւօտեան ժամը չորսն է։

Կը նայիմ ժամացոյցիս։ Դադրած են իր զարկերը...։

Խումբ մը մարդիկ կը լուան Արդարութեան պալատի աստիճանները։

Ջուրը դանդաղօրէն կ'իջնէ աստիճաններէն ու իւրաքանչիւր աստիճանի հետ կը փոխէ իր դոյնը, կը փոխէ՛... Կը դառնայ մոխրագոյն, դորշ, սեւ...։

Կը փայլին Արդարութեան պալատի աստիճանները, կը փայլին այնպիսի՛ անբծութեամբ, որ մարդիկ պիտի չհամարձակէին իրենց կեղտոտ նայուածքները մօտեցնել անոնց, եթէ...։

Լռութիւն...։

Լռութիւնը մխայն մանուկի մը քայլերով անչչուկ կը բարձրանայ աստիճաններէն վեր...։

Բայց մինչեւ ե՞րբ...։

Ահա կը զօրանայ լոյսը ու արեւի ճառագայթներ սպառնագին կը մօտենան աստիճաններու անբիծ մարմարներուն։

Արշալոյս է։

Ուրե՞մն...։

Կը նայիմ կօշիկներուս։ Փոշոտած են անոնք պիչերային փուճ արկածախնդրութեամբ...։ Կը զգամ՝ թէ լորձունքը կը կուտակուի բերանս մէջ։

Բայց...։

Շուն մը կաղալով կը բարձրանայ աստիճաններէն ու կը պղծէ անոնց առաւօտեան անբծութիւնը...։

Կը կլլեմ լորձունքս ու կը շարունակեմ ճամբաս։

Վերսկսած են ժամացոյցիս զարկերը։

Նոր օր է ծեր...։

ԱՐԱ ՍԵՒՈՒՄԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱՐԱՐԱՏԻ՞Ն

Անծանօթ քարաժայռին,
Մագնիսացնող ծիւներուն,
Հսկայակուռ անդապահին,
Վանտուած յարգանքներս:

Անել փողոցին խաւարը կծկտած,
Կիսամերկ եւ քաղցած մտասեւեռումս
Որ կը դիտեմ ես հիմա,
Գաղթականի անապակի ակնոցներով.
Կա՞ս, թէ չկաս,
Արեանս մէջ քանձրացած,
Ուղեղիս մէջ ամուր բազմած,
Գաղափար լեռնային:
Կը նայի՞ք մենք իրարու,
Թէ ես եմ միայն
Որ ես-իս տուած թեւ, նպատակ,
Կը փորձեմ քեզ զանազանել
Մառախլապատ շրջապատէս:
Մօրս տոհմուկ գիրկը,
Ուսուցչիս պատնիշող բանգիտութիւնը,
Հիմա ալ դո՞ւն:
Թէ՞,
Ակամայ զոյութիւն,
Անժամանցելի պատգամ:
Դուն եւ ես-ս,
Դարակուռ լեռ, ամենակեդրոն էութիւն:
Կ'ըմբռնե՞մ արդեօք
Մշուշին մէջ երգող կանչդ,
Քարալա՛ր տաւիղ,
Եթերին մէջ փայլփլող արցունքներդ,
Սարսռացող պատմագէտ:
Շուարած է տագնապս
Պատկերային զոյութենէդ.
Անխարդախ ճշմարի՞տը,
Թէ պարզայական դիպուած,
Գոյութիւնը երկուքիս,
Նայնքա՛ն ուժեղ, նոյնքա՛ն հպարտ:

digitised by A.R.A.R.@

Մինա՞կ եմ ես առանց քեզի:

Մգլոտած ոսկորներ կը սողոսկին
Վերմակէս ներս,
Կը հպին կրունկիս, ձեռքիս, այտերուս,
Կը զարնուին իրարու, կը շխրտան,
Կ'երգեն երգեր դժոխային-
Փշաքաղուած կը նետուիմ դուրս,
Հովին, անձրեւին, արեւուն,
Դալար դաշտեր, կապույտ երկինք:
Ու ուրբերուս տակ կը բացուին
Ճեղքեր անխուսափելի,
Կը թաղուիմ փոսերուն մէջ գարշահոտ,
Կը պատեն շուրջս հոհոացող
Շքախումբեր ոսկորային,
Ու կ'երգեն, լրջօրէն, սադայէլեան երգեր:
Ու ես չկամ, կան անո՛նք,
Մոլեգնած համանուագ դիակնային,
Ու ես չկամ:
Արցունքներս կը կայծկլտան խաւարին մէջ
Եւ ահաւոր կմախքները կը գտնեն զիս
Պահուըտած՝ անկիւնիս մէջ փոքր ու խոնաւ,
Կը պատոտեն զգեստս երերացող մատներով,
Կը բզկտեն հոգիս
Խոռոչներու փայլատակող մթութեամբ,
Ու ձեռքս բռնած ափերով անյատակ,
Կը քաշեն առաջ ու կը պարենք միասին,
Փտտած ոսկոր, պարտուած ես:
«Անօթի՞ եմ» կը գոռգոռանք,
Ու խելագար գերեզմանի
Արիւն կաթող խաւարին մէջ,
Ես–ս ըրած օրուայ համեմ,
Կը լափլիզենք
Հոգիիս խորը կծկտած սրբութիւնները անհատնում:

Ճառագայթներ կը սողոսկին փոսերէն ներս,
«Բայց մենք դեռ չե՞նք կշտացած» –
Կը հեծկլտան ոսկորներս թանկագին,
«Վա՛ղը, նորէ՛ն» – կը շշնջամ արբեցած:

Ու արշալոյս է արդէն:
Դիակներս անբասիր կը ցոյնանան
Վարդին, հովին ու լոյսերուն:

digitised by A.R.A.R.@

Ցիշտակը մահով սնած գիշերներուս:
Քառակուսի ու նաբոտած
Հայելին արշալոյսիս:
Ցերեկուն մէջ տապլտկող անիմաստ հեւք:

Կարքե՛լ լոյսը,
Ցզփանալ կեանքով,
Գտնե՛լ արեւահամ ընկերս խնձոյքի:

Արդեօք դո՞ւն, ամենածին գաղափար,
Ամենագէտ վկայ, ամենակարող ոգի:
Կրնա՞մ սլանալ բառերէն վեր
Ու ճանաչներդ պարուրել
Դողդոջ մտքովս անճառագայթ:

Բայց ուրիշ ո՞վ,
Մեռելներուս ամենուն կեանքը
Իր լիութեամբը կշռող դո՛ւն կաս միայն:

Թոյլ տուր սակայն,
Որ վերջին անգամ մը մտածեմ
Կարելիին՝ որ չեղաւ.
Ու շպարուիմ խոստումներովդ լուսահամ:

Դիակներուս ջերմութենէն
Լուսարձակող գազաթներդ,
Եելառ շարժպար:
Ես–ս եամեմ, հոգիս գինի, միտքս ծառայ,
Սրբազործուած գինարբուքիդ:

ՎԱՐԱՆԴ ՓԱՓԱԶԵԱՆ

digitised by A.R.A.R.@

23 ԱՄԻՍ ԲԱՆՏՈՒՄ

Լուկաշինի բանտ այցելելուց յետոյ, մի օր, օգտուելով մեր ազատութիւնից, մեր կորպուսի եւ բանտի հիւանդանոցի միջի տարածութեան վրայ, գրասենեակի դիմաց, յատակին, մի մեծ, կլոր չբոլանակ քաշած, երկու խումբի բաժնուած, մէկ մասը դուրսը, միւս մասը գրծից ներս, աղմուկով, իրարանցումով՝ «գոտի փախցնել» կը խաղայինք։

Քրէական կորպուսի մեր բակը նայող պատուհաններից բազմաթիւ գլուխներ՝ հիւանդանոցի հիւանդները, գրասենեակի պաշտօնեաները, մինչեւ իսկ պահակները ուշադիր հետաքրքրութեամբ մեզ կը դիտէին, քաջալերական արտայայտութիւններ կ'ունենային։

Ցանկարծ, պաշտօնեաները պատուհաններից ներս քաշուեցին, պահակներին ինչ-որ հրահանգ եկաւ եւ ակռուեց մի տարօրինակ իրարանցում։ Մենք կը յամառէինք տակաւին շարունակել մեր խաղը, սակայն մեր թափը կոտրուեց. շարունակ կը նայէինք գրասենեակի կողմը, ուր պատուհաններից ներս կը տեսնէինք պաշտօնեաներին իրար հետ խորհրդաւոր խօսելիս։ Այդ միջոցին երեւեցաւ յուզուած բանտապետը եւ կարուկ եւ խիստ հրամանով մեզ քշեց ներս եւ նորից լղճան կապուեց մեր վրայ։ Հակառակ անոր, որ բոլոր խաղացողներս գրտինքների մէջ էինք, մինչեւ իսկ չթողին լուացուել։ Մեր հարցումին, թէ ինչո՞ւ նման բան կ'անես, – բանտապետը պատասխանեց.

– Հրահանգը կեդրոնից է։

Ի՞նչ կարող էինք անել։ Նորից վերադարձանք մեր նախկին կացութեան։ Մի քանի ենթադրութիւններ արինք, բայց չկարողացանք «Հրահանգը կեդրոնից է»-ի պատճառը դուշակել։ Յարատեւ մէկը դիմեց մեր պահակին։ Միամիտ հայ զինուորը, ինքն էլ անակնկալի եկած՝ պատասխանեց.

– Ի՞նչ իմանամ, երեւի մի կատու է թող տուել, որ այդպէս իրար են անցել։

Ապէնը, որ նման առիթները չէր փախցնում, իր օրհնեալ բերանը բացեց.

– Այ մարդ, եթէ դուրսը կատուի փոխարէն Լենինը թող տուած լինի, մեզ հետ ի՞նչ կապ ունի։

– Դէ, հենց էլ է՛գ եմ ուզում ասել, էլի՛, – եղաւ պահակի վերջին խօսքը։

Արդէն գիշերը վրայ էր հասել։

Մէկ պահակը երկու դարձաւ։ Մեր շուրջը տիրեց խոր լռութիւն։ Տաբօրինակ կերպով բոլոր աւագ ընկերներս մըտահոգ էին։ Մի վատ նախազգացում կարծես համակել էր բոլորին։ Մանաւանդ խմբապետ Լեւոնը եւ Թուրէնը շատ մտահոգ էին, շարունակ կը ծխէին եւ իրարու հետ կը խօսէին ջլիշալով։ Անկիւնը՝ Մհերը դլուխը քաշ, հացի միջուկից իրեն համար չինածս համրիչը կը քաշէր։ Անուշաւանը շարժման մէջ էր, շարունակ կը մօտենար մուտքին եւ մի պահ դուրսը նայելուց յետոյ՝ կ'ասէր.

– Մէկ պահակը եղել է երկու։ Լաւ հոտ չեմ առնում։

Ի՞նչ կարող էինք անել։ Նորից վերադարձանք մեր նախկին կացութեան։ Մի քանի ենթադրութիւններ արինք, բայց չկարողացանք «Հրահանգը կեդրոնից է»-ի պատճառը դուշակել։ Յարատեւ մէկը դիմեց մեր պահակին։ Միամիտ հայ զինուորը, ինքն էլ անակնկալի եկած՝ պատասխանեց.

– Ի՞նչ իմանամ, երեւի մի կատու է թող տուել, որ այդպէս իրար են անցել։

Ապէնը, որ նման առիթները չէր փախցնում, իր օրհնեալ բերանը բացեց.

– Այ մարդ, եթէ դուրսը կատուի փոխարէն Լենինը թող տուած լինի, մեզ հետ ի՞նչ կապ ունի։

– Դէ, հենց էլ է՛գ եմ ուզում ասել, էլի՛, – եղաւ պահակի վերջին խօսքը։

Արդէն գիշերը վրայ էր հասել։

Մէկ պահակը երկու դարձաւ։ Մեր շուրջը տիրեց խոր լռութիւն։ Տաբօրինակ կերպով բոլոր աւագ ընկերներս մըտահոգ էին։ Մի վատ նախազգացում կարծես համակել էր բոլորին։ Մանաւանդ խմբապետ Լեւոնը եւ Թուրէնը շատ մտահոգ էին, շարունակ կը ծխէին եւ իրարու հետ կը խօսէին ջլիշալով։ Անկիւնը՝ Մհերը դլուխը քաշ, հացի միջուկից իրեն համար չինածս համրիչը կը քաշէր։ Անուշաւանը շարժման մէջ էր, շարունակ կը մօտենար մուտքին եւ մի պահ դուրսը նայելուց յետոյ՝ կ'ասէր.

– Մէկ պահակը եղել է երկու։ Լաւ հոտ չեմ առնում։

digitised by A.R.A.R.@

Կողեցի Սերգօն անընդհատ կրկնում էր՝

– «Հրահանգը կեդրոնից է, այսինքն Թիֆլիսից»։

Ու մի պահ եռք, մտահոգ նորից նոյնը կը կրկնէր։

– Խալիֆան էլ մտահոգ երեւոյթ ունէր։ Մալապարիկ նստած՝ ոչ ոքու հետ չէր խօսում։ Հակառակ որ մեր վրայ հսկող պահակները երկու էին եղել՝ ես եւ Ալիշան, մեր կարգ խելքով համարեա ոչինչ չէինք զգում ու անտարբեր էինք։ Տարօրինակ գտնելով մեր մեծերի մտահոգութիւնը, մինչեւ իսկ սկսեցինք ոտմինս խաղալ, սակայն Արսէնը մեր հազիւ սկսած խաղը խանգարելով ասաց՝

– Շա՛ն որդիներ, չլսեցի՞ք, որ դուրսը կատու է մեռել, որ ոտմինս էք ուզում խաղալ։

Նման դէպքում, երբ վէճ կ'ունենային, մեր մեծերը կը խնդային, դիտմամբ մեզ կը գրգռէին եւ իրար հետ կը ուռեցնելով՝ կը զուարճանային. բայց այս անգամ ոչ ոք նայեց մեր կողմը եւ լուռ մնացին. այդ պարադան մեզ զգաստացրեց։ Մի պահ չփոթած՝ իրար երեսին նայելուց յետոյ, մենք էլ կծկուեցինք մեր տեղում, մինչեւ իսկ Արսէնին չպատասխանեցինք։

Դիշերը բաւական առաջացել էր։ Մոռցած մինչեւ իսկ ուտելը՝ արդէն հանուած մահճի էինք անկողին։ Բայց ոչ ոք չէր քնացել։ Աղ ու ձախ ծխողներ կային։ Ամենափոքրիկ ձայնից չատերը կը ցնցուէին։ Ելեկտրականացած մթնոլորտը բաւական ժամանակ չարունակուեց։ Արդէն կէս գիշերը անց պիտի լինէր, երբ յանկարծ մեր շուրջի լռութիւնը խանգարուեց։ Դղրդալով մեր բաժանմունքին բակը մտան մի քանի օթօներ։ Անսովոր երեւոյթը բոլորիս ցնցեց։ Շունչերնիս բռնած, ականջ կտրած, մեր հայեացքը ուղղած առաստաղին կպած փոքրիկ պատուհանին՝ անորոշ խօսակցութեան ձայներ կը լսէինք։

Դուրսը իրարանցում կար։ Իրար էինք անցել նաեւ մենք։ Իսկ երբ նորից, նոր օթօներ մտան բակը, ազմուկը կրկնապատկուեց։ Ռուբէնը տեղից ցատկեց եւ սարսափի մատնուած՝ գոչեց՝

– Տղա՛յք, մեզ կոտորելու կու գան։

Առանց մտածելու թէ ինչո՞ւ մեզ կոտորելու կու գան, բոլորս սկսեցինք հապճեպով հագնուել։

Ոմանք իրենց տարբատները, ոմանք իրենց չապիկները հազիւ կիսատ-պռատ հագնուած, մեր կորպուսի նեղ միջանցքի դուռը բացուեց եւ աղմուկով բաւական թուով մարդիկ խուժեցին ներս։ Այլեւս Ռուբէնը համոզուած, որ Համապասպի եւ ընկերների պէս մեզ էլ կոտորելու կու գան, փաղեց դէպի մուտքը պոռալով՝

– Դիմադրե՛նք, տղա՛յք։

Մեքենաբար հետեւեցինք իրեն եւ խմբուեցինք մուտքին առջեւ, առանց անդրադառնալու, թէ ինչպէ՞ս կամ ինչո՞վ պիտի դիմադրել։

Ներս մտնողները՝ քաղաքային տարբերով, յուզուած եւ մտահոգ երեւոյթով մարդիկ էին, որոնց կ'ուղեկցէին ատրճանակը ձեռքներին մի խումբ Զեկիստներ։ Խմբապետը եռ ու առաջ վազվզելով՝ եռանդով կարգադրութիւններ կ'անէր, միւս կողմից մեր դիմացը գտնուող պատարկ կամերաների շղթաները կը բացուէին։ Մի բան հասկնալու համար իրարու վրայ ելած, աւելի սեղմուած մեր մուտքի ձողերին, հետաքրքրութեամբ կը դիտէինք միջանցքի անցուդարձը։ Հակառակ կրկնուող ազդարարութեան, որ մուտքից հեռանանք, հազիւ մի քայլ ետ քաշուած՝ նորից կը խուժէինք առաջ։ Կամաց-կամաց միջանցքի իրարանցումը եւ ներս մտնողների թիւը նուազեց, մէկը միւսի յետեւից մեզի կից կամերաների շղթաները ազմուկով ու ղնկղնզալով նորից կողպուեցին։ Այլեւս միայն կ'երեւային Զեկիստները, որոնք մի պահ քշփշալով իրար հետ խօսելուց յետոյ, իրենց փորձը վերջացրած, սկսեցին մինչ այդ իրենց ձեռքների ատրճանակները տեղաւորել գօտիների մէջ եւ ինչ որ հրահանգներ տալով մէկի փոխարէն մի քանի պահակների, իրենք էլ հեռացան։ Իրենց հետ հեռացաւ նաեւ

digitised by A.R.A.R.@

ահաբեկ Ռուբէնի երեւակայած կոտորածի սարսափը։ Սակայն մտահոգութիւնը աւելի չեչտուած կերպով կը շարունակուէր։ Մեր կորպուսը լեցուել էր նոր բանտարկեալներով, որի պատճառով կը լինէր դանազան ենթադրութիւններ։ Ընդհանրապէս կը կարծուէր, որ անպայման ապստամբութեան փորձ է եղել։ Սերգօն կը պնդէր.

– Քանի որ հրահանգը կեդրոնից է, այսինքն Թիֆլիսից, ուրեմն ինչ որ կատարուել է, Հայաստանից դուրս է եղել։

Կէս գիշերից բաւական անց, առանց պառկելու մասին մտածելու, ենթադրութիւնները կը շարունակուէին։ Այսպէս թէ այնպէս, անպայման մի նշանակալից դէպք պիտի պատահած լինի, որ այդքան, մասաւորապէս 60–70 նոր բանտարկեալներ են բերել, այն էլ միայն մեր բաժանմունքը։ Սակայն ի՞նչ կարող էր պատահած լինել։ Այս հարցը կը մընար անլոյծ։ Նոր բանտարկեալներից ոչինչ չէր կարելի իմանալ, իրենք իսկ ոչինչ չգիտէին, անակնկալօրէն ձերբակալուել էին, մէկը տունը, միւսը գործի տեղում, մի ուրիշը փողոցում։ Ենթադրելով որ պահակներից կարելի է մի բան հասկանալ, մի քանի հոգի դիմեցին նրանց։ Պահակների պատասխանը կարճ էր.

– Մասիլ արգիլուած է։

Սակայն, Ռուբէնի ասելով, իբր թէ այդ պահակներից մէկը իրեն ժպտալով աչքով է արել։ Այդ պարագան փորձառու Խալիֆայի ուշադրութիւնը գրաւեց։ Ուստի, որպէսզի Ռուբէնը կարողանայ այդ ոստիկանից մի բառ կորզել, մեզ հրահանգեց պառկել եւ սուտ քուն ձեւանալ, իսկ Ռուբէնին ասաց.

– Էդ գինուորի հետն գնա՛ բռնիր։

Խալիֆան եւ մենք բոլորս պառկած մեր տեղերում, կիսախուփ աչքերով եւ լարուած ուշադրութեամբ հետեւեցինք Ռուբէնին։

Վերջապէս Ռուբէնը իրեն աչքով արած գինուորի «հետն» բռնեց, որի հետ հազիւ մի վայրկեան խօսած, շշմած ու բերանաբաց պատին կպաւ եւ մի տարօրինակ տեսք առած՝ մէկէն թեւերը բարձրացրեց եւ ձայնեց.

– Մէրդ չմեռնի, Դաշնակցութի՛ւն...

Այդքան միայն եւ մի թեւատարած արձանի տեսքով քարացած մնաց։ Քարացել էինք նաեւ մենք։

Այդ միջոցին, Մհերը համբերութիւնից դուրս եկած ուղղակի պոռաց.

– Խօսի՛ր, ա՛յ տղայ, ի՞նչ ես քարացել։

Մհերի ամպագոռգոռ ձայնից սթափած՝ Ռուբէնը ինքն էլ պոռալով պատասխանեց.

– Քո հոգուն մատաղ, Մհե՛ր, ձերոնք Թիֆլիսում՝ խփել են ճեմալ փաշային։

Թէ ի՞նչ պատահեց, ի՞նչ ազդեցութիւն գործեց այդ լուրը ընկերներիս վրայ, դժբախտաբար ես չեմ կարող նրկարագրել։ Միայն յիշեմ, որ բոլորս զսպանակից նետուածի պէս ուռքի ցատկեցինք. ոմանք Ռուբէնին կը համբուրէին, կարծես նա լինէր խփողը, ոմանք իրար հետ կը համբուրուէին, Արսէնը անվերջ կը կրկնէր՝ «Բերանդ պագնեմ, Ռուբէն ջան»։

Այս ընդհանուր խանդավառութեան եւ իրարանցումին չէր մասնակցած միայն մէկ հոգի, այդ էլ Խալիֆան էր. ապուշ կտրած իրեն կը նայէի. մտահոգ երեւոյթ ունէր։ Ես որ կը կարծէի, թէ ամէնից շատ ինքը պիտի ուրախանար, իր այդ անտարբերութիւնը ինձ կը զարմացնէր։ Սակայն, ցնցող լուրի ազդեցութիւնը հաղիւ մի քիչ մեղմացած, Խալիֆան մի պահ Ռուբէնին նայելուց յետոյ, տարակուսանքով հարցրեց.

– Իսկ խփողնէ՞րը...

Այդ կարճ նախադասութիւնը բաւական եղաւ, որ բոլորիս վրայ պաղ ջուր լցնի։ Ամէնքը տխրեցին եւ հայեացքներս յառեցին Ռուբէնի վրայ։ Այս վերջինը, որպէսզի կարողանայ պատասխանել եղած հարցումին, կրկին մօտեցաւ մուտքին։ Շատ չանցած՝ նորից նոյն պահակի հետ քշխշելուց յետոյ, ուրախ երեւոյթով դարձաւ եւ ասեց.

– Ճեմալի եւ իր երկու թիկնապահ–

digitised by A.R.A.R.@

ների մահը եղել է վայրկենական, իսկ խփողները կորսնցուցեր են իրենց հետքերը։

Հաղիւ այս քանը ասած, Խալիֆան խոր շունչ քաշեց, դէմքը պայծառացաւ եւ՝

– Ուրեմն, ինչպէս մէջտ, տեռորիստները ազատ են։

Այս ասելուց յետոյ, իր բամբ ձայնով ակնց.

Գնդակ որոտաց, Նայեմբեր ամսոյն,
Պաշտուած ենք մենք, սիրուն իմ Սօսէ,
Չէնքեր վեր առնենք, քաջութիւնն հոս է
Բռ սիրած Սերոբի ուխտեալ օրն այս է...

Անմիջապէս բոլորս ձայնակցեցինք իրեն։ 24 հոգիներս, մոռցած որ բանտարկեալներ ենք, լիաթոք կ'երգէինք, իսկ անդին պահակները չշմած՝ այս անդամ իրենք խռնուած մեր բաժանմունքի մուտքին, բերանաբաց մեզ կը դիտէին։ Բան չասեցին երանք, մինչեւ իսկ արգիլելու փորձ չարին։

Շատ խիստ հսկողութեան պատճառով, չկարողացանք յարաբերութեան մէջ մտնել մեզ մօտ բերուած այդ 60–70 բանտարկեալների հետ։

Արդէն լոյսը բացուել էր։ Օրը դարձաւ կէսօր։ Բոլորին փոխադրեցին այլուր, իսկ մի քանի օր յետոյ լսեցինք, որ բոլորին ազատել են, միայն ինչ որ Մխաղ անունով մէկը փոխադրել են Թիֆլիս։ Լսեցինք նաեւ, որ այդ տեռորի կապակցութեամբ Թիֆլիսում եղել է զանգլուածային ձերբակալութիւն, մի քանի հարիւր հոգի, որոնց նոյնպէս ազատ են արձակել, երբ Վրաստանի Հ. Յ. Դաշնակցութեան Կոմիտէի անդամներ՝ Կարիւն Վազարեան, Մինաս Մակարեան (Շաւարշ Մակարեանի եղբայրը) եւ ուրիշներ այդ տեռորի պատասխանատուութիւնը իրենց վրայ են առել։ Մինչ այդ, լուրերը բերողները մեր վրայ հսկող պահակներն էին։ Այդ հայ զինուորներից լսեցինք նաեւ, որ այդ խնդրի կապակցութեամբ Դրօն Մոսկուայից մասնաւոր առաքելութեամբ Թիֆլիս է եկել, որը իբր թէ փափաքել է նաեւ երեւան անցնել, սակայն իրեն արգիլել են՝ «աւելորդ ցոյցերի տեղի չտալու համար»։

Դրօն երեւանցիների աչքի լոյսն էր։

ԻՇԽԱՆ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ

(Շար. 2)

digitised by A.R.A.R.@



ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒՆ ԿԱՇԿԱՆԴՈՒՄՆԵՐԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐՈՒ ՏԱԿ

Գրագէտը՝ բանուոր — Գրականութիւնը՝ գործիք — Արուեստը՝ փրոփականդայի միջոց — Գրագէտին վերիվայրումները — ժամանակաւոր եւ համամասակակոն ազատութիւններ — Գրագէտը սարկացնող պատանիներ — Գրամենութեան ծիծաղաշարժ չափազանցութիւնները — Գրականութեան մակաբոյծները — Իրաւ գրագէտին ամբողջական սարկացման անկարելիութիւնը

Ա. ՍՏԱԼԻՆԻ ՍՏՐԿԱՑՆՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Լենինի մահէն ետք, համայն Ռուսաստանի միահեծան ապրը դառնալու իր ձգտումին մէջ, Ստալին որպէս անմիջական գործիք օգտագործեց բոլոր անոնք, որոնք իր միջոցով հասած էին նորանոր ու բարձր դիրքերու, եւ այդ դիրքերու պահպանման, պարտիայի տիրապետութեան յաջտութիւնին համար պատրաստ էին միջոցներուն մէջ խորութիւն չդնելու։

Բռնութիւնը, սարսափը, հալածանքը, որոնք յեղափոխութեան մը սկզբնական շրջանին բնական ու անխուսափելի երեւոյթներ են, դարձան կազմակերպուած ու մնայուն հաստատութիւններ, որոնց շնորհիւ կարելի կը դառնար միլիոնաւորներու պահել քացարձակ ենթակայութեան ու լռութեան սահմաններուն մէջ։

Ինչխանութիւնը խլած, մեհատիրապետուն լմբռնումներով առաջնորդուող կուսակցութիւնն ու իր դեկավար առաջնորդը, իրենց դէմ ծառանալու ի վիճակի միակ ուժը նկատեցին արուեստագէտներու, գրպէտներու դասակարգը, որոնք, որքան ատեն որ վերածուած չեն բանուորական խումբերու ու կը պահեն իրենց իրական ու ազատ դիմագիծը, կոչումովն իսկ գրագէտին ու արուեստագէտին, պիտի տեւաբար ձգտէին հառնելու դեղեցիկին, բարձրին. պիտի չդոհանային եղածովը, պիտի ուզէին ձաղ-

digitised by A.R.A.R.@

կել բազմաթիւ անհերելի ու անմարդկային երեւոյթներ, արտայայտել ժողովրդական զանգուածներու ներքին ցաւը, տառապանքը, ընդվզումը, ինչպէս արտայայտած էին ցարական բռնակալութեան տակ Գուչկին մը, Թոլսթոյ մը, Տաստայեւսքի մը, Չեխով մը, Կորքի մը։

Գրականութիւնը, երբ կը պարունակէ արուեստի անկեղծութիւնն ու տաք շունչը, կրնայ հանիլ ամենալայն զանգուածներուն, ու վարակել զանոնք։

Ժողովրդական լայն զանգուածները, բանուորութիւնն ու գիւղացիութիւնը, համայնավար կուսակցութեան ամբողջական հակակրոնի տակ պահելու համար անհրաժեշտ էր, որ երկրէն ներս լոյս տեսնող ոչ մէկ գիրք, ոչ մէկ թերթ, ոչ մէկ տող չմղէր ընթերցողը մտածելու, թէ՝ թերեւս կան աշխարհի մէջ աւելի լաւ պայմաններու տակ ապրող մարդիկ, առանց որ «համայնավարութիւն կառուցելու համար» ստիպուին զոհել ամէն ինչ. թէ՝ թերեւս կարելի էր, առանց զրկելու անհատը սեփականութենէ ու ազատութենէ, ապահովել հաւասարակարգութեան բարօրութիւնը. թէ՝ թերեւս իր կեանքի պայմաններուն դժուարութիւնները արդիւնք էին նոր տեսակի շահագործումներու, նոր տեսակի առանձնաշնորհեալ դասակարգի մը առաջացման. թէ՝ թերեւս կը սխալէին երկրի ղեկավարները, որոնք «պարտիա»ի ղեկավարներն էին, երբ կը յայտարարէին, թէ կ'առաջնորդեն ժողովուրդը դէպի աւելի լաւ օրեր, դէպի համաշխարհային բարօրութիւն, հաւասարութիւն, առանց շահագործումի կեանք։

Պարտիայի համար, իր ղեկավարութեան անսխալականութիւնը կը դառնար հիմնական ու առաջին պայման, ապահովելու համար միակ կուսակցութեան մը տիրապետութիւնը։ Երբ անսխալական են պարտիան ու իր ղեկավարները, այլեւս ի՞նչ հարկ կայ տարբեր մտածողութեանց, երկրորդ կուսակցութեան մը, հակառակ կարծիքներ արտայայտելու, կամ քննելու։ Ճնշումը պարտիան կը կատարէր. եւ որովհետեւ իր առաջնորդն ու ինք ԱՆՍԽԱԼԱԿԱՆ ԷԻՆ, իր եզրակացութիւնները կը դառնային միա՛կ կարելին, միա՛կ ընդունելի, պարտադրաբար գործադրելի բոլորին համար։

Որպէսզի մտքերուն մէջ ոչ մէկ կասկած մնար որդեգրուած ուղիին միակ ուղիղը ըլլալուն մասին, բոլոր անոնք, որոնք տարբեր կարծիքի եղած էին պարտիայէն ներս, պէտք է յայտարարուէին պարտիայի թշնամիներ, դրամատիրութեան ծախուածներ, կոյսերապաշտութեան լրտեսներ, գործակալներ։ Այդպէս ալ յայտարարուեցան, դատուեցան ու գնդակահարուեցան պարտիայի ղեկավարներէն անոնք, որոնք չէին բաժնած Ստալինի տեսակէտները։

Նման ըմբռնողութեան մը հաստատումը, եւ ամբողջ տասնամեակներ պահպանումը կարելի է միայն այն ժամանակ, երբ գրագէտներն ու մտաւորականները վերածուած են գրականութեան բանաւորներու, հլու, կամակատար գործակալներու, երբ խլուած է անոնցմէ ամէն ազատութիւն, եւ երբ գիրք ու թերթ վերածուած են գործարանային արտադրութեանց, որոնք դուրս կու գան ըստ կաղապարի, ըստ միաձեւ, միատեսակ չափերու, որոնք ամբողջովին կը համապատասխանեն պարտիայի տեսակէտներուն ու պահանջներուն, եւ ազատ չեն նկարագրելու ԻՐԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ մարդ անհատի ամէնօրեայ կեանքին։

1930–1940, ամբողջ տասնամեակ մը, քայլ առ քայլ, հրամանագիր առ հրամանագիր, պարտիան ու իր առաջնորդը, բանտարկութիւններով, աքսորներով, գնդակահարութիւններով, հացէն զրկելով, բացարձակ ստրկութեան ատիճանին իջեցուցին սովետական տարածքին վրայ ապրող, գրիչ բռնող, գրչիչով կամ վրձինով արտայայտուող ամէն անհատ, նկարիչէն մինչեւ պատ ներկողը, արձանագործէն մինչեւ պատ շինողը, գրագէտէն մինչեւ թերթերու

digitised by A.R.A.R.@

խմբագիրներն ու աշխատակիցները։

Անոնք որոնք իրենց մէջ կը կրէին իրական արուեստագէտի անմար կրակը, չկրցան ենթարկուիլ ստրկացման պահանջին ու բռնեցին քանտերու, աքսորավայրերու ճամբան, կամ ինքնակամ ու բացարձակ լռութեան դատապարտեցին ինքզինքին, եւ կամ վրայ տուին իրենց գլուխը։

1937-ի հալածանքները մտաւորականութեան, դրագէտներուն ու արուեստագէտներուն դէմ, միայն Հայաստանի մէջ չէ որ տեղի ունեցան, այլ սովետական ամբողջ տարածքին վրայ։ Անչուշտ տեղի չեշտուած ու զանդուածային ձեւով մը հանրապետութիւններէն ներս, ուր լուռ մերժում մը երեւան կու գար ռուսականին մէջ ձուլուելու պահանջին, եւ ազգային դիմադիծը անխախտ պահելու. հիմ մը կը յայտնաբերուէր։

Ծանօթ է ամէնուն այդ շրջանին տեղի ունեցած աստուածացումը Ստալինին, բոլոր դրողներուն կողմէ. լրծնայուրթն փառաբանութիւնը «Մեծ առաջնորդին», «Արեւ»ին, «Անխոյակաձեւ պարտիայիին», որ հոգածու էր սովետական ժողովուրդներուն, եւ առաջնորդողը դէպի ընկերվարութիւն եւ ապա՝ համայնավարութիւն...։

Այդ ժամանակաշրջանին է որ կորսուեցան բոլոր կապերը արեւմտեան աշխարհի դրականութեան, փիլիսոփայութեան, երաժշտութեան և արուեստներու այլ հիւղերուն հետ։ Աստիճանաբար պարտադրուեցաւ սովետական արուեստագէտներուն, քարանալ 19-րդ դարու սահմաններուն մէջ, մերժել որեւէ նոր փնտռտուք, գոհանալ պարտիայի մատնանշածը արտայայտելով եւ կառուցող համայնավարութիւնը դովերգելով։

Գրականութեան մէջ պարտադիր դարձաւ «Սոցիալիստական իրապաշտութիւնը» եւ «անկոփիկդայնութեան» տեսակէտը։ Անհրաժեշտ էր դրականութեան նիւթ ընել կեանքը, իր առօրեային մէջ, եւ լուսանկարչական հարազատութեամբ, որպէս մտապեւեռում ունենալով ընկերվարութեան եւ համայնավարութեան կառուցումը, որուն պէտք է ձգտէր ամէն մէկը սովետական ժողովուրդներու բաղկացուցիչ անհատներէն, եւ որուն արտայայտութիւնը պէտք է պատկերէին բոլոր դրագէտներն ու բանաստեղծները։ Իսկ նկարագրուած դէպքերուն ու պատմութեանց մէջ, ոչ մէկ բախում պէտք չէ գոյութիւն ունենար վատի եւ լաւի միջեւ, ոչ մէկ վատ երեւոյթ կրնար գոյութիւն ունենալ սովետական կարգերու տակ. ինչ որ ներելի էր, մրցումն էր լաւին եւ աւելի լաւին միջեւ, համայնավար վարչաձեւը կը յաւակնէր տրմատախիլ ըրած ըլլալ հոգիներէն բոլոր վատ ապրումները, ձգտումները, ընազդները, պահանջները եւ անոնց տեղ տեղաւորած ըլլալ ընկերվարական բարի զգացումներ միայն։

Եթէ վատ ու բացասական տիպարներ պիտի ներկայացուէին, անոնք պէտք է ըլլային անցեալին մէջ, համայնավարութեան հաստատման դէմ մղուող պայքարի ընթացքին, դրամատիրութեան ծառաներ, մնացորդներ, կայսերապաշտութեան ծախսուած գործակալներ։ Սովետական տիպարները դրական հերոսներ կրնային ըլլալ միայն, համամարդկային ազնիւ զգացումով տոգորուած, վաղուան դրախտ աշխարհը կառուցողներ։

Այս բոլորը պարտիայի կողմէ, պատասխանատու անձնաւորութեանց քերնով տեւաբար յիշեցուեցաւ, պարտադրուեցաւ դրագէտներուն, արուեստագէտներուն։

Գետերազմի տարիներուն, տեսնելով որ սովետական ժողովուրդները աւելի դիւրաւ կ'ըմբռնէին իրենց հողը, տունը, տեղը, հայրենիքը պաշտպանելու գաղափարը, քան թէ պարտիայի սոցիալիստական նուաճումներուն տէր կանգնելու պահանջը, արտօնուեցաւ ազգային ապրումներու արտայայտութիւներ, քաջալերուեցաւ վերադարձ մը դէպի բաղկացուցիչ ժողովուրդներու պատմական անցեալը, փառաւորումը հայրենասիրական, ազգային խոյանքներու։

digitised by A.R.A.R.@

Գատերազմը ապիթ տուաւ նաեւ սովետ քաղաքացիներէն հարիւր հազարաւորներու, առաջին անգամ ըլլալով դուրս գալու երկրատեւ ու պարտադրուած կղզիացումէն եւ յարաբերութեան մէջ մտնելու արեւմտեան աշխարհի կեանքի ազատ պայմաններուն, տնտեսական բարիքներուն, արեւմտեան ձեւի ապրելակերպին հետ։ Կարելի չէ անչուշտ գիտնալ, թէ ի՞նչ չափով, ի՞նչ խորութեամբ ազդուեցան սովետական քաղաքացիները, արեւմուտքի հետ այդ յարաբերութեան պատճառով. որոշ է սակայն, որ պարտիան մտահոգուեցաւ. պատերազմը հապիւ աւարտած, երկաթէ վարագոյր մը իջեցուց սովետական աշխարհին եւ արեւմուտքին միջեւ, ու մտաւորական կղզիացումը արագօրէն հասցուց իր գագաթնակէտին, 1948-ին։

Արուեստի եւ ոչ մէկ ճիւղ զերծ մընաց պարտիայի քննադատութենէն, եւ կարգապահական սանձումէն։ Մինչեւ անգամ երաժշտութիւնը, ուր դժուար թէ կարելի ըլլայ մտածել անդամ մարքսիստական կամ հակամարքսիստական արտայայտութիւններու. կարելիութեան իսկ մասին, ենթարկուեցաւ պարտիայի սատին եւ ուղղումներուն։

1948 Փետրուար 10-ին, պարտիայի կեդրոնական Կոմիտէն յատուկ որոշումնագրով մը կը քննադատէր Վ. Մուրատէլիի «Մեծ բարեկամութիւն» օփերան, ամբաստանելով զայն «ձեւապաշտութեամբ», «ժամանակակից պուրժուական արդիականութեամբ» եւ կը պահանջէր ժողովուրդէն հասկնալի, միտք պահելիք մեղեդիներ արտադրել։

Իր որոշումը հրապարակելէն քանի մը շաբաթ առաջ, կեդրոնական Կոմիտէն հանդիպում մը կը կազմակերպէր սովետ երաժիշտներու ամենակարկառուն դէմքերուն հետ, ուր չորս սովետ զեկավար անձնաւորութիւններ՝ Ժդանով, Քուզնիէցով, Փոսփելով եւ Սուսլով ներկայ կ'ըլլային. Ժդանով կը կարդար պարտիայի մեղադրանքները, կը ներկայացնէր պահանջները, եւ ներ կը խոստովանէին իրենց «սխալած» ըլլալը, կը խոստանային անգամ մըն ալ չմեղանչել։ Իրենց «սխալանքը» ընդունողներուն մէջ էին Շոստաքովիչ, Խաչատուրեան, Շէպալին եւ Մուրատէլի։

Գրականութեան բաժնին մէջ, արեւմտեան բոլոր ծանօթ հեղինակները կ'արժանանային պարտիայի արհամարհանքին, ժխտումին, նուաստացումին։

Էտկար Ալէն Փօն «անկումային գրականութեան մը կոշմարնիրը կը նկարագրէր»։

Ուիլիամ Ֆոքնըրը «Անկումային ընկերութեան մը մսին ծնունդն էր» եւ կը բաժնէր «տխեղծ հերոսներու յատուկ յուսահատութիւնները»։

Սթէյնպէք «կը ստեղծագործէ փքուած, սարսափազդու եւ հակամարդկային գործեր»։

Էօժէն Օ'Նէյլ «ամբողջովին փտած անձնաւորութիւն» մըն էր եւ «Արդի, ամերիկեան յետադիմական գրականութիւնը մահացու թշնամին էր ազատութեան, մարդկութեան, մարդկային արժանապատուութեան, եւ ժողովուրդին» ինչպէս կ'ընդգծէր Մ. Մանէյսոն «Նոր Միրի» մէջ, 1948-ին։

Անորէ Ժիտ «ծերուկ դաւաճան մըն էր, որ աշխարհաքաղաքացիական նախապատութիւններով ֆրանսացի ժողովուրդը ամերիկեան լուծին ենթարկել կ'ուզէր»։

Իսկ Մալրո, Քէօսլէր, Սփէնտէր եւ Սարթր պարզապէս «ապականածներ» էին (Ելիսթրատովա «Լիթէրատուրնայա Կազէտա», 1949 Մարտ, թիւ 2)։ 1949-ի Ապրիլին, եթէ չենք սխալիր, գրական կաշկանդումներուն կը յաջորդէր ֆիզիկական կաշկանդումը. սովետական կայսրութեան մէկ ծայրէն միւսը, մասնաւոր հրամանագրերով եւ սխեմատիք կազմակերպութեամբ դէպի Սիպերիա կ'աքսորուէին տասնեակ հազարաւորներ։ Միայն Հայաստանէն, այդ տարի 60·000 հայեր աքսորուած են Սիպերիա, ըստ Հայաստան վերադարձած աքսորեալներ-

digitised by A.R.A.R.@

ներու, (30·000 կը գրէին այն օրերուն արտասահմանի հայ մամուլի ազգայնական թերթերէն անոնք, որոնք որեւէ պարտաւորութիւն չէին զգար ամէն գնով ծածկելու համայնավարութեան հալածանքները հայ հողին վրայ, հայ ժողովուրդին հանդէպ)։

Այդ պայմաններուն տակ գրականութիւնը բնականաբար կը հեռանար արեւոտէն, վերածուելու համար չահաբեր արհեստի մը՝ ոմանց մօտ, ապրուստի նուազագոյն միջոց մը ապահովող զբաղում՝ այլոց մօտ։

Այսպէս չորս տարի շարունակ։

Ստալինեան սարսափի վերջին չորս տարիները...

Գրականութեան եւ արուեստի համար մահաբեր բռնակալութիւնը, ստրկացնող վարդապետութեան մը ստրկացնող պահանջները։ Եւ այդ բոլորին միակ կարելի պատասխանը՝ լրծնաշուրթն փառաբանութիւն, լրագրական տեղեկատուութեանց նմանող գրականութիւն, քարոզչական պատմուածքներ ու վէպեր։ Ու սպասում։

Գրադէտը ամբողջովին վերածուած բանուորի։

Ու յանկարծ, անսպասելի լուրը Ստալինի մահուան։

(Շար· 1)

Բ. ՓԱՓԱԶԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

(1945 - 1960)

ՍՊԱՆԻԱ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԷՆ ԱՌԱՋ

1939 Ապրիլ 1–ին թնդանօթները լռեցին Սպանիոյ մէջ, երեք տարի տեւող քաղաքացիական արիւնալի պատերազմէ մը ետք, որ երկրին արժեց աւելի քան մէկ միլիոն մեռեալ։ Այդ թուականէն ետք սպանական դրականութիւնը կը սկսի իր ամէնէն հարուստ շրջաններէն մէկը։

Միկէլ Տէ Ունամունո, Անթոնիո Մաչատօ եւ Խուան Ռամոն Խիմէնէզ նոր աւիշ մը կը հաղորդէին տիրող յոգնած վիպապաշտութեան։ Բանաստեղծութիւնը մանաւանդ կ'ապրէր բեղուն շրջան մը, երգելով մեծ թեմաները՝ – սէրը, ճակատագիրը, մահը, տիեզերքը։ Իւրաքանչիւր բանաստեղծ իր դրոշմը կը դնէր երգած նիւթերուն վրայ։ Ունամունո ժուժկալ էր, Մաչատօ՝ փաթէթիք, Խիմէնէզ՝ մաքուր, Լորքա՝ հեշտասէր, Ալպէրթի՝ գիտուն, Սալինաս՝ զգայուն, Կուլէն՝ տիեզերական, Ալէյքսանթրէ՝ դերիրուպաշտ։

Յատկանշականը այն է, որ այս շրջանի դրեթէ բոլոր գրողները, հակառակ անոր որ կ'ապրէին պատմական եւ քաղաքական խառնակ շրջան մը, գրեթէ կողմ չեղան տեղի ունեցող պայքարին մէջ։ Անոնք աւելի կը հեռաքաշուէին իրենց գործին գեղարուեստական որակով, քան քաղաքական մտահոգիչ մըթնոլորտով։ Ճիշդ է, որ բոլորն ալ կը պատկանէին ազատական պուրժուա ընտանիքներու եւ կողմնակից էին կազմուող հանրապետութեան, բայց երբ 1936–ին այդ երիտասարդ հանրապետութիւնը վտանգուեցաւ, բոլորն ալ հասկացան, որ պէտք էր զայն պաշտպանել եւ լքելով իրենց փղոսկրեայ աշտարակը փողոց իջան քարոզելու եւ կռուելու համար։ Բայց արդէն շատ ուշ էր։ Ոմանք սպաննուեցան, ուրիշներ աքսորուեցան։

Բանաստեղծներ գտնուեցան, որոնք ուզեցին ինքնատիպ ըլլալ եւ մտքին տալ առաջին պաշտօնը։ Մաչատօ սակայն կը բողոքէր այս շարժումին դէմ եւ կ'ըսէր· «միտքը չ'երգեր»։ Եւ կը պահանջէր, որ բանաստեղծութեան մէջ նախ սիրտը խօսի։

Սակայն սպանացի վիպասանները փորձեցին վէպեր գրել հետեւելով մտքի քմահաճոյքներուն։ Առենէ մը ի վեր սպանական վէպը կորսնցուցած էր իր երբեմնի կարեւորութիւնը եւ իր նիւթերը կը վերցնէր երկրին գաւառներէն։ Նոյնիսկ լաւագոյն վիպասանները, ինչպէս Վիսէնթէ Պլասքօ Իպանիէզ, կ'ինային յանախ նոյն թերութեան մէջ։ Ուստի երիտասարդ գրողներ ուզեցին վէպը տանիլ դէպի նոր ուղղութիւններ, հետանալով իրականութենէն, ինչ որ հակառակ էր բնապաշտ եւ իրապաշտ յատկանիշներով ծանօթ երկրի գրական հանճարին։

Այս շեղումին պատասխանատուն կը

digitised by A.R.A.R.@

նկատուի հանրածանօթ փիլիսոփայ Օրթէկա Ի Կասէթ, որ 1925-ին հրատարակեց երկու գիրք. Արուեստին ամմարդկայնացումը եւ Գաղափարներ վէպի մասին, ուր առաջ կը նեսէր այն միտքը, թէ վէպը պէտք չէ հիմնուի իրականութեան վրայ, այլ հարկ է ինքզինք արժեւորէ իր ոճով։ Գալով հեղինակին, ան երբեք չ'ընդունիր որ ուզած է նոր ուղղութիւն մը տալ վէպին, այլ բաւականացած է միայն ախտաճանաչում մը ընել։

Գեղարուեստական վէպի ներկայացուցիչները՝ քաշուած իրենց փղոսկրէ աշտարակին մէջ՝ կը կերտեն փայլուն ու անթերի նախադասութիւններ, ինչպէս Ռոմոն Կոմէզ Տէ Լա Սէրնա, Գէնխամին Խարնէզ եւ Փերէզ Տէ Այեալա։ Այս սերունդին լաւագոյն ներկայացուցիչն է Փիօ Պարոխա, որ չուզեց հետեւիլ տիրող նորաձեւութեան։ Պարոխա մարդատեաց մըն էր եւ կ'ապրէր հեռու մարդկային ընկերութենէն։ Նոյն ատեն կատաղի անիշխանական մըն էր եւ անդադար պայքարեցաւ մարդոց ապուշութեան, ատելութեան, մոլեռանդութեան, կեղծաւորութեան, կառավարութեան, պուրժուա բարոյականին եւ նոյնիսկ նիւթական յառաջդիմութեան դէմ։ Լաւ կը ճանչնար սպանական հոգին եւ անոր յատկացուց իր լաւագոյն էջերը։

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԷՆ ԵՏՔ ԶՈՒՏ ԻՐԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Պատերազմի ատեն եւ պատերազմէն ետք ծնող թէ՛ բանաստեղծական եւ թէ վիպական գործերը եղան արիւնալի դէպքերուն նուիրուած գործեր։

Արթուրօ Պարէա եւ Մաքս Աուպ, որոնք կը կռուէին հանրապետականներու կողքին, ստիպուեցան ուրիշ երկիր անցնիլ պատերազմէն ետք։ Պարէա, Ըմբոստի մը դայլբնոցը վէպին մէջ, որ ունի երեք մաս, կը պատմէ իր իսկ կեանքը։ Մանկութիւնը, որ կ'անցնէ փողոցներու մէջ, արկածները Մարոքի պատերազմի ընթացքին եւ ճախակողմեան զինուորի յիշատակները, ճակատագրական տարիներուն։ Մինչ Մաքս Աուպ, Մոզական Լաբիւրինթոսը վէպին մէջ, որ ունի նոյնպէս երեք մաս, կը պատմէ ընդհանուրը հետաքրքրող դէպքերը՝ 18 Յուլիս 1936 Ֆրանքիստ ըմբոստացումը, Վալէնսիայի կռիւները, Մատրիտի պաշտպանութիւնը, Պարսէլոնայի ռմբակոծումը եւ Թէրուէլի դրաւումը։ Հակառակ իր դաղափարներուն, Աուպ անկողմնակալ ձեւով կը մօտենայ դէպքերուն եւ կարծես կը ջանայ իրականութիւնը լուսանկարել։

Նոյն մտահոգութիւնը ունի ուրիշ արժէքաւոր գրող մը՝ Ռիքարտօ տէ լա Ռէկուէռա։ Երիտասարդ եւ զրականութեան ուսանող, երբ կը ծագի քաղաքացիական պատերազմը, Ռէկուէռա կը կռուի ազգայնական բանակի շարքերուն մէջ։ Սակայն իր գործերը գերծ են քաղաքական ակնարկութիւններէ։ Զէնֆերուն ծանրութիւնը վէպին մէջ, կը պատմէ արկածները ենթասպայի մը, որ նոյնինքն հեղինակն է։

Հերոսը՝ Ալկուէթօ Կուսման կը մասնակցի բոլոր մեծ կռիւներուն։ Կը նկարագրէ ահռելի տեսարաններ. թշուառական ճակատագիրը դինուորներուն որոնք կը պայքարին պաղին, անօթութեան, գազանային բնազդին եւ պետերուն անզգութեան դէմ։ Հեղինակին առաջին եւ միակ նապատակն է տալ ճշմարտութիւնը, ըլլայ ան վեհ կամ ճղճիմ, ողբերգական թէ կատակերգական։ Անմոռանալի են այն տեսարանները, ուր հեղինակը կը նկարագրէ խումբ մը զինուորներուն ճաշը, տակաւին չթաղուած դիակներուն մէջ. կամ կոր կոր եղած դիակներուն փոխադրութիւնը ջորիներով...

Այս յատկութիւնը կը գտնենք յաճախ շատ մը սպանացի վիպասաններու երկերուն մէջ, որոնք կը ջանան իրենց ապրած արիւնալի ժամանակին անկողմնակալ վկաները ըլլալ։

Այս սերունդին մեծագոյն գրողը սակայն կը կոչուի Քամիլօ Խոզէ Սէլա։

digitised by A.R.A.R.@

Ան կը հանդիսանայ սպանական նոր գրականութեան ամէնէն ինքնատիպ ըստեղծագործողը։ Իր վարկը շատ մեծ է։ 1942-ին կը հրատարակէ գիրք մը, Փասֆուալ Տուարթէի ընտանիքը, որ կը վերբիպի դրաքննութեան ուշադրութենէն։ Անիկա վէպն է մարդու մը, որ խիստ պատուախնդիր ըլլալով՝ ոճիր մը կը գործէ։ Սէլա կը քննադատէ այն գաղափարը, որ շատ մը ազգային յատկութիւն եւ առաքինութիւն կարծուած զգացումները, պարզ նախապաշարումներ են ժառանգուած ուրիշ ժամանակներէ։ Հնազանդելով սպանական պատուի բծախնդրութեան, Փասքուալ ոճրագործ կը դառնայ։ Կացութեան անհեթեթութիւնը կը զօրանայ նաեւ այն բանով, որ մեր ներկայ Տոն Քիշոթը, որ կը պաշտպանէ ազնուական գաղափարները՝ շրջապատուած է միջակ եւ վատասերած անձերով. հայրը մաքսանենգ է, մայրը՝ գինեմոլ, քոյրը՝ գող եւ անբարոյական, եղբայրը՝ ապուշ եւ կինը՝ անհաւատարիմ։

Գիրքը չհրատարակած՝ Սէլա կը խնդրէ Պարոխայէն, որ անոր նախաբան մը գրէ, Պարոխա կը կարդայ, կը հաւնի, բայց նախաբան չի գրեր. կ'ըսէ Սէլային.

«Եթէ կ'ուզես ունպայման բանտ նրքալ, գնա՛ մինակդ, տարիդդ տակաւին կը ներէ։ Գիրքիդ նախաբանը չեմ գրեր»։

Վէպը հրատարակուեցաւ եւ հեղինակը բանտ չդնաց։ Իրականին մէջ, Սէլա, որ հին Ֆրանքիստ մարտիկ մըն էր, յաջողեցաւ խուսափիլ դրաքննութենէն։ Քանի մը շաբաթ վերջ գիրքը դրաւուեցաւ, բայց առաջին հարուածը տրուած էր պետական անզիջող հեղինակութեան։

Քսան տարիներ անցած են եւ Սէլա ստուած է տասնըհինգէ աւելի գործեր, որոնք մեծցուցած են իր համբաւը։ Սակայն շատեր հակասութիւններ կը տեսնեն իր կեանքին եւ գործին մէջ։ Ոմանց համար, Սէլա սպանական վէպը ազատագրողն է եւ երիտասարդ վիպասաններուն ուսուցիչն։ Ուրիշներուն համար, ան պուրժուա վիպասան մըն է, որ տէր է գրելու արուեստին, որ կը գրէ զուարճացնելու կամ դողացնելու համար իր դասակարգին մարդիկը, առանց որոշուած սահմանը անցնելու։ Ինչ որ անժխտելի է, ոէժիմին պաշտօնական դրողը ըլլալով հանդերձ, նոյն ատեն, Սէլա հանդիսացաւ Ֆրանքօիստ գաղափարաբանութեան մեծագոյն քանդիչը։ Ուրիշ մէկ գործի մը մէջ՝ Փեթակը, որ հրատարակուեցաւ Գուէռնոս Այրէս 1951-ին, Սէլա կը նկարագրէ Մատրիտը Ֆրանքոյի տիրապետութեան ամէնէն մութ օրերուն։ 1942-ի համաշխարհային պատերազմի ընթացքին, չէզոք Սպանիան անհամբեր կը սպասէ պատերազմի վախճանին եւ Գերմանիոյ յաղթանակին։ Ժողովուրդը՝ թշուառ եւ յուսալքուած՝ կը մաքառի առօրեայի հետ. սեւ շուկայ, անգործութիւն, նեխածութիւն։ Հակառակ այս բոլորին, մարդիկ կ'ուզեն ապրիլ եւ ժամանակը սպաննելու համար կ'աչխատին գրասենեակ պէս, կամ կը վազեն սեռային հաճոյքներու ետեւէն։ Այս վէպին մէջ մասնաւոր հերոսներ չկան, հակառակ որ կան հարիւր եւ յիսունէ աւելի գործող անձեր։ Վէպին բուն հերոսները կը կոչուին վախը, անձկութիւնը, անօթութիւնը եւ սեռային քընաղը։ Ատոնք են, որ կը մղեն անձերը գործելու, շարժելու, ապրելու, դիրք տեսնելու, իրարու հետ յարաբերելու, առանց որեւէ արդիւնքի։ Կացութիւնը այնքան յուսահատական է, որ մարդիկ կ'ապրին օրը օրին, նախնական մարդոց ցեղախումբի մը պէս։ «Վէպս, – կը գրէր հեղինակը, – տժգոյն ցոլքն է իրականութեան, շուքը առօրեայ իրականութեան, դաժան, քաղցր եւ ցաւագին իրականութեան»։ Փեթակը սակայն չունեցաւ շարունակութիւն։ Սպանական ինկերութիւնը յառաջդիմեց եւ այս յառաջդիմութիւնը արձանագրուած կը գտնենք երկու երիտասարդ գրողներու՝ Լուիս Ռոմերոյի եւ Խոզէ Քոռալէս Խէյի գործերուն մէջ։

Լուիս Ռոմերօ ծնած է Պարչէլոնայի մէջ, 1916-ին։ Ճանչցած է իր երկիրը ենթնական փոթորկոտ տարիներուն. ապրած է քաղաքացիական պատերազմի

digitised by A.R.A.R.@

մուք տարիները, յետոյ դարձած է Արժանքին։ 1951–ին իր «Նորիան» վէպին համար կը ստանայ «Նատալ» մրցանակը, որ Սպանիոյ մէջ կը համապատասխանէ Կոնքուրին։ Անկէ ետք կը հրատարակէ պատմուածքներ եւ վէպեր, որոնցմէ ամէնէն յատկանշականը կը կոչուի Միւռները։ 1955–ին, Պարչէլոնայի մէջ, մարդ մը կ'ըմբոստանայ թշուառութեան դէմ, որ զինք վերածած է տեսակ մը փարիայի։ Որպէսզի աշխատանքի գործիք մը չըլլայ առանձնաշնորհեալներու ձեռքին տակ, եւ որպէսզի կինը, Քարմէլան ըսուիպուած չըլլայ հարուստներուն աղտոտ ամանները եւ աղտոտ լաթերը լուալու կը դառնայ աւազակ։ Կը փորձէ նախ կողոպտել պաշտօնեայ մը, որ դրամատունէն գանձած է ամբողջ հաշուոյն մեծ գումար մը։ Այս գումարով պիտի վճարուին գործաւորները. բայց տկարանալու առեն չէ։ «Այնքան ատեն որ գործաւորը չէ ստացած իր դրամը, ան կը պատկանի դրամատիրոջ եւ ինք դրամատէրն է որ պիտի գողնայ հակառակ աշխարհի բոլոր քահանաներուն, դատաւորներուն եւ ոստիկաններուն»։ Ըմբոստացումին նպատակը յստակ է։ Բնականաբար փորձը կը ձախողի։ Ինք կը ստիպուի փախչիլ։ Կը հալածուի եւ վերջ ի վերջոյ կը մեռնի գնդակներուն տակ, ոչ անոնց ձեռքերով որոնց դէմ ըմբոստացած էր, այլ իր խակ դասակարգին պատկանող մարդոց ձեռքերով։

Այս վէպը կը պատկերացնէ սպանացի ժողովուրդին հոգեկան տագնապը քաղաքական պատերազմի վախճանէն քսան տարիներ ետք։ Յաղթականները եւ պարտուողները կողք կողքի կ'ապրին նոյն զառնութիւնը եւ նոյն յուսախաբութիւնը։ Անոնք կորսնցուցած են իրենց ազատութիւնը, ապրելու հաճոյքը եւ կարելի բարելաւումի մը յոյսը։ «Լաւագոյնները, – կ'ըսէ Ռոմէրօ, – մնացին պատերազմի դաշտերուն վրայ, կամ բանտերու մէջ, ուր խեղդուեցաւ իրենց երիտասարդութիւնը, կամ ինկան դահիճներու գնդակներուն տակ»։ Վերապրողներէն իւրաքանչիւրը կ'ուզէ իր անձկութիւնը պահել աչքերէ հեռու. եւ այս նախապաշարումներու եւ հպարտութեան երկրին մէջ, իւրաքանչիւր անձ կ'ապրի առանձնութեան մէջ։ Եթէ կ'ուզէ ելլել այդ վիճակէն, կը բախի շուրջիններուն հակառակութեան, կարծես բոլորն ալ օտարականներ ըլլային։ Ռոմէրոյի ոճը ջղուա է, առանց պաճուճանքի, ինչ որ իր պատմումին կու տայ առամաթիկ ուժականութիւն մը։

Ինոզէ Քօրալէս Խէէայի Միւռ երեսը վէպը մեզ կը փոխադրէ Մատրիտ, 1945–1955–ի շրջան։ Անհամար անձեր եւ դէպքեր կը ջնան այդ շրջանին մէկ ամբողջական պատկերը տալ մեզի։ Խէէա չի բաւականանար միայն նկարագրելու որոշ դասակարգ մը, այլ իր ժամանակակից բոլոր դասակարգերը, զանոնք խըմբելով երեք բաժիններու մէջ. Հիները, որոնք չեն հասկնար այն ողբերգութիւնը, զոր կ'ապրին. հասուն մարդիկը, որոնք մարտնչեցան մէկ կամ միւս ճակատին համար եւ որոնք կորսնցուցած են ամէն պատրանք եւ ամէն խտէալ. երիտասարդները, որոնք կ'ըմբոստանան իրենց ապրած կեանքին դէմ, որովհետեւ զայն կը նկատեն տափակ, կամ կ'ընդունին ուանդութիւնները։ Այս վէպին անձերը միջակ եւ հասարակ մարդիկ են, եւ կ'ապրին իրական եւ տափակ կեանք մը, այն կեանքը, որ ապրեցան տասը տարիներու ընթացքին։

Վիպասաններու նկարագրած այս հեղձուցիչ մթնոլորտին մէջ կ'ապրին նաեւ բանաստեղծները. Պլաս տէ Օթէրօ, Ինոզէ Հիէռօ... եւ կը կառուցանեն մարտական գործ մը։ Ապրելով ժողովուրդի կողքին՝ կը խօսին անոր բերնով։ Կը հետապնդեն նոյն նպատակը. երկիրը արթնցնել իր թմբիրէն, զայն ենթարկել փոփոխութեան, զայն դարձնել բնակելի իր բոլոր զաւակներուն համար։

Նոր բանաստեղծները կապերը խզած են անցեալի հետ, մանաւանդ լեզուի եւ ոճի մարզերուն մէջ։ Կը գործածեն խիստ եւ անպաճոյճ լեզու մը, առանց պատկերի, առանց խորհուրդի։ Միակ բանաստեղծը, որ ժողովրդական համբաւ շա-

digitised by A.R.A.R.@

հած է, եւ կը կարդացուի բոլորին կողմէ, Անթոնիօ Մաչատօն է։

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԸ

Խոսամնալից անուններ են Խուան Կոյթիզոլօ, Խէզուս Սանթոս, Խէզուս Փաչէքօ եւ Աննա Մարիա Մաթուէէ։ Իրենց մանկութիւնը անցուցած են աւերուած քաղաքներու մէջ, տեսած են պատերազմին վայրագ խաղերը եւ կը դրեն ձերբազատուելու համար, ազատագրուելու համար իրենց մղձաւանջային յիշատակներէն։ 1954-ին, Խուան Կոյթիզոլօ կը յայտարարէր.

«Այսօրուան երիտասարդ վիպասաններէն շատեր մանուկներ էին քաղաքացիական պատերազմի ընթացքին։ Իրենց մանուկի աչքերով տեսան ահռելի բաներ։ Հետագային մոռցան զանոնք։ Բայց եղաւ ատեն մը, երբ կամայ թէ ակամայ վերյիշեցին։ Եւ յիշատակները կ'ըլլային աւելի յստակ տարիներու ընթացքին, երբ իրենց ոսկորներն ալ կը կարծրանային եւ արիւնին կը դառնար աւելի հարուստ։ Այն ատեն գրեցին վէպեր, ոչ թէ մոռնալու համար այդ ահռելի բաները, այլ ձերբազատուելու համար անոնցմէ։ Առաջին ալիքն եղաւ, որ կը զբաղէր աւելի թուումը ընել փլած տուներու եւ գնդակահարուած տնձերու, հասաւ երկրորդ ալիքը, աւելի դանդաղ, բայց աւելի զօրաւոր, որ պատմեց այն ինչ որ ֆանդուեցաւ եւ ինչ որ ծնունդ առաւ խիղճերուն մէջ»...

Այսպէս մանուկները եւ պատանին մեծ տեղ ունին նոր վէպերու գործողութեանց մէջ։ 1955-ին, Խուան Կոյթիզոլօ, իր Սուգ դրախտին մէջ վէպով, կը զբաղէր ողբերգական վիճակովը անոնց, որոնցմէ պատերազմը խլած էր անմեղութիւնը, զանոնք չփումի մէջ դնելով արիւնալի իրականութեան հետ, եւ որոնք օրինակ առնելով իրենց մեծերէն կը խաղային մահացու խաղեր։ Նոյն տարին, Էլենա Քուիրոգա իր Դիմակը վէպին մէջ, կը պատմէր անկումը ազնուական ընտանիքի մը զաւկին, որ իր աչքերով տեսած էր հօրը եւ մօրը սպանութիւնը։ Մանուկներ են հերոսները Աննա Մարիա Մաթուէէի կէս իրական եւ կէս ֆանթասթիք վէպերուն. Աբէլները, Առաւօտեան այրուածքները, ժամանակը հատորներուն մէջ, մեր առջեւ կը բանայ անոնց սրտին հմայիչ ծալքերը։

Մանկութիւնն ու երիտասարդութիւնը, երկու թեմաներն են սպանական երիտասարդ գրողներուն։ Կոյթիզոլօ, իր Ձեռքի խաղեր գործին մէջ, կ'ոգեկոչէ քազքենի երիտասարդութիւնը, որ կորսնցուցած է կեանքի ուղին։ Աւելի յատկանշական է Ռաֆայէլ Ծէրլոզիոյի Լա Խարամայի ջուրերը վէպը։ Լա Խարաման փոքրիկ գեա մըն է, ուր ամառուան կիրակիները, Մատրիտի երիտասարդ ու երիտասարդուհիները կու գան մոռնալու իրենց միօրինակ առօրեան։ Բոլորին համար, այս գետակը կը ներկայացնէ փախուստը, խաբուսիկ երջանկութիւնը լոգնալու հաճոյքին մէջ, ճաշը խոտերու վրայ, պարը սրճարաններուն առջեւ։ Իրականութեան մէջ, ժանձրոյթը չուտ կը ժամանէ։ Իրիկուան դէմ կը սկսին վէճերը, գինովութիւնը, մինչ անդին աղջիկ մը կը խեղդուի ջուրերուն մէջ։ Աղջկան մարմինը դուրս կը հանեն, ոստիկանապետ մը կը հարցաքննէ ներկաները. սրճարաններուն լոյսերը կամաց-կամաց կը մարին... Գառնութիւն ամէն կողմ, դառնութիւնը երիտասարդութեան մը, որ ինքզինքը խաբուած կը զգայ իր երէկներէն։ Ոճը նկարչական է, եւ վէպին ընդհանուր արուեստը ա՛չ թէ ռարկայական, այլ տպաւորապաշտ է։

Եւ դէպի տպաւորապաշտութիւն կը դիմէ սպանական արդի գրականութիւնը։ Կամաց-կամաց կը մոռցուին անցեալի մռայլկումները եւ անձնական մտահոգութիւնները։ Գրողները կը նային իրենց չուրջը, կը մտենան մարդոց եւ կը ջանան հասկնալ անոնց դժուարութիւնները, ապրելու պայմանները բնութեան մը մէջ, որ կ'այլափոխուի ամէն վայրկեան։ Կը զբաղին այն միլիոնաւոր մարդոցմով,

digitised by A.R.A.R.@

որոնք պատմութիւն չունին, որոնք ոտքի կ'ելլեն արեւին մէկ հրամանով, կ'երթան իրենց արտերը, շարունակելու համար առօրեայ եւ յաւիտենական լուռ աշխատանքը եւ կը նեռեն հիմերը ապագայ Պատմութեան:

Այսպէս, Իկնացիո Ալտէքոա, իր Արեան կրակները, Արիւելեան հովին հետ եւ Զրհորը վէպերուն մէջ՝ կ'ուռուցնասիրէ աշխատաւորական դասակարգին նախնական հոգեբանութիւնը եւ Մեծ Ամեր գործին մէջ կը պատմէ խումբ մը ժնոբսներուն կեանքը, որոնք կ'երթան մինչեւ Իսլանտա բրածուկ որսալու համար: Գիւղին կեանքն է որ մեզի կու տան Անա Մարիա Մաթուէյ իր Զպտիկ Թատրոնով, Եէզուս Սանթոս իր Հպարտները-ով եւ Կոյթիզոլո իր Նիխարի դաշտերը-ով: Քաղաքը, դաւառը, լեռը կը դառնան ներշնչման նիւթ:

Վէպը կը դառնայ մարգկային, գրուած՝ մարդը ճանչցնելու եւ սիրցնելու համար: Եւ արդի սպանական գրականութիւնը դրած ըլլալով իր ուղին, մեծաքայլ կը յառաջանայ դէպի փայլուն ապագայ մը:

ՓՈՐԹՈՒԿԱԼ

Այս երկիրը ուղղակի չմասնակցեցաւ երկրորդ համաշխարհային պատերազմին, սակայն կրեց անոր անուղղակի ազդեցութիւնը: Լիզպոն դարձած էր կեղրոնատեղի եւրոպացիներուն, որոնք փախչելով գերման արշաւողներու առջեւէն կը ջանային անցնիլ ազատ երկիրներ: Եւ այս լեզուներու, ցեղերու եւ դաղափարներու խառնարանը չէր կրնար չազդել փորթուկալցի դրողներուն վրայ:

Ֆրանսական մշակոյթը, որ խոր ազդեցութիւն ունեցած էր այս երկրի գրականութեան վրայ, կ'ապրէր դժուարին ժամեր. փորթուկալցիները դարձան դէպի նոր աշխարհ – Միացեալ Նահանգներ եւ Պրազիլիա: Գրելու ձեւերն ու թեմաները փոփոխութեան ենթարկուեցան:

Ամուլիոն Ռիպէրօ, որ փորթուկալցի դրողներուն ամէնէն տարեցն է եւ ամէնէն նշանաւորը, այս դուրսէն եկող ազդեցութիւնը օգտագործելով առած է նոր գործեր, հակառակ իր յառաջացեալ տարիքին: Վոլֆրամ կը պատմէ նոյն անունը կրող մետալին շուրջ տեղի ունեցող պայքարները: Երբ գայլերը կ'ոռնոն գործով՝ կը քննադատէ իր երկրին կառավարութիւնը եւ հաստատութիւնները: Այս գործին համար հեղինակը դատի կանչուեցաւ: Ռոմարիկաէզի մեծ տառը վէպին մէջ կը հանդիսանայ հաւատարիմ եւ երախտագէտ երգիչը իր ծընդավայր նահանգին, Պէյրայի:

Ֆերէյրա տէ Գասթրօ ունեցած է արկածալից կեանք մը եւ տեսած է կեանքին դառն կողմերը, սակայն ունի ժուժկալ, մաքուր ոճ մը, դէպքերը ներկայացնելու ապագնդ եւ մարդոց հանդէպ հասկացողութիւն ու դուրգուրանք: Կը հետաքրքրուի խոնարհներու թշուառութիւններով եւ վեր կ'առնէ արդի ընկերութեան հակընդէմութիւնը: Նշանաւոր են իր Կայս Անտառ, Տիրոջ Գառնուկները եւ Առաքելութիւնը:

Ժօաքիմ Տարքոս, որ մեծ համբաւ մը եղած է, ունի երկու թեմաներ. կնոջ հոգին եւ պուրժուազիայի կեանքը: Առարկայական ձեւով կը դիտէ աշխարհը եւ դայն չի խնամեր: Վէպերուն մէջ տիրող մթնոլորտը պզտոր է, որովհետեւ իր հերոսները կը զբաղին ընգհանրապէս դրամով եւ ամէն բան կ'ընեն անոր տիրանալու համար:

Վիթորինօ Նէմէսիօ, իր Կայր օմը վէպին մէջ, արդիական ոճով մը կը պատմէ հին բաներ. Ատրեան կղզիներուն կեանքը անցեալ դարուն, կարօտի շեշտով մը:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԸ

Նոր սերունդը կառչած է նոր իրապաշտութեան: Ան կը փորձէ օգտակար դառնալ, երկրին հաւատարակչութեան եզր մը փնտռելով: Եզր մը՝ հողագործի աշխատանքին եւ քաղաքներու գործու-

digitised by A.R.A.R.@

նէութեանց միջեւ։ Արվէս Ռէտոլ կը հետաքրքրուի համէստ մարդոց կեանքով։ Բժիշկ Ֆէրնանտո Նամօրա, մարդոց հոգիները զննող անգութ գրող մըն է։ Աւկուսթա Գէտա Լուիս, որ ասուած է 1953–ին տարօրինակ գործ մը՝ Սիպիլը։ Այս գործին մէջ հեղինակուհին կը յայտնաբերէ փրուսթեան յատկութիւններ. քառասային եւ խորհրդապաշտ յիշողութիւն մը, անթիւ անհամար անձեր, որոնց կեանքերը իրարու կը խառնուին, կը բաժնուի, կրկին միանալու համար ընկերային այլազան միջավայրերու մէջ։ Այս հեղեղային ընթացքը կը դտնենք Ակուսթինայի միւս գործերուն մէջ՝ Անբուժելիները, Պարիսպը, Սարսափը, որոնք մէյ մէկ հակազդեցութիւններ են նոր իրապաշտութեան դէմ, եւ նախախոյրիքներ գոյապաշտական գրականութեան մը։

Բանաստեղծները չունին այլեւս իրենց համբաւաւոր պարբերագիրքը Քրէզենսան, սակայն իրենց առջեւ բաց են մեծ օրաթերթերու գրական էջերը։ Կը բնոնան արտայայտուիլ արձակով եւ ոտանաւորով, ինչպէս Միգուէլ Թորկա, որ նոյն ատեն բանաստեղծ է, վիպասան եւ թատերագիր։ Խիտ ու խրթին լեզուով մը կ'երգէ իր վայրագ սէրը իսպէրական հողին համար։ Խոզէ Ռէյիոս կ'ապրի առանձնութեան մէջ։ Իր հաւաքածոներուն մէջ՝ Ֆատո, Պոէմաներ Աստուծոյ եւ Սատանայի, Ցանդ եւ Հրեշտակը, կ'երգէ դժբախտութիւնը կորսուած արտերու եւ անիծուած ճակատագիրներու։ Իր տողերուն մէջ կայ կծու երգիծանք մը, նոյն ատեն մեծ գորով մը, եւ անհուն հետաքրքրութիւն մը ատուածային բաներու հանդէպ։

Առաջին պերբրապաշտ բանաստեղծը կը կոչուի Անթոնիո Փեսոա, որ ներկայիս Փորթոյի թատրոնին անօրէնն է։ Իրեն յաջորդեցին Մարիո Սէդարինին, Անթոնիո Լիսպոան, իսկ կայ անիծեալ բանաստեղծ մը՝ Ռուի Սինաթի եւ կաթողիկէ բանաստեղծ մը՝ Խոզէ Պլանք։

Ցիշենք նաեւ ափրիկեցիներ, որոնք կը պատկանին Փորթուկալի գրականութեան, մանաւանդ բանաստեղծուհիներ. Իրէնէ Լիսպոա, Նոթէրսիա Ֆրէյրէ, Սոֆիա Անտրէսէն եւ Մերիսիա ատ Լէմա, որոնց զգայնութիւնները տարբեր երանգներ ունին եւ նոր աւիշ կը բերեն երկրին գրականութեան։

(Շար.)

ՆԱԻԳԱՐ ՋԱՐԽՈՒՏԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՀԱՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

ՍՓԻՒՌՔԻ ՄԷՋ

Այս իմացումներու լոյսին տակ, այժմ մեր ակնարկը դարձնենք դէպի այսօրուան պատկերը Հայագիտութեան, հայ Սփիւռքի մէջ։

Հայագիտական ուսմանց կեդրոնները, որոնք որոշ դեր մը կը կատարեն այս մարզի մէջ, լոյս զատակարգումներու տակ կարելի է դասել։—

Ա. Արդէն իսկ գոյութիւն ունեցող եւ կամ նոր կազմուած վանական — կրթական — մշակութային կեդրոնները, ինչպէս են Վենետիկը, Վիեննան, Երուսաղէմը եւ Անթիլիասը։

Բ. Որոշ առանձնութիւն ունեցող հայագիտական ուսմանց դասընթացքներ Համալսարաններու մէջ, ինչպէս Լուվէնի Համալսարանը (Պելճիքա), Փարիզի Արեւելեան Կենդանի Լեզուաց Դպրոցը, Գէյրութի Սէն — Ժոզէֆ Համալսարանը, եւայլն։

Գ. Նորահաստատ դասընթացքներ Համալսարաններու մէջ, ինչպէս Հարվըրտի, Քոլըմպիայի, Լոս — Անճելըսի կամ Պրըյնի (Հիւս. Ամերիկա) եւ կամ Օքսֆորտի դասընթացքները, ասոնց շարքին զետեղելով նաեւ Իսֆահանի համալսարանին մէջ բացուած սմպիոնը եւ երկու տարիէ ի վեր հոգիս ակած դասընթացք մը Գէյրութի Ամերիկեան Համալսարանին մէջ։

Դ. Զուտ հայկական ջանքերով եւ ուսմանց հայկական կեդրոններու մէջ կամ անոնց ստընչակից հաստատուած նոր դասընթացքներ, ինչպէս Հայկազեան Գոլէճի, Հիւսիսեան Հայագիտական Հիմնարկի կամ Համազգայինի Նշան Փալանճեան ճեմարանի մէջ կատարուած եւ կատարուող ճիգերը։

Առաջին խումբի կեդրոններէն ամանք անցեալին հսկայական ծառայութիւններ մատուցած են Հայագիտութեան եւ հաւատարմօրէն ու նախանձախնդիր ոգիով կը շարունակեն այդ ծառայութիւնը։ Վերջին տասնամեակներուն, սակայն, զգալի կայունացում մը կամ դանդաղեցում մը նշմարուեցաւ անոնց մէջ զանազան պատճառներով բացատրելի։ Վերջին սա տասնամեակին մէջ է որ վերսին նոր թափ ուղուեցաւ տալ Հայագիտական ուսմանց։ Ասոնց համար կրօնական — կրթական պարտաւորութիւններ, ուրիշներու համար՝ վարչական պատասխանատուութիւններու սահմանափակութիւններ, ասոնց համար կրօնական կոչումներու կամ ընծայումներու նուազում եւ այլ քաղաքական պատ-

digitised by A.R.A.R.@

ճառներ արդեւլիչ պարագաներ են Հայագիտութեան լուրջ եւ յարատեւ մշակումին համար, որպէս մասնաւոր ուղղութիւն եւ գործունէութեան հիմնական առանցք։

Երկրորդ խումբի դասընթացքներուն համար առհասարակ կը պակսին համաշարանական աստիճանի վրայ գտնուող ուսանողներ, հայ թէ օտար, որոնք յանձն առնեն Հայագիտութիւնը ընել մասնագիտական դրաղում։ Լուվէնի մէջ J. Muyldermans-ի մը կամ G. Garitte-ի մը նման մեծ արեւելագէտներու եւ բիւզանդագէտ եւ հայագէտ դէմքերու հայագիտութենէն շատ քիչ ուսանողներ կ'օգտուին, մինչդեռ սպասելի էր որ անոնց հմտութիւնը եւ գիտական բարձր համբաւը հրապուրէին իսկապէս հայագիտութեան սէրը ունեցող ուսանողներ, հայ թէ օտար։ Փարիզի Արեւելեան կենդանի Լեզուաց Դպրոց, Ֆրետերիկ Ֆէյտիի յարատեւ ջանքերուն շնորհիւ, կը շարունակէ մնալ գործօն կեդրոն մը հայ լեզուի ուսման եւ ուսումնասիրութեան համար։ Գէյրութի Սէն – Ժոզէֆ Համալսարանի ճիգը հանդուգնալ Հայր Յովհաննէս Վ. Մըսրբեանի վախճանումէն ասդին կը շարունակէ տեւել նոյն ոգեւորութեամբ, շնորհիւ Հայր Թալոնի ջանքերուն։ Դասընթացքին հետեւող ուսանողներու ակադէմիկ ուսման աստիճանն է յաճախ որ պասառ կ'ըլլայ որ համալսարանական ուսման մը բոլոր պահանջները եւ պարտաւորութիւնները չկարենան գոհացուցիչ ամբողջականութեան։ Այլապէս, հարկ պիտի ըլլար ընդարձակել ուսմանց դաշտը եւ զարգացնել ակադէմական ուսման մեթոտները, միշտ երթալով դէպի խորացում, մասնագիտացման ճամբով։

Երրորդ դասակարգումի տակ ինկող հաստատութիւններէն ոմանք խարիսփումի մէջ են, գտնելու համար իսկական առաքելութիւնը Հայագիտական ամպիոնի մը։ Ոմանց մէջ կատարուած փորձ տակաւին պարզ հայերէն մը սորվեցնելու կամ Հայոց պատմութեան հարեւանցի տեսութիւն մը կատարելու սահմանէն անդին չ'անցնիր եւ հայագիտական բառին կիրարկումը անոնց վրայ չ'արդարանար ամբողջական եւ խոր հասկացողութեամբը այդ բառին։ Տասը տարիներէ ի վեր Հարվըրտի մէջ հաստատուած ամպիոնը, տնտեսական ամուր հիմերու վրայ դրուած, դեռ չէ գտած իր վերջնական ձեւը, իր հիմնական ուղին, որովհետեւ կը պակսին անձեր, որոնք կարենան ընթացք տալ Համալսարանի գիտական խիստ պահանջներուն եւ բարձրագոյն ակնկալութեանց։ Նախանձախընդրութիւնը ազուր է, վարակիչ՝ նոյնիսկ։ Ճիգը յարատեւ է եւ լուրջ։ բայց իրագործումը՝ դանդաղ եւ թերի մասնագէտ – հայագէտի տիպարին հազուագիւտ ըլլալուն պատճառով։ Լուրջ, դանդաղ, բայց հաստատ եւ ապահով քայլերով առաջացող ձեռնարկ մըն է Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան մեկենասութեամբ Օքսֆորտի մէջ հաստատուած դասախօսական Աթոռը, որուն ղեկավարութիւնը ստանձնած է յայտնի հայագէտ Տոքթ. Զարլզ Տատուէթ։ Այնտեղ այժմ քանի մը ուսանողներ, զանազան ազգերու պատկանող, կը հետեւին դրաբարի ուսման, հայ կարգ մը բնագիրներու ուսումնասիրութեան, միշտ կապուած այլ, աւելի ընդհանուր, նիւթերու ուսումնասիրութեան հետ։ Գիտական չափանիշներով դիտուած՝ ամէնէն լուրջ եւ խոստմնալից փորձերէն մէկն է սա Հայագիտական ուսման զարգացման տեսակէտէն Սփիւռքի մէջ, համալսարանական մակարդակի վրայ։

Չորրորդ խումբին մէջ կատարուող փորձերը դարձեալ նոյն անկեղծ եւ ծաւալուն հետաքրքրութեան արդիւնքն են, բայց կը մնան թերի, որովհետեւ հայագիտական ճիգը այնտեղ, այլազան պատճառներով, չունի այն բոլոր պայմանները, որոնք հայագիտութիւնը կ'ընեն էապէս գիտական ուսմանց տիպիկին մը՝ ակադեմական բարձր մակարդակով եւ համալսարանական աստիճանով։ Ուրիշ գիտական ուսմանց տակ արդէն իսկ ծանրաբեռնուած ուսանողներ չեն կրնար լուսանցքի վրայ հայագիտութեան – հետա-

digitised by A.R.A.R.@

ւիլ։ Եւ եթէ այժմ կը հետեւին՝ հայագիտական ծանօթութիւններ հաւաքելու բարիքէ մը անդին չի կրնար անցնիլ իրենց ճիգերուն արդիւնքը։ Եւ կամ, ինչպէ՞ս կրնանք սպասել որ արդէն իսկ դպրոցական, ուսուցչական պաշտօններով խճողուած հայ երիտասարդ ուսուցիչը դառնայ հայագէտ, գիշերային դասընթացքներով կամ մասնաւոր ճիգերով, որոնք ժողովրդականացումի սահմանը չեն անցնիր։

Բնականաբար, ուղուղծային նշումներով արուած այս պատկերէն դուրս կը մնան անհատական այն ճիգերը, որոնցմով տեղ – տեղ հայագիտական ուսումնասիրութիւններ կը կատարուին, հրատարակութիւններ ի լոյս կ'ընծայուին, եւ կը ճոխացնեն հայագիտական գրականութիւնը։ Մեր նշումները կը վերաբերին ընդհանուր երեւոյթին, հասարակաց ճիգին։

Հասկնալի է, որ հայագիտական աշխատանքներու բոլոր երեսները կարելի չէ ներկայացնել այս ամփոփ պատկերին մէջ։ Բայց կարելի չէ չանդրադառնալ այն լուրջ ձեռնարկներուն, որոնք վերջին տարիներուն ո՛չ միայն արտայայտեցին եւ արդարացուցին սէրը Հայ մշակոյթին նկատմամբ, այլեւ առողջ, խորունկ եւ ամբողջական ըմբռնումը հայագիտութեան։ Կ'ակնարկեմ մասնաւորապէս Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան մատուցած թանկարժէք ծառայութեանց։ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐԸ արդէն իսկ ստեղծեց իրեն յատուկ աւանդութիւն մը։ Հայ ձեռագիրներու հաւաքածոներու գիտական ցուցակներուն խնամոտ հրատարակութիւնը, օտար լեզուներով գրուած եւ Հայոց պատմութեան վերաբերող լուրջ ուսումնասիրութիւններու տպագրութիւնը, դասական հայ հեղինակներու քնարերներն ու անոնց թարգմանութիւնները, արդի հայ ականաւոր գիտնականներու ուսումնասիրական մենագրութիւններու օտար լեզուներու թարգմանութիւնը ամէնէն կարեւոր նպաստը կը կազմեն հայագիտութեան վերջին սա տասնամեակի ընթացքին։ Անոնց վրայ պէտք է աւելցնել անշուշտ վերհրատարակութիւնը տարիներէ ի վեր հրատարակութենէ դադրած Րէվիւ տէ գ'Էթիւտ Արմէնիէն-ի, որուն առաջին երկու հատորները, որոնք միջազգային հասկացողութեամբ գիտական հատորներ են, միայն պատիւ կը բերեն հայագիտութեան՝ միջազգային գիտական – բանասիրական գրականութեան շրջանակին մէջ։

Բայց ասով միայն չի լուծուիր հայագիտութեան հարցը Սփիւռքի մէջ...

Մեր ակնարկը իր եզրակացութեան մէջ շատ հեռու է ներկայացնելէ խրախուսիչ պատկեր մը։ Գարգ է, թէեւ ոչ հաճելի, այն հաստատումը, թէ՝ հայագիտութիւնը ներկայիս չի գտնուիր գիտական այն բարձրութեան վրայ, որ իր կոչումին համապատասխան բարձրութիւն է։ Այս ցաւալի իրողութեան հիմնական պատճառներէն մէկն է այն երեւոյթը, ըստ որուն՝ հայագիտութիւնը առհասարակ չէ հասկցուած իր իսկական իմաստին մէջ եւ կամ – ինչ որ այլապէս ցաւալի է – սխալ հասկցուած է ան եւ ըստ այնմ իր անունով ճիգեր կը կատարուին հոս – հոն։

Միւս կողմէ, սակայն, հայագիտութեան հանդէպ հետաքրքրութիւնը օրէ օր կ'աճի Հայ Սփիւռքի մէջ, կարծէք տեսակ մը ինքնամանաչումի գոյութենական ներքին բնազդէն շարժող մղումով մը, որ ինքնին ազգային ինքնագիտակցութեան առաջին դրական քայլն է ազգապահպանումի եւ ստեղծագործ կեանքի ընթացքին մէջ։

Ինչպէ՞ս լեցնել թերին, դարմանել ցաւը, սրբագրել սխալը, և, ինչպէ՞ս օգտագործել սէրը, դրական ուժի վերածել հետաքրքրութիւնը, մնայուն հունի մը մէջէն արտայայտել նախանձախնդրութիւնը։ Ահա այս է էական հարցը հայագիտութեան ներկայ կացութեան։

⁂

Հարցի լուծման մտահոգութենէն թելադրուած եւ փորձառական ինչ – ինչ

digitised by A.R.A.R.@

տուեալներէ մեկնելով՝ պիտի ջանանք կարգ մը մատնանշումներ ընել, որոնք անպայման պիտի չահագրգռեն հայագիտութեան հանդէպ ճշմարիտ սէր եւ անկեղծ չահագրգռութիւն ունեցող հայ մարդը։–

Ա. Եթէ Հայագիտութիւնը պիտի ըլլայ արժէքաւոր եւ հրապուրիչ ուսումնական տիպիպլին՝ պէտք է դրուի համալսարանական աստիճանի վրայ, ակադեմական կեանքի եւ աշխատանքի պայմաններու ամբողջական հայթայթումով։

Վերեւ պատկերացուած կացութեան մէջ յատակօրէն կորելի էր նկատել այն իրողութիւնը, որ ներկայիս հայագիտութիւնը գործնապէս համալսարանական աստիճանի վրայ ակադեմական ճանաչում ստացած եւ դիտական աստիճանի մը պատրաստող ուսմանց առանձին բաժանմունք մը չէ։ Աստիճանը (տիկրի) չէ անշուշտ, որ կը փնտռուի համալսարանական ուսման մէջ։ Աստիճանը պարզապէս տիրը եւ միջոցը կը ստեղծէ դիտութիւն մը բազմակողմանի ճիւղերով եւ մեթոտիկ ամբողջութեան մը մէջ ուսումնասիրելու եւ դիտական թեքնիք մը ձեռք բերելու, անով հետագային պրպտումներ կատարելու, դէմքը եւ քնադիրներ ուսումնասիրելու, վերլուծումներ ընելու եւ այս բոլորով նուաճումներ կատարելու ի խնդիր նոր լոյսի, նոր իմացման եւ ճշմարտութեան յայտնաբերման։ Համալսարանի մը Արեւելագիտական ճիւղին մէջ, անոր՝ իբրեւ բաժանմունք, ուսմանց առանձին միաւոր, մուտքը պիտի ապահովէ անոր համար ո՛չ միայն միջազգային վարկ մը, այլեւ պիտի ընձեռէ անոր կարելիութիւնը օգտագործելու պրպտումներու, հետազօտութիւններու այն գործնական միջոցները, որոնցմով օժտուած են Համալսարանները կամ Գիտական Բարձրագոյն Ուսմանց Կեդրոնները։ Ասկէ անդին, տակաւին, նման բաժանմունքի մը դիրքին բարձրացումը պիտի բերէ Հայագիտութեան այն բարիքը, որ կը ստացուի Արեւելագիտական այլ ճիւղերու դրացնութենէն։ Եւ մտածել որ Հայոց պատմութիւնն ու մշակոյթը ի՜նչ սերտ աղերսներ, դարերու հոլովոյթին հետ աճած եւ զոյն փոխած յարաբերութիւններ ունին Արեւելքի – եւ մասամբ նաեւ Արեւմուտքի – պատմութեանց եւ մշակոյթներուն հետ ... Այլազանութեան եւ ճոխութեան ի՜նչ պերճ պատկեր...։ Ինչպէ՞ս մշակել, հետեւաբար, Հայագիտութիւնը առանց այդ անմիջական ակադեմական դրացնութեան։ Հոն, համալսարանական այդ համայնութեան մէջ, հայագէտը ունի այն մեծագոյն առաւելութիւններէն մէկը, որով յառաջ կը տանի իր հետազօտական աշխատանքները Ատրագէտին, Պարսկագէտին, Արաբագէտին, Բիւզանդագէտին, Հնագանին, լեզուագանին, իմաստասէրին, աստուածաբանին, արուեստի պատմութեան մասնագէտին եւ հոյլ մը ուրիշ մասնագէտներու հետ առօրեայ կամ յաբատեւ շփումով, ինչ որ թէ՛ ակադեմական մթնոլորտի եւ թէ՛ նիւթերու լուսաբանութեան տեսակէտէն անդնահատելի դիւրութիւններ եւ բարիքներ կ'ապահովէ իրեն համար։

Ահա, սեղմ տողերու մէջ, արժէքը Հայագիտութեան համալսարանականացումին, եթէ ներուի մեզի այս բացատրութիւնը։

Զեմ ուզեր տակաւին անդրադառնալ այն միւս արժէքին, որով ուսանողին, հայագիտութեան հետեւելու կամք եւ սէր ունեցող մարդուն համար քաջալերականութիւն մը կը գտնու Հայագիտութիւնը նման դիրքի մը բարձրացուելով։ Ի վերջոյ, դատապարտելով ամէն տեսակի սին, սեթեւեթ փառասիրութիւն՝ չենք կրնար դատապարտել արդար փառասիրութիւնը կատարելիք ուսումը արժեւորուած, դնահատուած տեսնելու ցանկութիւնը ունեցող մարդուն, որ ուրնական աշխատանքով – յաճախ անձին համար՝ ապերախտ – կ'ուզէ նպաստ մը բերել իր ժողովուրդին պատմութեան լուսաբանման։ Ամպիսիոն–ը, պարկեշտօրէն հակըցուած եւ անկեղծօրէն ապրուած, նուաճում մը կատարելու ձգտումն է, որ ամենէն դրական տուեալներէն մէկն է, մեկ-

digitised by A.R.A.R.@

նակէտը որեւէ գիտութեան նուիրուած մարդուն, որ խոնարհագոյն մարդերէն մէկն է, երբ մանաւանդ իրագործած է արժէք մը, եւ իր ստեղծած կը տեսնէ նոր արժէքներու իրագործման համար, որ կարժէք զինք կը կանչէ աւելի հեռուն, դէպի անհուն գիտութիւնը, որուն որքան մօտենայ, ա՛յնքան հեռու կը զգայ ինքզինք եւ այնքան աւելի հասնելու կամքը իր մէջ՝ արուած։

Բ. Հայագիտութիւնը Սփիւռքի մէջ գիտակցօրէն արժեւորելու եւ բարձրացնելու համար անհրաժեշտ է անոր յատուկ հողը պեղել։

Հող բառին մէջ այստեղ կը հասկնանք այն հում նիւթը, այն առաջին ատաղձը, որուն վրայ կ՚աշխատի մասնագէտը յայտնագործումներու հեռանկարներով։

Ցաւախ դիտել կը տրուի, թէ Արտասահմանի մէջ կը պակսի հայագիտութեան հողը։ Հայաստանի մէջ միայն կարելի է յառաջ տանիլ բառին խորագոյն իմաստով հայագիտական հետազօտութիւնները։ Արտասահմանի գիտնականը միայն կրնայ հայթայթուած այդ նիւթերուն վրայ աշխատիլ զանոնք վերլուծելու, մեկնաբանելու համար միայն։

Բայց կը մոռցուի այն իրողութիւնը, թէ հայկական ձեռագիրներու գրեթէ կէսը կը գտնուի Հայաստանէն դուրս, Սփիւռքի մէջ։ Կը մոռցուի յաճախ, որ պատմական Հայաստանի մէկ կարեւոր բաժինը, ինչ որ սովոր ենք կոչել Արեւմտեան Հայաստան, դուրս կը մնայ ներկայ Հայաստանի սահմաններէն։ Եւ այդ հողը ի՞նչ հարստութիւններ ունի իր ընդերքին մէջ թաքնուած, ի՞նչ հարստութիւններ արեւու լոյսին տակ – պատմական յուշարձաններու եւ կոթողներու ի՞նչ անհամար հարստութիւն–, որուն արդի գիտութեան լոյսը հազիւ հասեր է, բայց տակաւին հեռու է զայն լուսաւորած ըլլալու վիճակէն։

Հայաստանի մէջ, հայ ձեռագիրներու բազդատութեամբ կատարուած պատմական, իմաստասիրական եւ այլ գործերու քննական հրատարակութիւնները, եւ մանաւանդ Զուարթնոցի, Դուինի, Կարմիր Բլուրի, Գառնիի, Արմաւիրի, Լճաշէնի պեղումները, ինչպէս նաեւ պատմական յուշարձաններու արձանագրութեանց ընթերցումները, չափագրութիւնները, տեղագրական ուսումնասիրութիւնները ի՞նչ նոր թափ տուին Հայագիտական ուսումնց...։

Սփիւռքի հայագէտը ունի գիտական աշխատանքի նոյն նախապայմանները – բնականաբար ոչ նոյնքան դիւրին եւ անմիջական հասողութեան ձեւով ու չափով – հում նիւթի պեղման եւ վերլուծման համար։ Միամտութիւն պիտի ըլլար անշուշտ երեւակայել, որ Արեւմտեան Հայաստանի հողին վրայ – այժմ մեր թշնամիին ոտքերուն տակ – կարելի ըլլայ պեղումներ կատարել. բայց անկարելի չէ գտնել անուղղակի քայլ ոչ նուազ գիտական միջոցներ զանոնք պեղուած եւ ուսումնասիրուած տեսնելու։ Ի՞նչ տնձկութեամբ Անիի աւերակները հողին ընդերքէն կը սպասեն գիտնականներու այցելութեան եւ մտերիմ քարեկամութեան, որոնց առաջին քայլը փորձառութիւնը ունեցան Նիկողայոս Մառի եւ Թորոսամանեանի շնորհիւ աւելի քան յիսնամեակ մը առաջ։ Մասնաւորապէս Ուրարտական պատմութեան ծանօթ անձեր քաջ տեղեակ են, թէ ի՞նչ արժեցին Թոպիրաք-Գալէի պեղումները հայագիտութեան համար։ Եւ մինչեւ այսօր, ի՞նչ հիացում եւ որքա՞ն հետաքրքրութիւն կը ստեղծէ Աղթամարի Ս. Խաչը ոչ միայն հայ արուեստի մասնագէտներուն համար, այլեւ ճարտարապետական եւ քանդակագործական – զարդաքանդակի – արուեստներով շահագրգռուած գիտական միջազգային շրջանակներուն մէջ։

Արտասահմանի հայագէտը, հետեւաբար, ընդարձակ աշխարհ մը ունի հողի, որ գիտական լուրջ, ծրագրուած հետազօտութեան կը կարօտի եւ հրամայական պահանջ է Հայ Սփիւռքին համար իր ուշադրութիւնը դարձնել դէպի այդ աշխարհը...։

ԳԱՐԵԳԻՆ ՆԳԻՍԿՈՊՈՍ

(Շար. 2)

digitised by A.R.A.R.@

«ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆԸ»... ԹՂԹԻ ՎՐԱՅ

(Հայաստանեան հրատարակութիւնների առթիւ)

Զ.

Հայ-ռուս, հայ-ազրբէջանական, հայ-վրացական, ինչպէս նաեւ որոշ չափով հայ-ուկրաինական յարաբերութիւնները պատմութեան ընթացքում դոյութիւն ունեցած փաստեր են եւ դրանց ուսումնասիրութիւնն ու իմաստաւորումը պիտանիների կողմից՝ միանգամայն բնական երեւոյթ է: Բայց քանի որ խորհրդային պայմաններում այսպէս կոչուած «ժողովուրդների լենինեան բարեկամութիւնը» քաղաքական նշանախօսք է եւ ձգտում է իր մէջ կլանել ժողովուրդների փոխյարաբերութեան վերաբերող բոլոր արտայայտութիւնները, ուստի պատմական յարաբերութիւնների ու կապերի ուսումնասիրութեամբ չի սահմանափակւում հարցը: «Ժողովուրդների բարեկամութեան» նիւթի հրապարակային հոլովումը դառնում է «Խորհրդային Միութիւն» կոչուող պետական կազմաւորման մէջ մտնող բոլոր ժողովուրդների պաշտօնական առաջնահերթ պարտականութիւնը: Երբ որեւէ առիթով յիշատակւում է խորհրդային կամ արբանեակ ժողովուրդներից մէկն ու մէկի անունը, պէտք է անպայման կցել «եղբայրական ժողովուրդ» արտայայտութիւնը, թէկուզ եւ իրականում ամենահեռաւոր կապ ոնդամ դոյութիւն չունենայ այդ ժողովուրդների միջեւ: Եւ իշխանաւորները չեն դադարում միայն թերթերում եւ գրքերում «եղբայրական ժողովուրդների բարեկամութիւն» արտայայտութիւնը հանդիսաւորապէս տպել տալով: Ձեռնարկւում են գործնական միջոցառումներ միմեանց «ծանօթացնելու» ուղղութեամբ: Հրաւիրում են համատեղ ժողովներ, կազմակերպւում են արուեստի ու գրականութեան տասնօրեակներ եւ շաբաթներ՝ միշտ նոյն նպատակով, «բարեկամութիւնը կոփելու» միտումով: Այդպիսի ղէպքերում քարոզիչները դորձի են լծւում «բարեկամութեան փաստեր» պեղելու ուղղութեամբ, զանազան ժողովուրդների պատմութեան մէջ:

1962 թուին Հայաստանում եւ Ռազբէկստանում, փոխադարձաբար, կազմակերպուեցին դրականութեան եւ արուեստի շաբաթներ: Այդ ժամանակ էլ մի քանի յատուկենտ յիշատակումներ գրոնուեցին որոշ գրողների գրական երկերից եւ դրոշ դարձուեցին «բարեկամութեան» օպտին: Այսպէս, օրինակ, դարեր առաջ ուզբեկ բանաստեղծ Ալիշեր Նաւոյին իր երկերից մէկի մէջ ներկայացրել է ծանրումով հայազգի աղջկայ եւ նրա գովքն արել: Եւ ահա այդ մասնակի գրական փաստը իր հերթին մատի փաթաթան դարձուեց ի նպաստ «դարաւոր բարեկամութեան», կարծես թէ օտար աղջիկ գովելը անպայման տուեալ ժողովուրդների փոխադարձ սիրոյ եւ բարեկամութեան դրաւական է արդէն: Գրականութեան եւ արուեստի տասնօրեակ կամ շաբաթ կազմակերպելը անշուշտ դրական քայլ է, բայց ինչո՞ւ այդ ամէնը անպայման «բարեկամութեան» պոչից կապել եւ նրա անունով ներկայացնել: Յիշեալ ձեռնարկից յետոյ մամուլում որոշ ակնարկներ եղան, թէ արուեստի ու դրականութեան փոխադարձ շաբաթները, այնպէս, ինչպէս կազմակերպւում են,

digitised by A.R.A.R.@

չեն տալիս սպասուած արդիւնքները։ Դժուար էր հասկանալ, թէ ինչումն է բանը։ Այնուամենայնիւ, հետագայում չարունակուեցին այդ կարգի ձեռնարկները։ 1964 թուին, նոյնպէս փոխադարձաբար, տեղի ունեցան Հայ եւ Խատոնական դպրոցական դրութեան ու արուեստի շաբաթները Խատոնիայում եւ Հայաստանում։ Այս դէպքում եւս աւելորդ է կրկնել, որ այդպիսի մի ձեռնարկ չի կարող անօգուտ լինել։ Տարբեր հորիզոնների ժողովուրդների մտաւորական եւ արուեստագէտ ներկայացուցիչները հանդիպում, ծանօթանում եւ նոյնիսկ բարեկամանում են, նախադրեալ ստեղծելով տուեալ ժողովուրդների աւելի ընդարձակ հոգեկան բարեկամութեան համար։ Բայց այս դէպքում եւս առաջին հերթին իրախնան ապրեցին հասարակային քարոզիչները՝ իրենց «բարեկամութեան» շտապողութիւններով (մանաւանդ որ Նաչատուր Արովեանը եւ ուրիշ անուանի հայեր իր ժամանակ ուսանել են Խատոնիայի հողում)։ Այսպիսով, խորհրդային զանազան ժողովուրդների միջեւ քաղաքական նպատակ հետապնդող «բարեկամական կապեր» հաստատելու ճանապարհին ըստ հնարաւորին որոնւում եւ պեղւում են «բարեկամութեան» պատմական ապացոյցներ, իսկ այդպիսիք առհասարակ չլինելու դէպքում՝ «սոցիալիստական հայրենասիրութիւնը», «արուեստական ինտերնացիոնալիզմը» ու «ժողովուրդների լենինեան բարեկամութիւնը» միշտ էլ պատրաստ են անխտիր բոլորին հրամցուելու, իրական բարեկամութեան տեղը լրացնելու համար։

Խորհրդային հեռաւոր ժողովուրդները չհաշուած, վերջին ժամանակներս մասնաւոր եռանդ է ցուցաբերւում Հայաստանում՝ արեւելեան հարեւան ժողովուրդների պատմութեան ուսումնասիրութեան ասպարէզում։ Գիտութիւնների Ակադեմիայի ցանցում կազմուեց արեւելագիտական անձնակազմ, հայ արեւելագիտութեան պատմութեան մէջ մի նոր փուլ սկսուեց։ Արեւելեան լեզուներին տիրապետող երիտասարդ գիտնականները (մեծ մասամբ հայրենադարձների շարքից) իրենց ուսումնասիրութեան նիւթ դարձրին այդ ժողովուրդների անցեալն ու ներկան։ Խորհրդային Միութիւնից դուրս գտնուող ժողովուրդների նկատմամբ, ի հարկէ, չեն գործածւում անխտիր «եղբայրական» կամ «բարեկամ» արտայայտութիւնները։ Տարբեր բան կը լինէր, եթէ նրանք Խորհրդային Միութեան մէջ գտնուէին։ Այն ժամանակ, կասկած չկայ, առանց ամաչելու հրապարակ կը նետուէր նոյնիսկ «հայ եւ թուրք ժողովուրդների դարաւոր բարեկամութիւն» նշանախօսքը։ Բայց առայժմ դրա վտանգը չկայ, թէեւ որոշ թեթեւամիտ հեղինակներ պատրաստ են այդպիսի հարց էլ առաջ քաշելու։ Ընդհակառակն, հայ գիտնականներն իրենց ձեռքի տակ ունենալով պատմական անառարկելի փաստեր ու փաստաթղթեր՝ ասոիճանաբար աւելի համարձակ են դառնում եւ գիտականօրէն հերքում ոչ միայն թուրք ու եւրոպացի, այլեւ հենց ռուս խորհրդային հեղինակների կամայական հակահայ վերագրումները։ Այնպէս որ արտախորհրդային արեւելեան հարեւան ժողովուրդների կեանքն ու պատմութիւնը ուսումնասիրելու գործը այժմ աշխուժանալով հանդերձ, դանդաղում է նախնական, գրական փուլում եւ չի հասել «բարեկամութիւններ» խաղալու աստիճանին։ Թէ հետագայում ինչ ընթացք կ'ընդունի գործը եւ ինչ «հեռանկարներ» կը բացի՝ առայժմ պարզ չէ։

Բացառութիւն է կազմում քուրդ ժողովուրդը։ Ցայտնի է, որ քրդերը որոշ առկոս են կազմում Հայաստանում եւ ունեն մշակութային որոշ մակարդակ։ Գոյութիւն ունի քուրդ մտաւորականութիւն, որը ջանում է ոչ միայն իր ամբողջ ժողովրդի պատմութիւնը ուսումնասիրել ու հասկանալ, այլեւ հայ-քրդական յարաբերութիւնների հարցում իր դերն ունենալ։ Հայ մտաւորականութեան կողմից, բնականաբար, խրախուսւում է այդ եռանդը։ Քուրդ գրողների կողքին նաեւ քուրդ գիտնականներն են մասնակ-

digitised by A.R.A.R.@

ցում Հայաստանի արեւելագիտական շուրժմանը: Այդ առթիւ, մամուլում հրապարակուած նիւթերից բացի, լոյս են տեսնում նաեւ առանձին աշխատութիւններ: Ուշագրաւ է, որ վերջին տարիներս Ռուսաստանում լոյս տեսած մի գիրք (Ն. Խալֆին «Պայքարը Քրդստանի համար»), որը բոլորովին սխալ պատկերացում էր տալիս Հայաստանի եւ Քրդիստանի աշխարհագրական տեղադրման մասին, ինչպէս եւ հայերի ու քրդերի մասին անճիշդ տեղեկութիւններ էր հրատարակում, — քննադատութեան ենթարկուեց Երեւանի մի գիտական ժողովում հայ գիտնականների կողմից եւ քուրդ մտաւորականներն էլ իրենց հերթին դատապարտեցին հեղինակի ակնյայտ ապատեղումները, որոնք «վնասում են հայ եւ քուրդ ժողովուրդների բարեկամութեանը, թիւրիմացութիւնների ու անցանկանալի խօսակցութիւնների տեղիք տալիս»: Ուրեմն, հայ եւ քուրդ ժողովուրդների բարեկամութիւնը եւս, առնուազն որպէս հաւանական լինելութիւն, օրակարգի վրայ է Հայաստանի գիտական ուսումնասիրութիւնների մէջ, քանի որ Հայաստանում գոյութիւն ունեն որոշ թուով քուրդ զանգուածներ:

Է.

Ժողովուրդների բարեկամութիւնը ձեռք բերելու, ապահովելու եւ երաշխաւորելու համար առաջին հերթին անհրաժեշտ է ձեռք բերել, ապահովել եւ երաշխաւորել շահագրգռուած ժողովուրդների ազատութիւնը: Այդ բանը կարող են անել ժողովուրդներն իրենք: Եւ այն ժամանակ բարեկամութիւնը կը յենուի իրական հիմքի վրայ ու կունենայ իրական իմաստ: Իւրաքանչիւր ժողովուրդ կը գիտակցի իր վիճակը եւ պատասխանատու կը լինի իր արած իւրաքանչիւր քայլի համար: Եթէ մինչեւ հիմա որեւէ չրջանում բարեկամութիւնը այս կամ այն պատճառով ձեռք չի բերուած կամ խախտուած է զանազան ժողովուրդների միջեւ, այդ չի նշանակում, թէ դա յաւիտենական փիճակ է եւ ամէն մի բարեկամական նախաձեռնութիւն ապարդիւն: Սակայն բարեկամութիւն հաստատելու ամէն մի նախաձեռնութիւն ոչ միայն է բխի բուն ժողովուրդներից, առնուազն նրանց դեկավար ու մտաւոր չրջաններից, եթէ նպատակին հասնելու նախադրեալներ կան:

Խորհրդային Միութեան քաղաքական կառուցուածքը յայտնի է ամբողջ աշխարհին: Յայտնի է, որ այնտեղ իր ժամանակ դէնքի ուժով միաւորուած ժողովուրդները ենթակայ են ամբողջատիրական իշխանութեան հրամաններին եւ ազատ չեն իրենց կամքը արտայայտելու: Այնպէս որ «ժողովուրդների բարեկամութիւն» նշանախօսքն էլ չի բխում նը-բանցից, այլ հրահանգուած է միակուսակցական իշխանութեան կենտրոնից: Նոյն կուսակցութեան քարոզիչները իրենք ասում եւ իրենք էլ լսում են իրենց խօսքը: Զկայ որեւէ կենսական հարցի իսկապէս ազատ քննարկման, մտքերի փոխանակութեան տարրական հնարաւորութիւն: Եւ արտաքուստ այն տպաւորութիւնն է ստացւում, թէ հրապարակային նշանախօսքերը արդէն իւրացուած են բոլոր քաղաքացիների կողմից եւ առհասարակ որեւէ առարկութիւն գոյութիւն չունի որեւէ մէկի մօտ, քանի որ հրապարակօրէն չի արտայայտւում: Ամբողջ դժբախտութիւնն էլ դրա մէջ է: Հրապարակում իշխում է որեւէ մենաշնորհեալ գրոյթ, տուեալ դէպքում «ժողովուրդների բարեկամութիւն» նշանախօսքը, ու ոչ ոք ի վիճակի չէ ի լուր ամէնքի յայտարարելու, թէ այդ ամէնի արծարծումը խեղկատակութիւն է միայն եւ ոչ մի կապ չունի իրականութեան հետ: Ո՞վ կարող է ապացուցել, թէ Խորհրդային Միութեան մէջ իսկապէս ժողովուրդների իրական բարեկամութիւն գոյութիւն ունի: Փաստօրէն ոչ ոք: Բայց հէնց միայն այդ է պնդւում խորհրդային գրաւոր ու բանաւոր բոլոր բեմերից: Թէեւ այդ բարեկամութիւն կոչուածը գոյութիւն ունի միայն թղթի վրայ,

digitised by A.R.A.R.@

պաշտոնական մեծ ու փոքր հրատարակութիւններում։ Իրականութիւնը բոլորովին այլ բան է ասում, եթէ աչքի առջև բերենք հարցի նաեւ այդ կողմը։

«Ժողովուրդների բարեկամութիւնը» յուրի գործ է եւ ձեւի համար յեղյեղուող արտայայտութիւնների ուժով իրականութիւն չի դառնայ, եթէ համապատասխան նախադրեալներ չստեղծուեն։ Այդ համապատասխան նախադրեալներից առաջինը անհատի եւ ազգերի ազատութիւնն է, երբ հնարաւոր կը դառնայ դէմ-դիմաց կանգնել եւ քննութեան առնել փոխադարձաբար շահագրգռող կենսական հարցերը, գործնական քայլերի դիմելուց առաջ։ Խորհրդային ղեկավարութիւնը ըստ երեւոյթին համոզուած է, թէ առանց ազատութեան էլ կարելի է խօսել «ժողովուրդների բարեկամութեան» մասին եւ նրա անունով պարտադրել ժողովուրդներին, որ համաձայնուեն ամէն տեսակ զոհաբերութիւնների, ինքնուրացման եւ այլնի։ Այդ ղեկավարութիւնը այդպէս «համոզուած» է ձեւանում, որովհետեւ նրան չի հետաքրքրում ոչ ժողովուրդների ազատ գոյութիւնը, ոչ էլ նրանց բարեկամութիւնը։ Այդ նշանախօսքը շրջանառութեան մէջ է դրուած միամիտներին մոլորեցնելու համար, որպէսզի այդ ազմուկի տակ իրագործուի համատարած ազգաժուլումը, միասնական պետութեան մէջ միասնական հաւաքականութիւն ձեւաւորելու ձգտումը, որպէսզի յաղթանակի մեծապետական ուժերի երազը։

Համաշխարհային պատմութիւնը ապրում է իր բնաշրջումը։ Ինչ որ երէկ անկարելի էր թւում, այսօր իրականութիւն է եւ ինչ որ այսօր անկարելի է թւում, վաղը կարող է իրականութիւն դառնալ։ Այդպէս էլ ժողովուրդների բարեկամութեան դարաւոր երազը։ Բայց այդ բարեկամութիւնը կարող են կերտել միայն լիովին ազատ մարդիկ, իսկ ազատութեան հետ սակարկել չի կարելի։ Ազատութիւնը ազատութիւն է, որովհետեւ չի հանդուրժում ճնշում, կեղծիք եւ պայմանականութիւն։ Երբ ճնշումը, կեղծիքն ու պայմանականութիւնն են իշխում՝ ազատութեան հետ կապուած ամէն բան դառնում է հաւանականութիւն, լինելիութիւն, բայց ոչ նաւամուտած իրականութիւն։ Ուրեմն, եթէ Խորհրդային Միութեան մէջ ժողովուրդների բարեկամութեան ներկան գոյութիւն ունի միայն թղթի վրայ, նրա ապագան չի բացառուած, երբ նախապէս այդ ժողովուրդները հասնեն իրենց ազատութեան։ Առայժմ շատ վաղաժամ եւ անտեղի է խօսել հակասութիւնների մէջ խճճուած խորհրդային ժողովուրդների բարեկամութեան մասին։ Խօսք կարող է լինել միայն նրանց ընթացիկ փոխյարաբերութիւնների մասին, անկախ դրանց բնոյթից։

Լ. ՄԿՐՏՉԵԱՆ

15-2-1965 թ.
(Շար. 3 եւ վերջ)

digitised by A.R.A.R.@

Նվիրներ

ԱՄԷՆՕՐԵԱՅ ՏԱՌԱՊԱՆՔ

Եթէ փորձենք մտնել Հայաստանի գրողին առօրեայ կեանքին մէջ եւ ատուչել անոր տառապանքին աղբիւրը, պիտի տեսնենք, թէ իր գլխուն Դեմոկլեան սուրին պէս ամէն մաքրագործումի ապառնալիքը այնքան չէ վիրաւորած զինք երբէք, չի վիրաւորեր այսօր, որքան վիրաւորած է ու կը վիրաւորէ իր ոտնձգողութիւնը «մաքրագրուած» տեսնելու ամէնօրեայ իրողութիւնը: Մտքագրումը նոր երեւոյթ չէ մեր գրականութեան մէջ, հին վէրքի մը նոր անունն է պարզապէս: Սուլթաններու օրով գրաքննութիւն կը կոչուէր ու ցարերու շրջանին կա՛ր: Բայց յորմէհետէ համայնավարութիւնը մուտք գործեց մեր մէջ, այս մղձաւանջը աւելի սաստկացաւ, գերազանցելով սուլթանական ու ցարական գրաքննիչներուն առաջացուցած բոլոր տագնաւկները: Սուլթանական ու ցարական շրջաններուն, գրողը կրնար ի հարկին սահմանը անցնիլ եւ շունչ առնել, կրնար ծածկանունով մը արտասահմանի թերթերուն մէջ փռել իր խռովքները, կամ եթէ ըմբոնումի հարց էր ու սերունդի հարց, կը խզէր իր կապը կացութեան տէր սերունդին հետ եւ կը ստեղծէր իր թերթը, իր ճակատը:

Այն ատեն Հայաստան չունէինք: Հիմա Հայաստան ունինք: Զենք մաղթեր որ մեր գրողները սահմանը անցնելու փորձ ընեն հիմա: Հայրենիքի սահմաններէն իրենց հեռանալու փաստը նոյնքան պիտի վնասէր հայ գրականութեան, որքան կը վնասէ այսօր ու քառասուն տարիներէ ի վեր իրենց ժեռադիրները թղթատող խստաբիր ու չարաշուք մարդոց եղերական ներկայութիւնը: Զենք մաղթեր որ ոեւէ գրող կամ անձ հայրենիքէն հեռու ապրելու երազներ ունենայ: Բայց յանցաւոր կ՚ըլլա՞նք կրկին, եթէ կրկի՛ն պահանջենք, որ քիչ մը չունչ տրուի գրողին, գրականութիւն ընելու ազատութիւն տրուի, գրականութեան շահը պաշտպանելու գործը իրե՛ն տրուի: Մենք յոգնեցանք այս բաները կրկնելէ, Հայաստանի գրողը յոգնեցաւ «հաշուախնդիրներուն», «ատեաններուն», «լաչառներուն» մթին գործունէութիւններէն, ամէն օր ծամածուռ մարդ տեսաւ շուրջը, գրաքննիչին թաթը զգաց, մկրատիչներուն մղձաւանջը ապրեցաւ: Նման մարդերով խճողուած հայրենիք մը, բան ենք հարի՛ւր անգամ, հող ու քար կրնայ ըլլալ, լեռ ու գետ կրնայ ըլլալ, լեռ ու անտառ կրնայ ըլլալ, ջրանցք ու փապուղի կրնայ ըլլալ, չէնք ու պողոտայ կրնայ ըլլալ, բայց հայրենիք հասկացողութեան «առանցքային» իմաստէն զուրկ կ՚ըլլայ, հայրենիքը նաեւ շունչ է, ազատութիւն, ներքին կարելիութիւնները անկաշկանդ կերպով դրսեւորելու հնարաւորութիւն:

Հայրենիքի մեր գրողներուն չտրուեցաւ այդ շունչը զգալ, ոմանք մեռան լիաթոք շնչելու երազով, ուրիշներ կ՚ապրին նո՛յն կարօտով: Ինչպէ՞ս ապրին տարիներ ձեւով, երջանիկ ապրին, չտառապին մարդիկ, երբ ժեռագիր մը կը յանձնեն եւ թերթին մէջ կը կարդան ուրիշ բան: Փաստերէն վերջինը մէջտեղն է: Պարոյր Սեւակ եւ Գէորգ Էմին ճառեր արտասանեցին Հայաստանի գրողներու հինգերորդ համագումարին: Այդ ճառերուն բովանդակութեան ծանօթացանք արտասահմանի թերթերէն: Հասած են «Գրական Թերթ»ին թիւերը, ուր նոյն ճառերը ներկայացուած են խիստ մկրատումներով: Ահաւասիկ մէկ-երկու նմոյշ մկրատուած հատուածներէն:

digitised by A.R.A.R.@

ՅԱՊԱՂՈՒԱԾ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

❖ «Ես ինձ թոյլ եմ տալիս աւելորդ մի անկեղծութիւն, որպէսզի ասեմ, որ ռուսերէն թարգմանուելու հարցը համարեա թէ գարձել է մի քանի չէչ հայկական կոնեակ կոնծելու դժուարութիւն: Թարգմանւում են այնպիսի հեղինակներ, որոնք պարզապէս ոչրոզ չեն, կամ այնպիսի երկեր, որոնք պիտի չհրատարակուէին նաեւ հայերէն: Թարգմանական գործի այսպիսի ընթացքը, մեր արդի գրականութեան վարկին հասցնում է միանգամից երկու հարուած: Այս հարուածներից մէկն այն է, որ մեր գրական արտադրանքի լաւագոյնը կա՛մ բնաւ չի թարգմանւում կա՛մ էլ թարգմանւում են շատ ցածրակ: Այս հարուածներից երկրորդն այն է, որ թարգմանւում են խոտանային երկեր, եւ ռուս հրատարակիչների, ինչպէս նաեւ համամիութենական ընթերցողի մէջ ամրապնդում այն կարծիքը, որ Հայաստանում գրականութիւնն այն վիճակումն է, ինչ վիճակումն է կինոն կամ ... ներեցէք ֆութպոլը:

❖ Ամսագրի խմբագրութիւնը թարգմանութիւններ է մուրում, փոխանակ կազմակերպելու, իսկ այն ինչ կազմակերպում է... Տէ՛ր աստուած: Բոլորովին վերջերս, բոլորովին մասնաւոր մի առիթով ես խմացայ եւ համոզուեցի, որ խմբագրութեան այսպէս ասած պրակտիկայի մէջ գոյութիւն չունի մի այնպիսի տարրական բարեխղճութիւն, որպիսին թարգմանութիւնը բնագրի հետ համեմատելն է: Աւելին. խմբագրութեան աշխատակիցը ընկում է այն, ինչ խելքին բրդում է, աւելացնում այն, ինչ միտքը գալիս է, իր մէկ ու միակ արդուկով (եթէ այդ արդուկը մինչեւ իսկ մնացել է Սումարոկովի շրջանից), հարթեցնում է գրական երկերն այնպէս, որ այլեւս ոչ մի ոճական տարբերութիւն չի մնում Նոր-Այրի եւ Նորայր Աղայեանի միջեւ... Դա անհաւատալի խայտառակութիւն է, որ պիտի գրաւի գրողների միութեան նորընտիր ղեկավարութեան ուշադրութիւնը»:

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՒԱԿ

❖ «Քննադատութիւն» բառը կորցնելով իր իմաստի ամէնից կարեւոր «էքսկալ» մասը, վերէ էր ածուել միայն «դատելու», այն էլ երբեմն փակ դատավարութեամբ եւ այնպիսի դատարանային վճռով, որից անհնար էր փրկել ո՛չ միայն մեղադրուող գիրքը, այլեւ յաճախ իրեն՝ հեղինակին:

❖ Հեռուները չգնալու համար, ակամայից յիշում եմ նախորդ համագումարում իմ եւ մեր գրչակիցներից գլխին եկածները եւ իր հայրենասիրական բանաստեղծութիւններից մէկի մի հին գրախօսական-գնահատականը, որն սկսում էր այն ժամանակ շատ տարածուած «ընդդէմ» բառով եւ աւարտւում «ընաջինջ անել» անիծաւունակ կոչով:

❖ Հերիք է, որ մեր կառավարութիւնը եւ մեր մտաւորականութեան առողջ, ազնիւ խաւը մեծագոյն դժուարութիւններով նախապատրաստեն օրինակ Լեւոն Շանթի հրատարակման հարցը եւ տա, ճգնելով բոլորից աւելի համարձակ երեւալ, որեւէ հաւաքոյթում խսկոյն դնում է մի առաջիկ անլուծելի, ինքն էլ լաւ գիտի որ անլուծելի հարց, երկու ծափ շահելու ցանկութեամբ վարկաբեկելով ու կործանելով արդէն լուծուող կարեւոր հարցը...»:

ԳԷՈՐԳ ԷՄԻՆ

digitised by A.R.A.R.@

ԵՒ ԵՐԿՐՈՐԴԸ ՆՄԱՆ ՍՄԻՆ

Նախորդ էջին վրայ մեր կատարած մատնանշումին մէջ, դուք կարդացիք թարգմանական թափթփածութիւններուն դէմ բարձրացուցած Գարոյր Սեւակի բողոքը։ Գարդուած խնդիրը բաւական լուրջ հանգամանք մը ունի ու բանաստեղծին գայրոյթը պարագայական պոռթկում մը չի թուիր։

Թուսերէնի թարգմանուած գործերուն լուրերը ատեն-ատեն մենք ալ կը կարդանք։ Կարդացած ենք թոյլ, մինչեւ անգամ պարզունակ ու մանկունակ խորքով գրուած երկերուն ռուսերէնի վերածման լուրերը, բայց ոչ ոք կը խորհէր, թէ ընդծուած չափով անինամ ձգուած գործ մըն է թարգմանութիւնը եւ կամայականութիւնները այդ մարզին մէջ եւս տարածած են իրենց աւերը։

Ամէն ինչին լաւագոյնը Մոսկուայի հաշուոյն մսխելու, մոսկուացիներուն ի հաճոյս այնքա՞ն թանկ դեղեցկութիւններ ընծայելու չռայլութիւններէն ետք՝ զարմանալի է իրապէս, որ «մեր գրական արտադրանքի լաւագոյնը» Հայաստանի սահմաններէն դուրս չենք հաներ։ Իրապէս զարմանալի ենք մենք։ Կը համայնացնենք ինչ որ միայն մեզի կը պատկանի, իսկ իր բնոյթով համայնականը, անկողոպտելին տուն կը պահենք, տալո՛վ հարբսանալու տրիթէն չենք օգտուիր, տրուածին տէրը մնալու պատիւին հանդէպ տնտարբեր կը մնանք, չենք մտածեր պատժուճաններով աշխարհին ներկայանալու հպարտութեան մասին, կը ներկայանանք մեզի համար ու այլոց համար անչահ ցնցոտիներով, խոտանային խոտան նուէրներով։

Բայց Հայաստանի հրատարակչական կազմը ընդհանրապէս խոտանային ճաշակ մը ունի եւ ազիտալի հաշիւներով կը շարժի թէ՛ արտածելու ատեն եւ թէ ներմուծելու ժամանակ։

«Թարգմանւում են այնպիսի հեղինակներ, – ի՛նչպէս Սեւակ, – որոնք պարզապէս գրող չեն, կամ այնպիսի երկեր, որոնք պիտի չհրատարակուէին նաեւ... որե՛ւէ լեզուով»։

Գրո՞ղ են Սիամանթներն ու Յակոբ Գուրամեանները, բանաստե՞ղծ են Միսաք Մանուչեաններն ու Ա. Սեմաները եւ ասոնց որակը ունեցող գրականութեան միւս աղքատները, որ տեւաբար կը հրատարակուին հայրենիքին մէջ ու կը գրախօսուին, կը համբաւուին տատամեակներէ ի վեր, ինչ որ կը մտածէ ռուս ընթերցողը իրեն հրամցուած ցածորակ ու խոտանային երկերուն առիթով հայ գրականութեան մասին, նոյնը կը մտածէ Հայաստանի ընթերցողը Սփիւռքի գրականութեան մասին, ինչպէ՛ս տարբեր կարծիք կազմէ Հայաստանի ընթերցողը, երբ իր տեսածին մեծ մասը վերոյիշեալներու անունով ներկայացուած խոտանը եղած է։

Փնտռենք երեւոյթին պատճառը։ Անտէ՛ր հայ գրականութիւն։ Խորթ տէրերու ենթարկուած գրականութիւն։ Պատճա՞ռը...

digitised by A.R.A.R.@

ԸՆԴԴԷՄ՝ «ԳԱԶՈՆԱՅԻՆ ՀԱՒԱՍԱՐՈՒԹԵԱՆ»

Անդրադառնալով մկրտման մասյլ բարքերուն, Գարոյը Սեւակ իր արտասանած ճառին մէջ կը հաստատէր.

«Գրականութիւնը մկրտել՝ երբէ կոզմից, այն էլ ուղիղ ու հարթ, իսկ չհանդուրժել, որ որեւէ մեղապարտ թաւիշ, որեւէ մեղաւոր շիւ գլուխ բարձրացնի գազոնային հաւասարութեան վրայ, նշանակում է··· իմիմներդ գտէք, թէ ինչ է նշանակում:

Գրականութիւնը եթէ ենթակայ է որեւէ օրէնքի, ապա ենթակայ է անտառի օրէնքին, անտառի՞ն եւ ո՛չ թէ գազոնի···»:

Ձկայ գրող մը աշխարհի վրայ, որ համաձայն չգտնուի գրականութեան խոչալ մթնոլորտը բնորոշող Գ. Սեւակի տուած այս պատկերին, այս օրէնքին, «անտառի օրէնքին», պիտի ըսէինք այս անօրէնութեան:

Որովհետեւ գրականութիւնը անօրէններու անօրէն խառնուածքով կ'ուռճանայ, վայրենիներու, վայրագ ծիլերու անիւխանական փթթումով յաւելում կ'արձանագրէ, կը բարձրանայ ու կը ծաւալի «անտառի օրէնքով», անտառի, ուր՝ առոյգ մեծցած ու մեղաւոր իր ճիւղերը հպարտօրէն տարածող թունաւոր ծառը միւտ բան մը աւելի կ'արժէ, քան ասոր անոր շուքին տակ իր ժժդոյն գոյութիւնը քաշքշող որեւէ պտղատու սարուկ: Ցարդ վայելողը հաստատման ծառն է, աւշառատը, ինքնաբաւը, որ կը ցցէ իր հասակը մրրիկներուն դէմ եւ կը ճամբորդէ երկնային անծանօթ տարածութիւններու մէջ:

Հայաստանի գրողներու հինգերորդ համագումարի օրերուն, Գարոյը Սեւակի խօսք առած պահուն, կը կարծուէր, թէ եկած է ժամը «անտառի օրէնքին» հետեւելու, անտառանալու ժամը եկած է եւ գրողին պիտի թոյլատրուի այլեւս իր ուզած տեղը արմատ նետելու, իր ուզած ձեւով ճիւղաւորուելու, անծանօթ տարածութիւններու ի խնդիր իմացական արկածախնդրութիւններու ձեռնարկելու աղատութիւն մը պիտի թոյլատրուի, բայց ակնատես եղանք ծանօթ բարքերու կիրարկումին: Ինչպէս տեսաք «գազոնային հաւասարութեան» դէմ ընդվզող այս ճա՛ռն անգամ ենթարկուեցաւ «գազոնային հաւասարութեան»: Նոյնը եղաւ նաեւ խմինի ճառին պարագան: Ասիկա տակաւին մեր գիտցածն է: Ենթադրելի բաժինը նուազ տխուր չէ: Նկատի ունենալով իրենց միջավայրը եւ համայնավարութեան օրօք մեր երկրին մէջ հաստատուած ստժանելի բարքերը, «անարեւներուն», «ելչառներուն», «հայուսխնդիրներուն» ներկայութի՛ւնը նկատի առնելով՝ բեմ ելլելէ առաջ, ի հարկէ, թէ՛ Սեւակը եւ թէ՛ խմինը եղած էին զուսպ, չափաւոր, թուղթին չէին յանձնած զիրենք խռովող բոլոր մտածումները, յանձնած էին մտածումներուն մէկ մասը միայն, «ընդունելին», «տանելին», այսինքն իրենք զիրենք «զրաքննած» էին հեղ մը, ու հակառակ ասոր զերծ չմնացին վատահելիներու մկրտուին անողոք յարգարանքէն:

Հայաստանի գրողը առաւելութիւններ ունի, ժամանակ ունի, հրատարակիչ ունի, նիւթական մտահոգութիւններ չատ չունի: Բայց ի՞նչ կ'արժեն առաւելութիւնները, երբ անոնցմէ օգտուողը անկարող մարդն է, մնայուն վատակը չէ: Մնայուն բաժինը աւելցնելու համար պայքար մը կը մղուի ու այդ պայքարին սրբազան շարժառիթը պէտք է նկատի առնուի այլեւս:

digitised by A.R.A.R.@

«ՄՈՍԿՈՒԱՅԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏԱՆ ՀԱՐՑԸ»

Սեւակի եւ Էմինի ճառերէն դուրս ձգուած հատուածներուն ամբողջ դումարը չէ նախորդ էջին վրայ արտագրուածը։ Կարելի չէ ամբողջը տալ ու անդրադառնալ ամբողջին, բայց կայ հոս չյիշատակուած խնդիր մը, Էմինի յարուցած «Մոսկուայի հայ մշակոյթի տան» խնդիրը, որուն առանձին մատնանշումը շահեկանութենէ զուրկ պիտի չըլլար։

«Մոսկուայի հայ մշակոյթի տուն» անունով վերամկրտուած այդ հաստատութիւնը, 1815-ին հիմնուած հանրածանօթ Լազարեան ճեմարանն է։ Էմին պատմականը կ'ընէ ճեմարանին եւ կու գայ ու կը հասնի այն թըւականին՝

«Երբ չարաբաստիկ մի օր, Բերիայի կիսագրագէտ ու բիրտ մի հրամանով ոտնակոխ արուեց մեր կեանքի հոս մի յենինեան ուղեղիշ, եւ չնայած Լենինի անձամբ ստորագրած կարգադրութեանը, փակուեց եղած միակ տունն էլ։

Ցաւալի է, բայց փաստ է, որ այժմ, կոմունիզմի շէնքին, որ ենթադրւում է ժողովուրդների մշակոյթների մերձեցում ու փոխադարձ հարըստացում, խորհրդային ժողովուրդները Մոսկուայում կարող են մերձենալ ու ճանաչել իրար միայն եւ առաջին հերթին··· նպարեղէնի խանութներով եւ ճաշարաններով, որոնց նշանակութիւնը նոյնքան ծիծաղելի կը լինէր ժխտել, ինչքան նրանց մշակոյթի օջախների հետ համեմատելը···

Բերիայի մերկացումից յետոյ ես մի անգամ արդէն յարուցել եմ Մոսկուայի հայ մշակոյթի տան բացման հարցը հայ եւ այլազգի մշակոյթի գործիչների հետ մէկտեղ, սակայն այն ժամանակ երեւի պայմանները չէին հասունացել այդ հարցի լուծման համար»։

Արտասահմանի թերթերէն մեկի ծանօթ այս մանրամասնութիւնները «Գրական Թերթ»ին մէջ, «ինչ-ինչ պատճառներով», վերածուած են սա խառնեալ անորոշութեան.

«Սակայն հետագայում, ինչ-ինչ պատճառներով, դադարեց գոյութիւն ունենալուց մշակոյթի եղած միակ տունն էլ»։

Այդքան։ Բայց արդեօք կոմունիզմի շէ՞նքը փուլ կու գար, եթէ մեր չէնքին վերաբերող իրողութիւնները ինչ-ինչ պատճառներու անորոշութեան չենթարկուէին կրկին ու յատակօրէն, բանասեղծին կատարած ձեւակերպումներով հաղորդուէին ընթերցողին։ Կը թուի, թէ Բերիան մերկացողները մեծ ուժ մը չեն ներկայացներ, աւելի ազդու են Բերիայի ոչիին հաւատարիմ ուրուականները, անոնք՝ որոնց վարած «մատաղա-գաղոնային քաղաքականութեան» հետեւանքով տակնուվրայ եղաւ մեր գրական միջավայրը, ուր, ինչպէս պիտի բէր Սեւակ՝ «իշխում է հաշիւն ունելի, քան անկեղծութիւնը, որտեղ աներեսներից ու լաչառներից վախենում են, քան յարգում ու գնահատում են տաղանդաւորներին»։

Ու մտածել, որ միայն հոս չէ, ու միայն տունի առիթով չէ, որ ի զօրու կը մնան նախկին բիրտերուն հրամանագրերը···

Որքան ատեն որ կան այդ արարածները, որքան ատեն որ վատառերածներու ծնունդ տուող ու սնո՛ւնդ տուող մթնոլորտը կայ մեր երկրին մէջ, կարելի չէ սպասել, որ վերնան պալոնային բարքերը, լսելի դառնայ տաղանդաւորներուն խօսքը եւ միամիտներու անմիտ երեւակայութեան մէջ լուծման մօտեցած հարցերը լուծուին դիւրութեամբ···

digitised by A.R.A.R.@

«ՈՉ ՄԻ ԽՄԲԱԳԻՐ»

Գիշ առաջ կարդացիք մկրտու�-ներով առաջացած «զարդնայի հաստատութեան» դէմ բարձրացուցած Գ. Սեւակի բողոքը։ Համագումարին մէջ, նոյն ձեւի դժգոհութիւն մը բարձրացուցած էր նաեւ Գ. Էմին։ Ակնարկելով իր գրութիւններին մէկուն՝ այս վերջինը կ'ընդգծէր.

«Բայց ի՞նչ պատահեց. պատահեց այն, որ իմ գրած առաջաբանից, որպէս «Հակաթուրքական տրամադրութիւն» հանուեց 1915 թուականի դէպքերին վերաբերող այդ մէկ հատիկ նախադասութիւնը։

Ինչ խօսք, որ «այդ մէկ հատիկ նախադասութիւնը» բախտաւոր չեղաւ նաեւ այս անգամ։ Իր տրտատանած ճառէն դուրս հանուեցաւ էրէքին, մէջբառուեցաւ ուրիշ մէկ հատիկներու հետ, ուրիշ տասնեակ հատիկներու հետ։

Առաջին անգամ չէ, որ այս խնդիրին կ'անդրադառնանք մենք, առաջին անգամ չէ, որ Հայաստանի գրողները ձայն կը բարձրացնեն ընդհանուր հաւատաքննման դէմ, պարզապէսակի խնդիր մը չէ տարկա, Սեւակին ու Էմինին յատուկ խնդիր մը չէ, հասարակաց է։ Ընթերցողը չէ մոռցած հարկաւ Խաչիկ Դաշտենցի տասնաւոր վէրքը։

Երեւոյթը աւելի չեշտելու եւ անոր դէմ խմբագրուած գանգատները տասնել եւս լօշափելի դարձնելու համար՝ Խաչիկ Դաշտենցի ծանօթ քերթուածին առաջին տուներուն հետ, կու տանք նաեւ «Խմբագիրներուն» դէմ բարձրացուցած Գուրգէն Մահարիի թախծոտ տրտունջը։

Բայց Ե՞րբ վերջ պիտի գտնէ հայրենիքի մեր գրողներուն վիճակուած այս ողբերգութիւնը։

Վերջ պիտի գտնէ՞ արդեօք։

ԻՄ ՈՒՂԻՆ

Հպարտ անցայ իմ ուղին,
Ձեր շարքերում խորթացած,
Պաշտամունքի խորանում
Ոչ մի պատրոյգ չվառած։

Եթէ որոշ տեղերում
Մի քիչ տաք ճարպ է ծորել,
Այդ էլ ես չեմ մեղաւոր,
Խմբագիրներս են արել։

ԽԱՉԻԿ ԴԱՇՏԵՆՑ

ՁՄՐԱՆ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԵՐԱԶ

Երեւանեան ձմրան գիշեր,
Հարազատ, անգին,
Ախ, այս գիշերը ուրիշ է,
Այն հեռու վանքից՝

Մայրս բռնած ձիւնոտ ճամբան,
Գալիս է, գալիս,
Դեռում է դուռ ու պատուհան, –
– Եկ, գնանք, Գուրիս...

Ի՞նչ ես անում այս աշխարհում
Ցուրտ ու անարեգ·
Մեզ մօտ արեւ, մեզ մօտ գարուն,
Եկ, գնանք ինձ հետ...

Այնտեղ Զարեենցն է սպասում,
Բակունցն է այնտեղ,
Մենք երկնային տպարանում
Գիրքդ կը տպենք։

Ամէն մի աստղ գիր կը լինի
Քո գրքի համար,
Կը ճարեմ քեզ համար գինի,
Մի լինի յամառ։

Դարեր կ'անցնեն, կ'ապրի ոգիդ
Կեանքով խնդագին,
Ու չի դիպչի մէկ իսկ տողիդ
Ոչ մի խմբագիր։

Գնանք, Գուրիս... Ու քաշում է
Ու ժպտում է ինձ,
Երեւանեան ձմրան գիշեր...
Ու զարթնում եմ ես։

— ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԱՐԻ

digitised by A.R.A.R.@

«ԱՍԵՆՔ ԵՒ ԱՅՆ...»

Հայաստանի գրողներու հինգերորդ համագումարի նախօրեակին, աչքի ինկող բոլոր գրողները իրենց խօսքը ըսին, բաժանքները բանաձեւեցին։ Ոմանք իրենց ակնարկը այս կողմ դարձնելով՝ նիւթ ըրին նաեւ «մեր գրականութեան անբաժան մասը»։ Այդ մէկուն կը վերաբերէր նաեւ Մահարիին խօսքը, որ լոյս տեսաւ «Հայրենիքի ձայնի» 23 Հոկտեմբերի թիւին մէջ։ Մահարին կը խօսէր «աչխարհագրականօրէն մեզնէց բաժանուած, բայց ըստ էութեան մեր մեծ ընտանիքի հարազատ անդամներուն, սփիւռքահայ գրողներուն մասին եւ դրական երեւոյթներու թուումը կ'ընէր։—

«Վերջին տարիներին շատ բան է արուած Հայաստանի եւ սփիւռքահայ գրողների կապերն ամրապնդելու համար։ Փոխադարձ այցելութիւններն աւելի յաճախակի են դարձել, «Հայաստան» հրատարակչութեան կողմից Սփիւռքահայ գրողների հրատարակութեան քնագծերն աւելի լայնացել եւ դարձել են աւելի ընդգրկուն, գնալով աւելի եւ աւելի ջերմացել են անհատական կապերը...»։

Ի հարկէ, լաւ բաներ են ասուած։ Առնուազն լաւ բաներու սկիզբ են։ Գացող եկողները նախկին կամակատարներն ու նախկին ոչնչութիւնները չեն բոլորովին, սկսած են արժէքաւորներ հրաւիրել նաեւ ու արժէքաւոր դէմքեր ճամբայ հանել։ Իր հրատարակութեան քնագծերն բարեփոխած է նաեւ «Հայաստան» հրատարակչութիւնը։ Բայց գրողներ կան, ու այդ գրողներէն վերջինը չէ Մահարին, որոնք, արտասահմանեան հարցերէն որեւէ մէկուն մօտեցած ատեն, չեն կրնար առողջ մնալ ու անպայման կը պզտորեն սկսած խանդավառութիւնը։ Ահաւասիկ իր խօսքին շարունակութենէն հատուած մը.

«Ասենք եւ այն, որ մայր հայրենիքը չի կարող նայել բարի աչքով նրանց վրայ, որոնք նայում են իրեն խորթի աչքով եւ չեն բաժանում իր ուրախութիւններն ու տխրութիւնները։ Այդպիսիներին մասին չէ այսօր մեր խօսքը»։

Եթէ «այդպիսիներին» մասին չէ խօսքը, ապա ուրեմն զարմանալի է, որ Մահարին տակաւին պէտք կը զգայ խօսելու «այնպիսիների» մասին, որոնք վաղուց որդեգրուած ու վկայուած են... հայրենիքին կողմէ։ Իսկ առաւել զարմանալին այն է, որ Մահարին տակաւին այսօ՛ր ու ա՛յս տարիքին, այնքան փորձութիւններէ ու փորձառութիւններէ ետք՝ կը մտածէ, որ հայեր կան աշխարհի վրայ, որոնք խորթ աչքով կը նային հայրենիքին։

Խորթ աչքերուն խորթութիւնը, ի հարկէ, անհերքելի է։ Խորթ աչքեր կան, խորթ աչքեր գոյութիւն պիտի ունենան, խորթ աչքերը պիտի խժռին այնքա՛ն ատեն, որ խորթ բարքեր կան հայրենիքի մէջ՝ բանաստեղծին տողերը խաթարող խմբագիրներ կան, խորթ հրամանագիրներ կան, օտարի շուք կայ, մարդը շուքի վերածող կաղրե՛ր կան։ Ասենք եւ այն, որ հայրենիքին ուրախութիւնները կրնաք դուք առանձին վայելել, կանչել ձեզի «հարազատ» եղողները, ուրախութեան ատեն «այդպիսիները» կրնաք դուրս ձգել, կրնան դուրս մնալ. «այդպիսիները» ներկայ են միայն տրխրութեան պահերուն, տխրութիւնները բաժնողի դերով, հայրենիքի իրական տխրութիւնները թուեցինք արդէն, անոնց դէմ կռուելո՛ւ դերով, մինչեւ որ տխրութիւն չմնայ, ուրախութիւնը ամբողջական ըլլայ, ամէ՛ն տեղ ըլլայ, ամէն բանի մէ՛ջ ըլլայ։

digitised by A.R.A.R.@

«ԶՐԿԱՆՔԸ ԻՄՍ Է...»

Հայրենիքին նայող աչքերուն բարին ու չարը ատուգող այս բծախնդիր աչխատանքին մէջ՝ Մահարին առանձին չէ։ Իրեն պէս բծախնդիրներ շատ կան եւ իր տարիքն ու փորձառութիւնը ունեցողները դժբախտաբար զերծ չեն այդ խոցելի կեցուածքէն։ Մէկուն հետ, օրինակ, հանդիպում մը ունեցանք։ Համաստեղը նոր մեռած էր ու նիւթը Համաստեղն էր։ Անդրադարձանք հայրենիքին կողմէ Համաստեղին ուղղուած հրաւէրներուն։

Ընթերցողը գիտէ, թէ այդ հրաւէրները քանի մը անգամ կրկնուեցան, բայց Համաստեղ Հայաստան չդնաց։ Մեր զրուցակիցը մասնաւոր դիտում մը կը տեսնէր Համաստեղի ձգձգումներուն մէջ։ Հակառակ արամադրութիւն մը լաղխած էր արդէն «Հայաստանի լեռներուն արնգահարդին դէմ»։

– Ի վերջոյ, – կը պնդէր ան, – ոեւէ գրող իր հայրենիքէն մեծ չէ ու երբ մերժէ ընդառաջել հայրենիքի հրաւէրին, թոյլ տուէք որ հայրենիքն ալ ունենայ իր վերապահութիւնները։

Բացատրեցինք իրեն, որ թիւրիմացութեան մէջ է։ Համաստեղ չէր կրցած ընդառաջել նաեւ ուրիշ հրաւէրներու։ Հրաւէր ստացած էր Պէյրութէն, Պարսկաստանէն, ուրիշ գաղութներէ։ Չկրցաւ ոչ մէկուն եւ ոչ մէնսին գոհացում տալ։ Պարտականները թոյլատու չէին ճամբորդութեան։ Հիւանդ կար շուրջը։ Հիւանդ էր ինքը։

Չհամոզուեցաւ մեր զրուցակիցը։ Թերեւս չուզեց համոզուիլ։ Կ'ենթադրենք, թէ Գուրգէն Մահարիի գրած Համաստեղի նամակը, որ լոյս տեսաւ Երեւանի «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթին մէջ, կը համոզէ մեզի զրուցակից եղած թերահաւատը եւ ուրիշ թերահաւատներ։

«... Ես ճիգ ըրած եմ տալու մեր հայրենի հողի բուրմունքը եւ ժողովուրդին շունչը։ Այնտեղ նեմ ես ու դուն, եւ մեր հայ գրականութեան մշակները։ Չէ, ուրիշ երկիմ չունիմ։ Հայաստանի մասին մեր մարմնով ու դնդերներով կը մտածենք ու կ'ապրինք։

«... Արդեօք մեղաւո՞ր եմ անոր համար, որ հակառակ իմ եւ քո ջերմ փափաքին չկրցի Հայաստան գալ։ Հայաստան գալը առաւելապէս իմ ՀՈԳԵԿԱՆ ՊԱՀԱՆՋՆ է եւ ես իմ ՀՈԳԻԻՆ հետ հաշիւներ չեմ կրնար ունենալ։ Զրկանքը իմս է, սկսելի Գուրգէն, որ միենչու հիմա կրցած չեմ Հայաստանի հողին վրայ քալելու զգլխանքն ունենալ եւ քեզի հետ՝ Արովեանէն...»։

Համաստեղը առանձին չէ այս կեցուածքին, այս հայեացքին, այս պապակին մէջ։ Գրողի յատուկ պարագայ չէ ասիկա։ «Հայաստանի մասին մեր մարմնով ու դնդերներով կը մտածենք ու կ'ապրինք» բոլորս։ Մեր գրագէտներէն իւրաքանչիւրը այս ապրումը փոխանցելու աչխատանքին նուիրեց ինքզինք, հիներէն փոխանցուածը նորին մէջ վառ պահելու ճիգին լծուած է իւրաքանչիւր երիտասարդ։ «Ներանք» այսպէս կ'ապրին հոս։ Հայրենիքով չահագրգիռ ու անոր վերիվայրումներուն օրը օրին հետեւելով մարդերը տարբեր ձեւով չեն կրնար տպրիլ։ Ան կրնար տանիլ մանաւանդ հայրենիքին իրաւունքները բռնաբարող «բարեկամներուն» չարակամութիւնները։ Եթէ «խորթ աչքեր» կան, ուղղուած են այս վերջիններուն։ Հայրենիքը այդ մարդոց հետ մի չփոթէք եւ ձեզի պարտադրուած չփոթը մեզի փոխանցելու յանձնառութիւններէն հեռու կեցէք այլեւս։ Կը բաւէ։

digitised by A.R.A.R.@

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԲԵՄԱԿԱՆ ՊՐՈՒԵՍՍ

ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆ ԹԱՏԵՐԱԼՈՒՄԲԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

1966 Նոյեմբեր 30–էն Դեկտեմբեր 18–ը, մօտ երեք շաբաթ, Լիբանան այցելեց Երեւանի Սունդուկեանի անուան պետական թատրոնը, տուաւ ներկայացումներու շարք մը, արտասանական երեկոներ, ունեցաւ հանդիպումներ գրական միութեանց հետ ու վերադարձաւ տուն։

Օրաթերթերու եւ շաբաթաթերթերու մէջ լիբանանահայ մամուլը մանրամասնօրէն անդրադարձաւ խումբի կատարումներուն, եւ թղթակցութեանց, երբեմն զուտ արուեստի տեսանկիւնէն մօտենալով հարցին, երբեմն ազգային հզօրութեան ապրումներու մեկնակէտով, երբեմն ալ բարեկամական գովաբանութեան անընդունելի չափանիշներով։

Գեղական թատրոն մը, որ իր եռին ունի արդէն իսկ քառասուն տարուան կազմակերպուած կեանք, փորձառութիւն, եւ իրեն հետ ունի պետական նիւթական յատկացումները, դիւրութիւնները, բնական է որ ունենայ թեքնիք ամենայն կարելիութիւններ (տեքստերու, դիմայարդարումի, հագուստներու, դերասաններու եւ դերասանուհիներու, բեմադրիչներու, բեմական այլ թեքնիքիներու մեծ թիւ) որ սիրողներու խումբի մը տուած թատերական ներկայացումներուն հետ համեմատելու կարելիութիւնը կը վերնայ։ Գնահատումի ստանձնաւորը պէտք է այդ պարագային ըլլայ փրոֆէսիոնալ խումբերու եւրոպական ստանձներու մէջ տուած ներկայացումներուն համար գործածուած չափանիշները, եւ մանաւանդ արուեստի չափանիշը ամէն բանէ առաջ։

Սունդուկեանի անուան պետական թատրոնը այդ չափանիշներով ալ յաջողութիւններ արձանագրեց Գէյրութի մէջ։ Իր «Ժայռը» թատերական ներկայացումը ըմբռնումի մը էր, Սիսնելուսքիի մեթոտով մանրակրկիտ կերպով ուսումնասիրուած ու դրծադրուած հարազատ խաղարկութեան մը, ուր ամէն մէկ շարժում, ամէն մէկ կեցուածք, մարմնական նուազագոյն մանրամասնութիւն նկատի առնուած էր, ուսումնասիրուած էր, եւ ամբողջութեան կառուցումին նպաստ մը էր, ամէն մէկ տեսարան կը դնէր կատարելագործ բնական, վարակող, անմեղութիւններն ու հեզիկակը հանդիսատեսներուն հարազատօրէն փոխանցող կենդանի վիճակի մը մէջ։ Բեմադրիչ Վարդան Աճէմեանն ու դերասանները (այս պարագային, անկասկած, բեմադրիչի դեկավարութեան տակ), համադրուած, իրար լրացնող աշխատանքով մը արուեստի տպաւորիչ գործ մը հրամցուցին Վրթանէս Փափազեանի «Ժայռը»ով, Գէյրութի հայութեան։

ՄՀԵՐ ՄԿՐՏԻՉԵԱՆ

«Ոսկեղջիւրեան Ազգարարը» կը յայտնաբերէր տա-

digitised by A.R.A.R.@

ՎԱՐԴԱՆ ԱՃԵՄԵԱՆ

զանդաւոր դերասան Մհեր Մկրտիչեանը, որուն խաղարկութիւնը առիթը կ'ընծայէր թատերասէր հասարակութեան տեսնելու, թէ ի՞նչ կրնայ ընել դերասան մը իրեն տրամադրուած դերով, երբ յանձն կ'առնէ դերն ու հեղինակը մանրազննին ուսումնասիրել, փնտռելու համար ճշդիւրեալ արտայայտութեան միջոցը, ճշմարիտ ապրումին: Կատարելութիւն մը եղաւ այդ ուղղութեամբ Մհեր Մկրտիչեանի խաղարկութիւնը: Խումբի մնացեալ մասը, սակայն, երբեք չմօտեցաւ Մհեր Մկրտիչեանի բարձրութեան, ինչ որ առաջացուց անախորժ պարապութիւն մը երկուքին միջեւ, ու թատերակը որպէս ամբողջութիւն կորսուց, իջաւ բեմական տրուեստի աստիճանաչափին մէջ: Գակաւոնին տեղը տեւաբար լեցուց Մհեր Մկրտիչեան իր անմոռանալի խաղարկութեամբ:

Ուիլիամ Սարոյեանի «Իմ սիրտը լեռներաւոր է» արդիական թատերակը կարելիութիւնը տուաւ բեմադրիչին արդիական մօտեցումով բեմադրութիւն մը յայտնաբերելու: Ցաշղեցաւ իր բեմայարդարութեամբ, խմբական խաղարկութեան կշռոյթով, լոյսերու խաղով, եւ մասնաւորապէս երաժշտական ընկերակցութեամբ, ձայնական լրացումներով: Ցաշղեցաւ նաեւ դերասաններէն պատանի Ճոնիի դերը կատարող Տիկ. Վ. Վարդերեսեան: Սարոյեանական մթնոլորտը բեմադրութեամբ եւ Վ. Վարդերեսեանի խաղարկութեամբ միայն լրիւ ներկայ էր բեմին վրայ: Ինչ որ բաւական էր ինքնին յաջողած թատերախներուն մէջ անցնելու համար այդ ներկայացումը:

Նոյնը կարելի չէ ըսել Ն. Զարեանի «Վարա Գեղեցիկ» դասական, չափածոյ թատերակի բեմադրութեան ու խաղարկութեան մասին: Ճիշդ է, տկար է թատերակը, բայց եւ այնպէս, դերասանի եւ բեմադրիչի վարպետութիւնը պէտք է կարենար զայն աւելի տանելի դարձնել, աւելի բնական սահմաններու մէջ բերել: Մեսրոպ Սիմոնեանի բաւական բնական խաղարկութիւնը, կամ Գ. Զանիրէկեանի Նինոսի դերով կուռ խաղարկութիւնը բաւական չեղան թատերակը փրկելու համար:

Խումբը ներկայացուց նաեւ «Նամուշը», որուն մասին չենք խօսիր, որովհետեւ ներկայ չկրցանք ըլլալ բեմադրութեան: Բացի այդ, Սունդուկեանի անուան թատրոնի դերասանները ունեցան տրատասանական երեկոյ մը, ուր հայ բանաստեղծներու քնարական եւ ազգային ապրումներով հարուստ կտորներ արտասանուեցան:

Երբ հաշուեկշիռը կազմենք խումբի երեք չաբաթներու ընթացքին տուած թատերական ներկայացումներուն, եւ մօտենանք բեմական

ՎԱՐՈՒՀԻ ՎԱՐԴԵՐԵՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՄԵՏԱՔՍԻԱ ՍԻՄՈՆՅԱՆ

արուեստի զանազան անկիւններէն, առաջին հերթին, անկասկած, պիտի արտայայտուինք դերասանական շնորհքով օժտուածներու գոյութեան մասին, ոմանց ազատօրէն դերասաններ ըլլալու, ոմանց թատերական արուեստի ուսումնասիրուած գիտական պաշարի տէր ըլլալուն մասին։ Ինչ որ հարստութիւն մըն է հայ բեմին համար։

Վ. Փափազեան, Շէյքսփիրեան դերասանը, վարպետ մը այդ բաժնին մէջ, կը պատկանի բեմի հարստութեան, որ ուշադրութեամբ անցեալին կ'երթայ այլեւս։

Բեմական արուեստի ուսումնասիրուած գիտութեամբ եւ ներքին խոր հարստութեամբ մեծ դերասան մըն է Մհեր Մկրտիչեան, որուն փայլուն ապագայ մը կը սպասէ, եթէ առիթը տրուի իրեն նաեւ աւելի նոր, աւելի պատասխանատու դերերու մէջ երեւան գալու։

Գ. Ջանիբէկեան արժէքաւոր դերասան մըն է, անդիրպանցելի էր ժամանակին մէջ, իր խաղարկութեան ամենայարմար նրբութիւնները է մատուցանէին, եւ թատերակի անձնաւորութիւնը կը հարստացնէին։

Արժէքաւոր դերասաններ էին, երբ մանաւանդ իրենց յարմար դերերով բեմ կը բարձրանային՝ Մեսրոպ Սիմոնեան, Վ. Վարդերեսեան, Ա. Արազեան (եւմ սիրտը լոռնիրումն էր մէջ), Տիկ. Վ. Մխիթարեան (ժամանակին մէջ)։

Կարող դերասաններ էին Ալեա Ալեխանեան, Ժ. Էլոյեան, որոնք, սակայն, շատ առիթ չունեցան իրենց դերասանական արուեստը մատուցելու պէյրութահայ հասարակութեան, Ալեա Ալեխանեան դէր ունեցաւ իր տրամադրութեան տակ բաւականի չոչափելի դեր մը ժամանակին մէջ, Ժ. Էլոյեան հազիւ ժամը երեւումներ ունեցաւ, բայց եւ այնպէս յայտնի դարձաւ իր կարողութիւնները, մանաւանդ երբ արտասանական երեկոյին առիթը ունեցաւ Սասունցի Դաւիթը արտասանելու, կամ Գ. Էմինի «Սասունցիներու պարը»։

Դերասանական խումբի իր ընկերները կը վկայէին, թէ մեծ անարդարութիւնը թատերական գինագործութեան կողմէ, կատարուեցաւ Բարդէն Ներսէսեանի վերաբերմամբ, որ բեմ բարձրացաւ «Վարա Գեղեցիկի» դերով, եւ Սարոյեանի թատերակի մէջ բանաստեղծ հոր դերով։ Կ'ըսէին՝ թէ Երեւանի մէջ չատ սիրուած, չատ յարգուած դերասան մըն էր Բ. Ներսէսեան, կարող դերասան մը։ Հաւանական է, սակայն պէյրութահայ հասարակութիւնը առիթը չունեցաւ գինք տեսնելու այնպիսի դերերու մէջ, ուր իր կարողութիւնները կարենային երեւան գալ։ Արա-

Գ. ՋԱՆԻԲԷԿԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Դեղեցիկի դերով, ու Ժանիի հօր դերով, Բ. Ներսէսեան այդ խղուած տպաւորութիւնը չկըրցու առաջացնել։ Տարբեր է պարագան իր արտասանութեանց համար, երբ նիւթը Սայաթ-Նովան էր։ Հարազատ, բնական, խորապէս ըմբռնուած արտասանութիւն մը երեւան բերաւ Հանդիպումի մը ընթացքին, այնքան յաջող, առանց մէկ չէյրը տեղին եւ ըմբռնուած արտասանեց Գ. Սեւակի «Անոթի Զանգակատուն»ը կըտորին հատուած մը։

Երկար է խաղացողներու ցանկը, եւ կարելի չէ մէկ առ մէկ յիշատակել բոլորը։ Վ. Ապահեան, մինչ ապերախտ դերերով, Թաթուլ Տիլաքեան, Օգսէն փառաւարանի դերով, Վ. Մարգունի, Ց. Ուսպեան, Վ. Բագրատունի «Փայռոյի գիւղացիներու դերերով եւ միւսները, որոնք իրենց բաժինը բերին ամբողջութիւնը պահելու համար բաւական բարձր, կը լրացնեն պատկերը եւ կարելի կը դարձնեն արժանագրումը, թէ երեւանի Գեղական Թատրոնը դերասաններով հարուստ է, ապագայ մեծ դերասաններ ալ ունի իր մէջ։ Եր պակին թերեւս Վ. Փափազեանի նման չեչքոփիրեան դերասաններ։

Բեմադրիչներէն միայն Վ. Ազէմեանի բեմադրութիւններն էին, որ հրամցուեցան հասարակութեան։ Կարելի չէ չարժանագրել, թէ «Փայռոյով եւ Մարոյեանով Ազէմեան յաջթանակներ արժանագրեց, սակայն Գաղտասար Աղբարի ընդհանուր խաղարկութեամբ եւ բեմական դասաւորումներով չկրցաւ առաջացնել անհրաժեշտ պարզ ու բնական մթնոլորտը, ու «Գաղտասար Աղբարի տիպարէն դուրս, (քիչ մըն ալ Օգսէնի տիպարը՝ Թ. Տիլաքեան) մնացեալները մնացին խաւարտայրն անձեւորութիւններ, կամ չափազանցութեանց գերեզը գացող, գերը խեղճասակութեան տանող դերասաններ։ Եմբալարի զոպոզ ճիգուսը բացակայ էր։

«Արա Գեղեցիկի մասին եւս ըսելիքներ կան անչուշտ, սակայն թատերգի տկարութիւնը ծանկող ճիգերը, եւ տեղ-տեղ յաջողութիւնը անոնց պատճառ են, որ զանց ընենք այդ ուղղութեամբ մեր խօսքը։

ԱՆԴՐԱՆԻԿ ԱԲԵՏԻՍԵԱՆ

Հիմնական տկարութիւնը թատերախումբի խաղացանկն էր, ուրիշ բացակայ էին բեմական արուեստի հսկաները, հիմնական արժէքները՝ Շէքսպիր, Իբսէն, Գերնար Շօ, Զեխով, Փիրանդէլլօ, Լ. Շանթ, ու նորերէն՝ Գէքէր, Գրէխթ, Իոնէսքո, Ադամով եւ ուրիշներ։ Թէ ինչու այդ անուններէն ոմանք ի սպառ չեն խաղցուիր Հայաստանի մէջ, ուրիշ հարց է։ կախում ունի հաւանաբար թատրոնի վարիչի եւ բեմադրիչի ճաշակին եւ ըմբռնողութեան հետ կապ չունեցող, ա՛յլ պարտադրանքներէ։ Անիկա արդիւլը մը չէ, որ մենք չափազանց եւ չարժանագրենք, թէ թատերախումբ մը, բեմադրիչ մը, դերասան մը, իր իրական չափերը երբայ տալ, երբեմն թռիչքը կրնայ արժանագրել միայն ա՛յն ատեն, երբ ազատ է ձեռք զարնելու իր նախընտրած թատերգին, իր նախասիրած դերին։ Որքան չուտ տրուին զրական եւ արուեստի ամբողջական ապատութիւնները, այնքան լաւ հայ բեմին ու գրականութեան համար։

Բ. Փ.

digitised by A.R.A.R.@



ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐՈՒՄԱ ՀԱՏՈՐ ՄԸ

Վենետիկի Մխիթարեան Միաբանութիւնը յոյս ընծայած է լայնածաւալ հատոր մը, նը-ւիրուած հայկական մանրանկարչութեան։

Հատորը՝ առաջին է ծրագրուած շարքի մը, որ ծնուած է «Նախատակ Հայ ժողովուրդին, որ բոցերու եւ արիւնի ծովերէն փրկեց դիւցազնօրէն՝ իմացական ժառանգութիւնն անկապտելի իր փառապսած նախորդներուն»։

Աշխատակիցներն են՝ Սիրարփի Տէր Ներսէսեան, Գրիգորիսն Տէտէեան, Շարլ Տերլին, Ցրեսերիք Ծէյտի, Գեր. Կրէպանիէ, Հ. Մ. Տը Տիւրան, Ց. Քիւրտեան, Հ. Կ. Քիպարեան, Հ. Մ. Ճանաչեան եւ Գ. Ալտոնեան։

Ձեռնարկին նպատակն է, «ժամանակագրական կարգով տալ մանրանկարչական գործեր՝ սկսելով մեծ Հայաստանի մանրանկարչութեան հնագոյն շրջանէն՝ Թ.-ԷԸ ԺԳ. դար»։

Հատորին սկիզբը գեղեցուած է Սիրարփի Տէր Ներսէսեանի ներածականը, որուն կը յաջորդէ նախաբանը։

Յետոյ, ժամանակագրական կարգով կու գան գունաւոր նկարները՝ իրենց բնական ծաւալներով, – 84 նկարներ, սկսելով Մլէք Թագուհիի Աւետարանէն։

Ամէն մէկ ձեռնարկի մասին տրուած են մանրամասն ծանօթութիւններ։

Հատորը ունի ընտիր թուղթ ու մաքուր տպագրութիւն։ Նկարներուն գոյները լաւ հարմարած են։

Ծրագրուած շարքը՝ պիտի ունենայ իր անգլերէն, իտալերէն ու ֆրանսերէն թարգմանութիւնները։

ՕՐ. ՊԷԱԹՐԻՍ ԹԻՒԹԻՒՆՃԵԱՆ ՍՊԱՆԱԳԻՐ ՆՈՐՄԱՆԻՊԱԳՐՈՒՀԻ

Պուէնոս-Այրէսի մէջ, երիտասարդ հայուհի մը, 21 տարու Օր. Պէաթրիս Թիւթիւնճեան, վերջերս, ապաներէն լեզուով եւ «Մեռնելու Ձեւերէն» խորագրով հրատարակած է պատմուածքներու հաւաքածոյ մը։

Նեմսօ Մշակութային եւ Գեղարուեստական Տունը, Արժանթինահայ Ուսանողական Միութեան նախաձեռնութեամբ ներկայացուցած է այս գործը։

Օր. Պէաթրիս Թիւթիւնճեան 1962-ին գրած է «Էլիսա Լին Հովիւը» պատմուածքը, որ արժանացած է «Ամերիկացի Վիպագիրներ»ու երկրորդ մրցանակին։ Մրցումը կազմակերպած է «Էլ Էսքարապաթա Տէ Օրո» ծանօթ գրական հանդէսը։

1964-ին, Օր. Թիւթիւնճեան ներկայացուցած է իր առաջին գործը, «Լա Գամփանա Տէլ Բոէթա»ն, «Մինկլոր» գրական խմբակի բացօթեայ ցուցահանդէսին, որուն վարիչը եղած է այդ օրը, իսկ 1966 Յուլիս 1-ին, ներկայացուցած է իր երկրորդ գործը։

Զինք հետաքրքրող ճիւղերն են, ժամանակակից մտաւորական աշխարհը յուզող հարցեր, որոնց շուրջ կը յաճի ճառ իր միտքը։

Իր պատմուածքներուն մէջ կան Մահուան, Ազատութեան, Ատառուածաշունչի եւ այլ հարցերու մասին իմաստուոյն կարծիքներ։

«Մենք ու Մեր Զաւակները» ամառաթերթը, վերջերս տուած է հայազգի սպանագիր այս ձեռագիպագրուհիին հետ ունեցած մէկ տեսակցութիւնը։

Օր. Թիւթիւնճեան փիլիսոփայութեան աստանդաւոր է ներկայիս։ կը հետեւի նաեւ լրագրութեան դասընթացքի։ Միեւնոյն ատեն, օրիորդը նշանակուած է Արժանթինահայ Համալսարանականներու «Կամաւոր» ամսօրեայ տեղեկատուի մնայուն թարգմանուհի։

ԴԱՇՆԱԿՑԱՀԱՐՈՒՀԻ ԷԼԷՆԱ ԳԻՒՏԵԱՆ

Լոնտոնահայ դաշնակցահարուհի Էլէնա Գիւտեան, վերջերս, նուագահանդէս մը տուած է

digitised by A.R.A.R.@

Միլանոյի մէջ։ Այս առթիւ, իտալական թերթերէն «Լա Նաբքէ» կը գրէ.—

«Դաշնակահարուհի Էլէնա Գիւտեան Միլանոյի երաժշտասէր հասարակութեան ներկայացուցաւ «Շամիլիա Աբքիսքիկա Միլանէզէ»ի հովանաւորութեամբ, պահանջկոտ յայտագրով մը, որ երկրորդ մասին մէջ կը պարունակէր Մուսորկսկիի «Ցուցահանդէսի մը ցկարներէն» ամբողջ մանեակը, ինքնագիր տարբերակով։ Քրտապահանջ արուեստագիտուհին՝ ի մէջի այլոց իր խայտաբղէտ մեկնութեան շարքին նոյնը տուաւ, սկսելով Շուպէրթի «Սոնատ–երգ 42»էն մինչեւ Շոպէնի «Ցանգազի–երգ 49»ը։ Փայլուն թեքնիկով ու զգայուն մեկնութեամբ օժտուած՝ Գիւտեան ինքզինքը շատ գնահատել տուաւ հասարակութեան, որ ջերմագին ծափահարեց զայն։ Ցայտագրէն դուրս նուագեց երկու երգ եւս»։

Նոյն առթիւ, «Ռոբբիէրէ Ցիլա Սերա» օրաթերթը գրած է.— «Միլանոյի երաժշտանոցի «Փուչչինի» սրահին մէջ, «Շամիլիա Աբքիսքիկա»ն երէկ գիշեր (Նոյեմբեր 19) ներկայացուց հայ դաշնակահարուհի Էլէնա Գիւտեանը, որ կը բնակի Լոնտոն ու կը նուագէ աշխարհի բազմաթիւ երկիրներուն մէջ։

Գիւտեան ցոյց տուաւ իր անառարկելի ըմբռնածը, իր անխախտ թեքնիկը եւ իր զգեցիկ ու բնականօրէն արտայայտիչ ինքնեկութիւնը։ Համերգը՝ որ կը բաղկանար Շուպէրթի «Սոնատ»է մը, Շոպէնի «Ցանգազի»է մը եւ Մուսորկսկիի «Ցուցահանդէսի մը ցկարներ»էն, չափազանց փայլուն յաջողութիւն մը ունեցաւ։

ԼԻՆ ՏՈՒՐՆԱՆԻ ՑԱՌՈՂԱՀԱՐԻՆԸ ՓԱՐԻԶԻ ՕՓԵՐԱՅԻ ՄԷՋ

Լին Տուրնան, որ ծանօթ է ժողովրդական Ցիրտուրեան անունով, վերջերս, առաջին անգամ բլայով մեծ դեր մը խաղացած է Փարիզի օփերայի մէջ։ Ցարդ միայն երգչախումբին մաս կը կազմէր, բայց վերջերս օփերայի հանդիսատեսներուն ներկայացած է Տան Գարլոսի իշխանուհի էպոլիի դերին մէջ։ «Օտօր», որ ներկայացումէն առաջ խօսած էր Լինն ծնած հայ երգչուհիին մասին, այս անգամ գովէր հիւսած է անոր, յիշելով, թէ ունի ծանրահարութեան եւ գնահատանքի արժանացած է Ֆան Ֆան Թամ Թամ ռոլ, որուն յաջորդած էր նոյն դերին մէջ։

Նոյն թերթին համաձայն, օպերայի տնօրէնը չէ ծածկած իր ուրախութիւնը եւ վարչական տնօրէնն ալ յայտարարած է. «Վերջապէս գտանք այն մեծ մեցոն, որ կը պակսէր մեզի։ Գիտէ կաքենայ ամբողջ խաղացանկը երգել.— «Այտա», «Ռուա տիսա», «Թանեոյզեր» եւ ամէնէն առաջ՝ «Գարմէն»։

ՋՈՒԹԱԿԱՀԱՐ ԺԻՐԱՅՐ ԳԱՆԹԱՐՃԵԱՆ

Եգիպտահայ ջութակահար ժիրայր Գանթարճեան, այն հազուադիւտ վիրտիւոզ եւ երաժիշտ–արուեստագէտներէն է, որուն յայտագրերին մաս կը կազմեն գլխաւոր բոլոր քոնչերթոները եւ Գերհովէնի ու Մոցարտի բոլոր սոնաթները։

Զորս տարեկանէն սկսած է ջութակի եւ վեց տարեկանէն՝ հրապարակաւ նուագած է Վիվալտիի քոնչերթօն։

17 տարեկանէն սկսեալ, Եւրոպայի մէջ տարուած իր համերգներով, արժանացած է մրցանակներու եւ կրթաթոշակներու։

1950–ին, շահած է Ժենովայի մրցանակը եւ կրթաթոշակ՝ Բրիքս Երաժշտանոցին համար, որուն շրջանը աւարտած է 1958–ին։

Օգին Օրմանտիի խմբավարութեամբ՝ նուագած է Ֆիլատելֆիոյ նուագախումբին մէջ եւ իր յաջող մենակատարութեան համար՝ արժանացած է Ֆիլատելֆիոյ Երեխաներոց Մրցանակին։

1959–ին, Գելսիքայի մէջ, Էլիզապէթ Թագուհիին երաժշտական մէկնաբանային մրցումին մասնակցելով, նոյնպէս արժանացած է մրցանակի։

Իր փայլուն մասնակցութիւնը բերած է Նիւ–Եորքի Մոցարտի եւ Թելեմանի փառատօներին։

Մասնակցած է նաեւ Բոլթօ–Ռիչարդի «Պալլօ Գազալոյ» փառատօնին։

Իբրեւ մենակատար, յաճախ նուագած է Սան Ֆրանչիսկոյի եւ Տիքրոյթի սիմֆոնիկ նուագախումբերուն հետ։

Սան Ֆրանչիսկոյի «Ինու Գրոնիքլ»ն, Նիւ–Եորքի «Թայմզ» եւ ուրիշ բազմաթիւ թերթերու արուեստի քննադատներ, մեծ գովեստով արտայայտուած են ժիրայր Գանթարճեան «հիմնական մենակատարի մասին։

digitised by A.R.A.R.@

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«ԳԷՈՐԳ ՄԵԼԻՏԻՆԵՑԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ»Ի ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

1966-ի Յունուար ամսուն, հայ մամուլին մէջ լոյս տեսած հաղորդագրութեամբ մը, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դիւանը կը յայտնէր համայն հայութեան, թէ Ամերիկաբնակ Ժանթ ազգային Տիար Գէորգ Թոփալեան, գրական անունով Գ. Մելիտինեցի, եւ իր կինը, Տիկին Նարդուհի Թոփալեան, խորապէս հաւատալով հայ մշակոյթի կենսական արժէքին եւ դերին՝ հայ ժողովուրդին կեանքին եւ առաքելութեան մէջ, իւրաքանչիւր նուիրատուութեամբ մը Գրական Մրցանակ մը կը հաստատէին, տրամադրելով Կիլիկիոյ Կաթողիկոսութեան յիսուն հազար (50,000) տոլարի հիմնադրամ մը, որուն եկամուտները պիտի յատկացուէին մրցանակի արժանացած գործին եւ անոր հրատարակութեան։

Անցեալ տարուան ընթացքին, Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակի Դատական Կազմը զբաղեցուցաւ տասնչորս գործեր, դասական երկերներէ։

Գրական Մրցանակի Դատական Կազմը վեց ժողովական նիստերու ընթացքին, ընդ նախագահութեամբ Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Խորէն Ա. Կաթողիկոսի, խորհրդակցական քննարկութեան ենթարկեց ներկայացուած բոլոր գործերը։ Առաջին ընտրութեամբ մը, Դատական Կազմը կեդրոնացաւ տասնմէկ գործերու վրայ, որոնցմէ եօթը՝ գրական, չորսը՝ պատմագիտական։ Մանրակրկիտ քննութենէն – Դատական Կազմին անդամներուն կողմէ առանձին ընթերցումներէ եւ իւրաքանչիւր գործի մասին տեղեկագիրներու ներկայացումէ – ետք, Դատական Կազմը իր սեղանին վրայ պահեց չորս գործեր միայն, երկուքը՝ գրական, երկուքը՝ ուսումնասիրական։

Զատուած այս չորս գործերու վերոյիշեալ քննութիւնը Դատական Կազմը բերաւ հետեւեալ եզրակացութիւններուն՝

ա.– Ներկայացուած գործերուն մէջ մրցանակին պայմաններն ու պահանջները ամբողջականօրէն լրացնող գործ մը կարելի չեղաւ գտնել։ Ուստի, որոշուեցաւ 1966 տարուան համար մրցանակ չտալ։

բ.– Ներկայացուած գործերէն երեքը, գրական տարբեր կալուածներու պատկանող և բանասիրական, պատմական ուսումնասիրութիւն, ժողովրդական ստեղծագործութիւն – մասնաւորապէս գնահատուեցան եւ որոշուեցաւ զանոնք հրատարակել Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակի նիւթական միջոցներով։

Այդ գործերն են.–

– Մ. Իշխանի «ՏԱՌԱԳԱՆՑ» ցերթուածներու հատորը։

– Տիկին Սոնա Զէյթլեանի «ՀԱՑ ՑԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԷՋ» ուսումնասիրական աշխատութիւնը։

– Հայկ Յովսէփեանի «ՀԱՐՍԻՆ ԿՈՆԴԸ» ժողովրդական ստեղծագործը։

Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակի Դատական Կազմը, կ'ուզէ ընել հետեւեալ ճշդումները.–

ա.– Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակը մրցում մը չէ ներկայացուած գործերուն միջեւ լաւագոյնը ընտրելու եւ պարգեւատրելու համար։

բ.– Մրցանակ կը տրուի այն գործին, որ այս կամ այն կալուածին մէջ – գրական – սեղծագործական – ուսումնասիրական, եւայլն – կը բերէ կարեւոր եւ չափելի նպաստ մը Հայ Մշակոյթին, եւ յաւելեալ բարձր արժէքով մը կը հարստացնէ զայն։

գ.– Կրնայ պատահիլ, որ տարուան մը ընթացքին մրցանակ չտրուի, երբ Դատական Կազմը ներկայացուած գործերուն մէջ չգտնէ Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակի համապատասխան հեղինակութիւն մը։

դ.– Կրնայ պատահիլ, որ մրցանակ տրուի մէկէ աւելի գործերու, երբ անոնք կը լրացնեն Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակի պայմանները։

ե.– Կրնայ պատահիլ, որ կարգ մը գործեր որոնք որոշ արժէքներ կը բերեն իրենց յատուկ կալուածներուն մէջ, գնահատուին հրատարակութեան համար։ Այդ պարագային հրատարակութեան ծախքերը կը հոգացուին Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակի նիւթական միջոցներով։

Դ Ի Ի Ա Ն

ԳԷՈՐԳ ՄԵԼԻՏԻՆԵՑԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ

Digitised by A.R.A.R.@

ԼՈՅՍ ՏԵՍՈՒԹ

ԵԴ. ՊՈՅԱՃԵԱՆԻ

ԴԷՄՔԵՐԸ

(ԱՌ. ՀԱՏՈՐ)

Մաքուր տպագրութեամբ եւ շքեղ կազմով հատոր մը:
29 դէմքեր, շուրջ 400 էջ, գին՝ 5 լ. ոսկի:
Ստանալու համար դիմել

ARAXIE BOYADJIAN
B. P. 1153
Beyrouth - Liban

Կամ՝
Քաղաքիս գրախանութներուն ու ցուցիչներուն:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՎ ԵՆՔ

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ (գրադատական յօդուածներ), Գ. Շահինեան, Պէյրութ, 1966:

ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ Ա. ՀԱՏՈՐ (կատակերգութիւններ), Յակոբ Թորոսեան, Պէյրութ, 1966:

ՀԱՅԵՐԷՆԻ ՃՈՒՄՈՒԹԻՒՆԸ, Յակոբ Թորոսեան, Պէյրութ, 1966:

POURQUOI, COMMENT ET QUE... Vassili Gontcharov

XXIIe CONGRÈS DU P. C. DE l'UNION SOVIÉTIQUE (rapport d'activité du P. C.) L. Brejnev

EAST ARMENIAN READER, Paul Essabal, Calif., 1966

ՀԱՄԱՍՏԵՂ (Առաջին Մէր), Պէյրութ, 1966:

ՍԱՅԱԹ ՆՈՎԱՅԻ ՀԵՏ, Նիկոլ Ադրալեան, Պէյրութ, 1966:

digitised by A.R.A.R.@

ՅԱՐԵՎԱՆ ԲԱԺՆԵՏԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 20 Լ. ՈՍԿԻ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 7 ՏՈԼԱՐ

ՀԱՏԱՎԱՃԱՌ 2 Լ. ՈՍԿԻ

Վարչություն հասցէ՝—

G. SASSOUNI

Rue Sélim Boustani, Beyrouth-Liban

digitised by A.R.A.R.@